

2390

9(47.925)
4 - 42

Fuqan
1919



323.1(91.542)
գ-42

ՏՈՃԻԿՆԵՐԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ
ԵՒ
ԲԱԳՈՒԻ ԱՆԿՈՒՄԸ

«Ոչ ի կարծ ընդուռուցեալ, և
ոչ ի լուր զարթուցեալ, այլ ես ան-
ձամբ անձին պատահեցի ի տեղ-
ութիւն ի տեսի»:

Ե Ա Ւ Ե Լ.

Գ Ր Ե Յ
ԵՂԵԾԵ Ա. ՔԱՀ. ԳԵՂԱՄԵԱՆՑ

Գ Ի Խ Ե Խ 20 Պ Ռ Ի Բ. Բ.

Գ Ր Ա Կ Ե Բ Ր Կ Ր Ո Ր Դ

2004

Բ Ա Գ Թ Ի
Տաղարան-Արշակ Ի. Կարապետեանց

1919

9(47.925)

Գ-42 Կ

ՏԱՅԻԿՆԵՐԸ ԿՈՎ ԿԱԱՍՈՒՄ
ԲԱԳՈՒԻԻ ԱՆԿՈՒՄԸ

«Ոչ ի կարծ ընդուառոցեալ, և
ոչ ի լուր զարթոցեալ, այլ ես ան-
ձամբ անձին պատահեցի ի տեղ-
ողն և տեսի»:

Ե Կ Ի Ե Լ.

920925

Գ Ր Ե Ց
ԵՂԻՇԵ Ա. ՔԱՀ. ԳԵՂԱՄԵԱՆՑ



Բ Ա Գ Ո Ւ

Տպարան Արշակ ի. Կարապետեանց

1919

139

6763

ՔԻՉԵՐԱԽՈՎ ԳՆԴԱՊԵՏԸ

Երբ Պարսկաստանում գործող ոռւսական զօրաժամերն հեռացան՝ Բիչերախովի հեծելագունդո մնաց և գործում էր յօգուտ Մնդիայի քաղաքականութեան և, ի հարկէ, ապրում էր նրա հուշտով՝ ստանալով, — ինչպէս պատմում են. — ամսական 30 միլիօն ըստրլի:

Բրեստ-Լիտովսկի գաշնագրով Գերմանիայի և Ռուսիայի մէջ կայացած անջատ հաշտութիւնը՝ և նրա հետհանքով ոռւսաց զօրքերի ցրումը՝ անազին հարւած էր գաշնակիցներին: Ուստի նրանք իսկոյն և եթ միջոցներ ձեռք առան՝ գերման-տաճկական առաջ խաղացումը խափանել, ինչպէս Եւրոպայում, նմանապէս և Ասիայում:

Մեծատարած Ռուսիայի զրեթէ ամբողջ արհմտեան մասը՝ արդէն Գերմանիայի ճանձն էր ընկել: Եւ եթէ թոյլ տրւէր՝ նա աւելի հեռուն կը տարածէր իր թաթթը, և ահա առաջ եկան Ճարտահայի և Ասերիկայի բանակցութիւններն ու շարժումները Սիբիրի կողմերում,

և Վօլգայի ափերում ու Պարսկաստանում, և վերջապէս Անդրկասպէան երկրում և Անդրկովկասում:

Վերջին երեք երկիրներով առէնից առաւել շահագրգուած էր Անգլիան, որի շահմարանը կազմող Նոդկաստանի վրայ՝ վերջերումս աչք էր անկել գերման-տաճկական դաշնակցութիւնը:

Ուստի խորագէտ Ալբիոնը փութաց օր առաջ այդ երկիրները մատնել Նա հեռաւոր Բաղդատից՝ 4000 վերստ տարածութիւնից՝ իր ձեռքը, Անդրկովկասի վրայ ձգեց և էնդէլիում հաստատւելով՝ պատրաստուում էր Բագու դալու:

Անգլիացիների տառչ Բագուի ճանապարհը բաց անողը հանդիսացաւ գնդապետ Բիչերտխովը: Սա լսելով որ տաճիկները արդէն Գանձակին են մօտենում՝ փութաց մեծամասնական իշխանութեանը դիմել և իր ծառայութիւնը առաջարկել յօգուտ Ռուսիայի:

Եւ, ինչպէս նախորդ զլիսում յիշել Ենք, Բագուի կարմիր բանակին զլիսաւոր հրամանատար նշանակւեց:— Իսկ երբ ինքը հիւսիսային կովկաս անցաւ՝ Դաղստանի հետ ըսնակցելու յանձնարարութեամբ՝ Պետրովսկից հեռագրեց էնդէլի Անգլիացիներին Բագու դալու: Եւ Անգ-

լիացիք իրեւ թէ Բագուի ժողովրդական դիմումների և խնդրի համաձայն:

ԱՄԳԼԻԱՑԻՆԵՐԻ ԳԱԼՈՒՍԸ

Թշնամին Բագուի գոներից արդէն հեռացած էր, երբ Անգլիացիների առաջին, սակաւաթիւ խումբը մուտք գործեց այնտեղ ծովով և լուս ու մունջ սկսեց զիրքեր որոնել և ամրացնել ու զինել:

Հետզնեաէ եկան և ուրիշ խմբեր սագմաթերքներով, ջորիներով, աւտոմօբիլներով և կենսամթերքների պաշարով:

Նրանց զինւորների ընդհանուր թիւը 2000-ի էլ չհասաւ, բայց յուսալի էր, որ իրանց օրինակելի կարգապահութեամբ և սագժամթերքի առատութեամբ՝ կարող կլինին իրանց միսսիան գլուխ հանել «կարմիր բանակի» օգնութեամբ:

Գալով նրանց իրաւասութեանն ու պարտականութեանը՝ այդ դրանք հրատարակեցին իրանց հէնց առաջին կոչով, որով յայտարարում էին, որ իրանք եկել են համաձայն ազգաբնակութեան (հասելենից) ինդիրքին՝ պաշարւած քաղաքին օգնելու նպատակով և եթ, թէ՝ անձնական ոչ մի շահի ակնկալութիւն չունեն (??) ուստի և ժողովրդի ներքին

գործերում որ և է միջամտութիւն զործելը՝
բոլորսին հեռու է իրանց մաքիցը: (*) Գալով
պատերազմական գործողութիւններին՝ այդ էլ
նրանք կտորելու են տեղական օրքի օգնու-
թեամբ և տեղական իշխանութեան փոխադարձ
համաձայնութեամբ:

Բայց, ինչպէս հետզհետէ երեաց, Անզլի-
ացիք այնքան էլ գոհ չմնացին իրանց այդ զի-
ջողականութեամբ: Եւ ես կարծում եմ, որ
եթէ նրանք ճշտապէս տեղեակ ու ծանօթ լի-
նէին Բագւի յեղափոխական կարմիր բանակի
քանակութեանն ու որակութեան՝ հագիւ թէ
տեղներիցը շարժւէին: Բայց... երեսում է որ
էնզէլի և մինչև Թէհրան զնացող հայ և ոռու
քաղաքական պատրիարկներն ու նւիրակները,
այնքան ճարպիկ են եղել, որ իրանց մեծ մեծ
խոստումներով, խորագէտ Ալբիոնի ուրիշ
ձեռքով կրակից շագանակներ հանելու ախոր-
ժակը յաջողել են գրգռել:—

Մի քանի ժամանակից յետոյ էլ՝ մի այլ
կոչ հրատարակեցին Անզլիացիք յանուն տե-

) Պարենաւորման կենսաթութիւն հարցի առթիւ
կուացած երկու ժողովներում Անզլիացիների ներկա-
յացուցիչը մի քանի հիմնաւոր, արմատական միջոց-
ներ առաջարկեց, սակայն տեղական իշխանութիւնը
մերժեց: Անզլիացիք լսեցին և այլ ևս չմատնակցեցին
այդպիսի ժողովներին:

զական և շրջակայ մահմետական ազգաբնա-
կութեան, որին յորդում էին տաճիկներից
ձեռք վերցնել և պատերազմով կողմերի մէջ
չէզօք դիրք բռնելով իրանց սովորական և առ-
տնին զործով զբաղւել:

Մի քանի ժամանակ յետոյ էլ մի այլ կոչ
հրատակեցին Օգոստոսի 26-ին ն.տ. յանուն Ռու-
սաստանի ազգերին:

Դնում ենք այստեղ այս կոչի հայերէն
թարգմանութիւնը:

ԱՆԳԼԻԱՑԻՆԵՐԻ ՎԵՐԶԻՆ ԿՈԶԸ

«Խուսիայի ազգեր. Զեր դաշնակիցները
Զեզ չմոռացան: Մենք յիշում ենք այն բոլոր
ծառայութիւնները, որ Զեր քաջարի բանակը
պատերազմի առաջին տարիներում արաւ մեր
ընդհանուր գործին: Մենք, որպէս բարեկամ-
ներ, գալիս ենք չթոյլ տալու որ Գերմանիան
Զեզ բաժանէ և կործանելով ու հարստահարե-
լով՝ Զեր ահազին հարստութիւնը շահագործէ
իր անձնական հաշիւների համար:— Մենք Զեզ
անկեղծ և հանդիսաւոր խոստումն ենք տալիս
թէ՝ մեր զօրքերը Ռուսաստան մանուս են մի-
միայն օգնելու Զեզ Գերմանիայի գէմ Զեր ու-
նեցած պատերազմում: Զեր հողից մի բուռ

անգամ խլելու միտք չունենք։ Մենք ցաւում ենք, որ դուք քաղաքացիական կուով բաժան բաժան էք եղած և Զեր ներքին երկպառակութիւնները մեծապէս օգնում են Գերմանիայի աշխարհակալական ծրագրին։ — Սակայն մենք միտք չունենք որևէ քաղաքական ձև ցոյց տալ Ռուսաստանին, որի բաղդը ուուս ազգէ իրան ձեռքն է, և նա ինքը և եթ պէտք է իրան համար կառավարութեան մի ձև ընտրէ և իր սօցիալական խնդիրները նա ինքը լուծէ։ —

Ռուսիայի ազգեր. հարցը Զեր գոյութիւնը և Զեր ինքնորոյնութիւնը պահելուն է վերաբերում։ Յեղափոխութեան ձեռք բերած ազատութիւններին՝ Դերմանիայի երկաթեայ ըըստնցքից վտանգ է սպասում։ Խմբւեցէք ազատութեան և անկախութեան դրօշակի շուրջը, որ անա մենք Զեր դաշնակիցներս բարձրացնում ենք, և այսպիսով օգնեցէք այս երկու մեծ սկզբունքների յաղթանակին, առանց որոց ոչ հաստատուն հաշտութիւն կարող է լինել աշխարհում և ոչ էլ ազատութիւն ազգերի համար։

Ռուսիայի ազգեր. մենք ուզում ենք ոչ միայն Գերմանական զինման առաջն առնել, այլ նա և ուզում ենք ձեր կործանւած և հիւծւած երկրին տնտեսական օգուտ մատակարա-

րել։ Մենք Զեր արգէն պարենաւորւան պաշար հասցըրել ենք. զրան կը հետեւին և ուրիշները թացի այդ մենք ուզում ենք Զեր երկրի արդիւնարերութիւնը և բնական հարսաւութիւնները դարձացնել, ապրանքների տոհառութ վերականգնել, հողագործին օգնել և Զեր հնարաւորութիւն լնձեռնել օրինական տեղ բռնել աշխարհիս ազատ ազգերի շարքում։

Ռուսիայի ազգեր. միացէք մեզ հետ Զեր ազատութիւնները միասին պաշտպանելու համար։

Մեր միտկ ցանկութիւնն է՝ տեսնել Ռուսաստանը ուժեղ և ազատ և, մեր տեղը դառնալով՝ վկայ լինել թէ Ռուս ազգը ինչպէս պէտք է վճռէ իր բաղդը՝ ըստ իր ազատ կամքի։

ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ՊԱՌԱԿՏՈՒՄԸ

Տաճիկների ռմբակոծութեամբ անաբեկւած և սովի ճիբաններում հալ ու մաշ եղած Բագրի ազգաբնակութիւնը՝ մեծայոյս էր որ Անգլիացիների զալստեամբ՝ ինքը մի անգամայն կազմուի։

Եւ որովհետեւ մեծաժամանական իշխանութիւնը բացարձակաբար հակառակ էր Անգլիացիների զալսուն, զեմուկբարիան ծառս ելաւ, նրա մեծա բաւական իշխանութեան դէմ և վերջինիս

հակասակորդ էսէրների և փաքրամանական էստէքների ներշնչմամբ՝ սկսեց նրա տաղալումը պահանջել:

Բանւորութիւնը, ի մասնաւորի նորէլի գործարանների մեծաքանակ բանւորութիւնը՝ զրգուց միւս մեծ նաւթահանքերի բանւորութեան մեծագոյն մասին ես, այնպէս որ մեծամասնականների կազմած ամենավերջին միտինքներում թէ Բալտիանում թէ Սկ ու Սպիտակ քաղաքներում և թէ բոլոր մեծ թաղմամասներում, — ընդհանուր գեղոհութեան և բոզդի որոշումներ կայացան: Եւ եթէ չէին լինել սմանք, Բալտիանու բանւորութեան ձեռքից հազիւ թէ Ստեփան Շահումեանը կարողանար ողջ գլխով դուրս պրծնել միտինզի որանից: Դեռ իր ձառր չվերջացրած՝ մտերիմները՝ մի պատրւակով նրան միտինզի որանից դուրս հանեցին ու քաղաք փախցրին: —

Այդ ամէնից յետոյ՝ մեծամասնական ջոջերին ուրիշ ոչինչ չէր մնում անել, կամ իրենց կեանքին վերջ դնել, և կամ հրսժալ ական տալով հեռանալ քաղաքից:

Վերջին միջոցը ընտրեցին նրանք իրանց վերջին մասնաւոր խորհրդակցութեան ժամանակ:

«Կարմիր բանակի այս աստիճան լքումը և

թշնամուն նոր ուժերը սաւանալն կարմիր բանակի նրամանատար զնդժուպետ Աւետիսովին ստեպեցին յայտնել թէ քաղաքը վատանզի մէջ է, թէ Բիչերախովը թողել հեռացել է դէպի հիւսիւսային կովկաս և թէ ճակատը պաշտպանող 1600 սւիններից մնացել է ընդամէնը 400: Մինչդեռ, — յարակցում էր Աւետիսովը, — ինչպէս որ սաւանակների ցուցմամբ երկում է թշնամու շարքերը տաճկական կանոնաւոր զօրամասներով հետզհետէ աւելանում են: —

Ուստի նրա կարծիքով անհրաժեշտէ իսկոյն սպիտակ գրօշակ բարձրացնել և բանտիցութիւն սկսել: —

Նոյն կարծիքն յայտնւեց նա և գենեռալ Բագրատունու տանը՝ երեկոյեան տեղի ունեցած ժողովում, ուր ներկայ էին բացի Ազգային Խորհրդի անդամներից և Համագուստ ու Ղազարեան զօրավարներից, նա և մեծամասնական իշխանութեան ներկայացուցիչներ՝ Զահնումեանը և Զափարիտձէ: —

Գեներալի հարցին թէ կարող է Շահումեանը յընթայս 7 օրւայ՝ զոնէ 5000 զինւոր ըերել Աստրախանից կամ այլ տեղից, վերջինս պատասխանեց որ յոյս ունի, բայց զբական խօսք տալ չէ կարող, աւելացնելով սակայն, որ եթէ Հայ զինւորներից 4 հազար հոգե-

Քաղաքը թողնելով՝ ճակատ գընան,— և թէ
անգամ թշնամուն յետ չմղեն, անշուշտ նրա
առաջիսացումը կարգելեն մինչև Ռուսաս-
տանից նոր ուժեր գալն, Առ այդ Համա-
գասպը պատասխանեց, որ իր բրիգադայի
զինւորներն իր խօսքը չեն լսում (*):—

Այսու ամենայնիւ թէ նա և թէ Ղազար-
եանը խոստացան մինչև 1300 զինւոր (16 և
18-րդ վաշտերը) հասցնել ճակատ: Դաշնակ-
ցութեան ներկայացուցիչը իր ներթում
յայնեց որ ինքն ևս յոյտ ունի ամսոյ 31-ին
3000 հոգի պատրաստել:— Բայց այս խոստումն
ու յոյսը օգում մնաց և Աւետիսով հրամանա-
տարը անդադրում օգնութիւն էր պահանջում,
աւելացնելով որ իրան խոստացւած թւերից
320 մարդ միմիայն եկաւ,— 16-րդ վաշտը,
բայց նա էլ չէ ուզում կռւին մասնակցել:

Սրանից յետոյ մեծամասնական իշխանու-
թիւնը իր Խորհրդային ամենավերջին նիստը
կազմեց, ուր ներկայացն ելով իր հրաժարականը՝
դահլիճից դուրս եկաւ, բացարձակ մերժե-
լով միւս կուսակցութիւնների, մասնաւորապէս

(*) Գոյամարգեանի խայտառակ նահանջ—փա-
խուսից յետոյ՝ Համազասպի զինւորներն իրանց
հաւատը կորցրել էին դէպի նա:

Դաշնակցութեան ներկայացուցիչ Ալէքսանդր
Սուպերելեանի թախանձանքը՝ մնալու, և իրանց
հետ միասին գործելու:—

«Մենք միանգամայն անկարող ենք ձեզ
հետ գործել, մեր ճանապարհները բոլորովին
ապրել են միմիանցից»,— այս եղաւ Շա-
հումեանի վերջին խօսքը:

Հրաժարական իշխանութեանը փոխարինեց
Էսէրներից, փոքրամասնականներից եւ Հ.
Յ. Դաշնակցականներից կազմւած մի կօալ-
ոին ժամանակաւոր գործադիր մարմին, որ
նաւատորմի հետ միասին պիտի շարունակէր
քաղաքի պաշտպանութիւնը, առայժմ միայնակ,
մինչև անգլիացիների գալն, որոց հրաւիրելու
համար՝ ընդհանուր ժողովը արգէն վճռել էր
նախապէս:

Այսպէս ահա կազմւեց նոր իշխանութիւ-
նը:

Այս գրութեամբ միմիթարւած ու միամտ-
ւած՝ նոր իշխանութեան ներկայացուցիչները
ձեռնարկեցին քաղաքի «գեմոկրատիան» նա-
խապատրաստելու ապագայ ընտրութիւններին։
Դարձեալ միտինգների սեղոնն սկսւեց. իւրա-
քանչիւր կուսակցութիւն իր ճառախօս ներկա-
կայացուցչին հրապարակ բերեց, որոնք փըր-
փուրն բերաններին հայհոյում, նախառաւում,

յաճախի էլ զրպարտում էին մեծամասկաններին մինչև երկինք բարձրացնում իրանց կուսակցութիւնների ծրագիրների առաւելութիւնները, միւսների թերութիւնները, անկատարութիւնները: — Եւ վերջի ի վերջոյ ճակատ առ ճակատ գուրսեկան միմիանց դէմ իրանց փետուրներով կուելու:

ՓԵՏՈՒՐԵԱՅ ԿՈՒԻՉ

Հ. Յ. Դաշնակցութեան կենտրոնական կօմիուէի օրդան «Յուրաքանչ» թերթը, իր №№-ներից մէկում՝ գանգատում էր, որ կովկասեան միւս ազգերի, վրացիների, թուրքերի և միւսների գեմոկրատիան կրաւորական, անտարբեր դիրք է բւնել ներկայ օրերում, երբ ի դէմս Բագրի՝ անխոռոսափելի վատանդ է սպառնում յիշ զախարտկան Ռուսիայի համայն գեմոկրատիային, աշխատաւորութեանը: Եւ ի վերջոյ հրաւիրում էր ընդհանուր համերաշխութիւն, ընդհանուր գործակցութիւն, ընդհանուր միութիւն: —

Կոտեքների օրդան «Ասկրա» թերթը Յուրաքանչ» ի այդ սոովերն վերատպելով՝ նկատողութիւն էր անում Դաշնակցութեանը, որ նա այժմ ըստ սովորութեան, — «քիթը հողմի կողմը

շրւս տալով», իր նախկին քարոզներին հակառակ քարոզ է կարգում, թէ, շատ ուրախալի է, որ վերջապէս Դաշնակցութիւնն ևս խելքի է եկել և այժմ միայն քարոզում է այն, ինչ որ էստէքները սկզբեց ի վեր քարոզում էին:

Իմ կարծիքով «Ասկրա»-ի նկատողութիւնը միանգամայն ձիշտ էր, բայց անտեղի, անժանակ: — Անկեղծօրէն թէ առերեսո՞ւ երեք մեծ կուսակցութիւններն էլ խօսք էին առել համերաշխութեամբ, փոխադարձ զիջողութեամբ վարւելու, որպէս զի նորից մէջներիցը մի սև կատու չանցնի: Եւ ահա էստէքների օրդանը գալիս է յանկարծ պատակաման մի գուս բանալու:

Ի հարկէ եթէ Դաշնակցութեան կենտրոնական կօմիուէտի մէջ փոքր ինչ սառնարիւն մարդ գտնւէր՝ կամ «Բոկրա»-ի նկատողութիւնը կարհամարձէր և կամ «հասկանալով մոմենտի լրջութիւնը, կըխուսափէր ընդհանուր թշնամու աչքի առաջ կուսակցական կրքերն գոգաելուց և բանակուի բոնւելուց»: Սակայն այդպիսի մի մարդ չգտնւեց, ուստի և «Յուրաքանչ» ը հետեւեալ պատասխան՝ յօդւածը զրեց «Աստամները բանում են» վերնազրով:

«Մենք դադարեցինք բոլշէիկների յարձակումներին պատասխանելուց», մինչև անգամ

Ընդհատելով մեր «Կօզի Շաумյա» յօդւած-ների շարունակութիւնը, որովհետեւ բոլէկիկները իրանք իրանց սպանեցին, ինչպէս որ ինքն իրան սպանում է գողութեան և կեղծիքի մէջ բոնած պաշտօնեան:— Այժմ նրանք ազգի գիտակցութեան մէջ մեռած են, — այսօրւանից նրանք արգէն մեղաղբական աթոռի վրայ նրատած պէտական յանցաւորներ են: Նրանք սպասում են ազգի գատաստանին, որ պէտք է խիստ լինի, բայց արդարադատ:— Զիսանգաբենք մենք ազգի գատաստանը: Բնկածին մենք այլ ես չենք խփում»: (*)

«Բայց բօլշեիկների մահով նրանց իւեղդած դիմումը մենչեիզմը շունչ առաւ, և իր բոնի լետարկիական քնից զարթնեցնելով՝ ընդհանուր խառնակութիւնից օգտւելով՝ այս մանուկը այնքան ձարգացաւ, որ սկսեց ատամներ հանել, և մինչև անգամ խածոտել:— Իսկ խածոտել ուժ աւելի կարելի է քան' քան Դաշ-

*) Բայց նախ քան ձեր յաջաբերութեան լար-
ւելն՝ գուք նրանց փէշերից պինդ բռնած պուկ չէիք
գալիս, առանց մտաբերելու որ ձեր ընկերների
մէկը, Քաջազնունին քաղաքային դումայի դահլիճում
գեմակուկիական ձևերով գոռզոռում էր թէ բօլշեկնե-
րի հետ պէտք է խաւել ուսմբերով պուլիմեօտներով
և թնդանօթներով:

Նակցութեանը: Սա արգէն քոթոթների հին սովորութիւն է՝ փղի վրայ հաշել: (*)

Նորածին մենչեփական «Ասկրա»-ն Բագրի
երկունքից յետոյ՝ աշխատում է Խորհրդային
ընտրութիւններից առաջ ռեկլամ կարգալ — իր
սոցիալիստականութեան մասին։ Այդ նպատա-
կով, «Ասկրա»-ի արամազրութեամբ՝ պէտք է
ժիսել միւս կուսակցութիւնների սոցիալիստա-
կանութիւնը, ուստի և Դաշնակցութեանը չա-
կերտների մէջ անւանում է սոցիալիստ և ռե-
զազրում է որ նա «քիթը հողմի կողմն է բըռ-
նում»։ —

Միաժամանակ «Искра»-ն մի հանձարեղ զիւտ անելով, որ իրը թէ հայ ազգը մանրառութուական տարրից է բաղկացած՝ սկսում է հին եւ ցանցառ երգն երգել թէ՝ «Քաշնակ-

*) Մեծամասնական իշխանութիւնը՝ իր հրաժառականը տալուց յետոյ՝ բաւականին ուղղմամթերք Խըցըած՝ փախաւ քաղաքից նաևերով. Բայց բոնւեց բանդարկւեց. Եւ ահա այդ օրից սկսած նրա հասակունները, մահապահութանց ակտունութիւնը, եւ ակալ չմնաց, որ էկառագիւնդնուր լոյին:



յութիւնը՝ մանր՝ բուրժուական՝ կուսակցութիւնն է (*):

*) «Вперед» № 14. Апрель 1917 г. № 33-го.

Սյու հարցումը այսկան կարեւոր է, — գլում է
թերթը՝ ինչքան կարեւոր է Դաշնակցութեան զբաւած
տեղը և կատարած գերը հայ իրականութեան մէջ:

Գաշնակցութիւնը, ըստ ոմանց, մի լիբերալ կուսակցութիւն է որ հայ կեանքումը կոչուած է շարունակելու Ստեփանոս Նազարեանցի եւ Գրիգոր Արծրունու սկսած գործը. ըստ ուժիշների՝ նա Թիւրքահայացտանի քաղաքական ազատութեան միայն նուիրուած մի խմբակցութիւն է, ուրիշներ ասում են՝ թէ նա պատկանում նաև ոռուահայերին, որի հասարակական-քաղաքական կեանքում նա նոյնպէս մեծ դեր ունի կատարելու, ոմանք ասում են՝ թէ Դաշնակցութիւնը ընկերվարական կուսակցութիւն է, ուրիշներ պնդում են՝ թէ նրա ընկերվարութիւնը թիւրքացութիւն է միայն: Բայց հայազգի մեծամասնութիւնը, Թիւրքիայում, կովկասում՝ և Ամերիկայում, թիւրքիայում, համոզուած էր և է, որ Դաշնակցութիւն ինքը հայ անողուած էր և է, որ Դաշնակցութիւնը հայ ազգըն է, ուրիշ անուան տակ, որ Դաշնակցութեան ազգըն է, այս ազգի յաջողութիւնն էր, որ Դաշնակցութիւնը ծառայում է իրեկ միութեան օգակնակցութիւնը

քաղաքական կենտրոնից զրկուած Հայ ազգի համար,
որ իրան կապած ժողովրդի ամենատեսակ խաւերը,
Հայ ազգը տանելու էր գէպի մի ընդհանուր նպատա-
կալէտ: Դաշնակցութեան ամբողջ ծաւալումը և յա-
րուցած ոգերութիւնը այդ խոր համոզման մէջ պէտք
է փնտռել:

Աւանեսալով՝ այսպիսի բազմապիսի ստորոտկելիներ, գնենիով իրեն մի քանի իդէալներ, Դաշնակցութիւնը չէ կարողացել անշեղ կերպով հետեւել գը անցից որեէ մէկին՝ նա զիմէլ է երբեմն դէպի մէկ և երբեմն գէպի միւս իդէալը կամ, աւելի ճիշտ, զէպի մի միջին ուզութիւն, որ ոչ այս էր ոչ այն. նա հիբայիցիների պէս թափառել է անա զատում ետ ու առաջ, աջ ու ձախ, առանց երբէք հասնելու Աւետիաց երկրին, որի ինչ լինելը իրեն համար էլ պարզ չէր: Դաշնակցութիւնը գործնական և հետեւղական լինելու փոխարէն ջանացած է գրաւել միայն ամրոխի համակրութիւնը:

Ա մեն անգամ, երբ հրապարակի վրայ մի որևէ հոսանք ժողովրդականութիւն է վայելում, Դաշնակցութիւնը, նախանձից խաչուած, խսկոյն մէջտեղն է նեւուում, ուզում է կողմանակից երեալ նրան և մինչև խսկ նրանից առաջ անցնել, առանց մտածելու թէ գա համաձայն է թէ ոչ իր նախակին ուզութեան և իգեալի հետ. անհաւատարիմ սիրահարների պէս նաշուտ շուտ փոխում է իր սիրուհիները:

Բուսական յեղափոխութիւնը մի ծանր փորձութիւն եղաւ Դաշնակցութեան համար: Ի՞նչպէս կարելի էր հանգիստ քնանալ, եթիւ ընկերվարականները ծափեր էին խլում հրապարակներում, ոկտափ էր ոօ-

ցիսլիստ լինել: Իսկ արիւնով ներկրած Հայտոտանը: Է՛հ, նողը նրա գլխին, նա, ինչպէս ասում է ժողովրդական առածը, «անոտ» էր. նա երկար ժամանակ իրենցն էր գեռ, ինչ էլ ասէին ու անէին, պէտք էր հասր' ոսովների ետևներից: Եւ Դաշնակցութիւնը որոշեց գառնալ կարմիր ընկերվարական, հայզուկի արիւնաթաթախ վերարկուի վրայ հագաւ ընկերվարակուի պատմումանը, և մէկ կողմը շղբաւելով իր հին սիրուհին, որին մսիսիրների վրայ նստեցրել էր, նա փարւեց նոր սիրուհու պարանոցով:

Զէ՞ որ պէտք է „կայտառ խոճմտանք“ ունենալ կետնքումը յաջողելու համար: Այս թէ ինչ է յայտարարում մեր հին հայզուկը իր ընկերվարական սիրուհու համրոյըների ազդեցութեան տակ:

«Աշխատաւորութիւնը «համագային» շահ չունի...: «Ազգային»ը նրան այնքան է շահ զգքառում, որքան որ սա նրա գասակարգային ու մարդկային գարգացման անհրաժեշտ է: «Ազգայինը աշխատաւոր գասակարգի համար «ազգային» կուլտուրայի ժողովրդականացումն է. այս է միակ շահը: Մասնաւորապէս հայ աշխատաւորութիւնը համազգային քաղաքականութիւն և տեսակէտ չունի, աշխաւոր դասակարգը ոչ համաշասակարգային, ոչ էլ համազգային շահներ ու տեսակէտաներ ունի: Նա ոչինչ ընդհանուր չունի, ոչ բուրժուազիայի, ոչ էլ ազգի, այսինքն սրա տիրող դասակարգերի, գարձեալ րութուալիայի հոգերականութեան և ազնուականութեան հետո:*)

*) Աշխատաւոր օրդան Հ. Յ. Դաշնակցութեան № 19

Եւ այս ասում է Դաշնակցութիւնը! Նա, որ մի քառորդ գար ուրիշ նպատակ չէ ունեցել, ուրիշ իգէալով չէ սգեսրուել և ոգեսրել, բայց եթէ հայ ժողովրդի «համազգային» քաղաքական ազատութեամբ:

Ի՞նչ կարող էր լինել մի ժողովրդի ապագան, որի զեկավարները այսքան անսկզբունք են, այսքան անհաստատ, այսքան զուրկ որևէ որոշ նպատակակէտից:

Մի ժամանակ հայ եկեղեցական կալուածների գրաւման առիթով ամբողջ Կովկասը փոթորկաղ, բովանդակ կովկասահայութիւնը գէպի ըմբոստացում մզող Դաշնակցութիւնը, Բագւում զէնքի ոյժով յանուն հայ ժողովրդի ազգային շահերի**), գործազուրներ խանգարող Դաշնակցութիւնը, այն Դաշնակցութիւնը, որը կազմւած է միացնելու համար հայ ժողովրդի բոլոր տարրերը թիւրքահայերի քաղաքական ազատութեան շուրջը, որ տարւել է մինչև այժմ համազգային տիրապետութեան, ազգային կառավարութեան բուռն ցանկութեամբ, յանկարծ անցնում է սօցիալ գէմոլրաներից էլ ձախ և յայտարարում, որ ինք ոչ մի ընդհանուր շահ չունի ազգի միւս ոչ «աշխատաւորական» տարրերի հետ, ոչմի համազգային նպատակ որ իր փնտուած միակ ազգային շահը ազգային կուլտուրայի ժողովրդականացումն է և այլն.:

Հայատանի քաղաքական ազատութիւնը քամուն է տրւում. հայ ժողովրդի իրաւունքները իր հայրենիքի ժամանակին լուել անգամ չի ուզում, չկայ այլ-

*) Այդ մեզ ասել է պարծանքով մի յայտնի դաշնակցական շեք մի դասախոսութեան ժամանակ:

և հայ ժողովրդի թւի աճման, նրա համատարք խոռոշիան խնդիրը, չկայ այլիս մեր այնքան երգուած և այնքան արիւնով ոսոգուած Հայաստանը, զա պառաւած մայր է, իսկ մարդկանց սիրուհիներ են հարկուոր: «Աշխատաւորները» հայրենիք չունին: Չկայ այլիս ընկերվարական գաշնակցականի համար հայ ժողովրդւրդը «մի և անրաժանելի», կան միայն եւ միայն գաստկարգեր:

Դաշնակցութիւնը իր նոր օրգանովը սպառնում է, որ սրանից յետոյ այդ սկզբունքները նա պիտի իրագործէ մեր կեանքումը և ոչ թէ թողնէ մեռած տառ:

Բայց եթէ այդ այգպէս է, եւ ի՞նչ գործ կարող են ունենալ այդ կուսակցութիւնն մէջ թիւրքանայերը, մեկ համար բոլորովին անհասկանալի է մնում: Միթէ անւան և թայֆայի հմայքը այնպէս պէտք է կուրացնի մարդկանց, որ նրանք մոռանան թէ ի՞նչքան շփոթ և վտանգուոր գոռութիւնն մէջ են գնում իրանց, երբ նետում են մի հոսանքի մէջ, որ նրանց, հակառակ իրենց կամքին, տանում է զէպի արմելը, մինչ իրենք ուզում են գնալ գէպի արեմուտը: Միթէ թիւրքանայ դաշնակցականները մոռացան արդէն թիւրհայաստանը, միթէ նրանց համար չկայ հայ ժողովրդի, ու եօս և ոչ թէ միայն նրա մի մտսի; քաղաքական ընդհանուր նպատակակիցը, միթէ, իրակ նորատեսակ բօլեկիկներ, թիւրքանայ դաշնակցականները պիտի յայտարարեն՝ թէ հայ աշխատաւուրդի և «բուժուաւ»-ի միջի ոչինչ ընդհանուր բան չկայ և ջանան այդ տեսակտը անցկացնել հայ կեանքումը, քանիդելով նրա արդէն իսկ մահամերձ կազմւածքը:

Ոչ, պիտի պատասխանեն, այլ է ոռուսահայ դաշնակցականը, այլ է թիւրքահայը, ոռուսինութիւնը ընկերվարական են, վերջինները ոչ:

Բայց միթէ հնարաւոր է այդ տեսակ այլանդագակ միւսութիւն: Միթէ միենոյն ծրագիր, միենոյն անուն միենոյն կազմակերպութիւն, միենոյն շէֆիր ունեցող մի խմբակցութիւն զանազան մտսերը կարող են իրարից տարբեր ձգուամներ ունենալ, տարբեր բան անել: Թիւրքահայ գաշնակցականը, որ ամեն օր կարգում է իր կուսակցութիւն օրգանները, հրատարակութիւնները, անում է նրա գրականութեամբ, լսում է նրա սլրօպականդիսաններին, սասնակցում է ժողովների, լսում է «գտասակարգային անհրաժեշտ պայքարի» և հակառակյանագանութեան քարոզը անկարելի է որ նա, չլինի նոյն իսկ տպէտ և միամիտ թիւրքանայ պատասխեկութիւնը, թիւրքանայաստանում չփորձէ մղել միենոյն «անհաշտ» պայքարը, չհրատպուրուի համազգային գործակցութիւնից և նպատակի միւսութիւնից, որ այնքան անհրաժեշտ է թիւրքահայութիւն համար, ինչքան ահազին՝ են նրա կորուսանները, բազմաթիւ և ուժիկ՝ թշնամինները, և չափազանց ծանր նրա առաջ զրուած զործը:

Եթէ Դաշնակցութիւնը անկեղծօրէն զառնար ընկերվարական, եթէ նա իրապէս վտարէր իր շարքերից «մանր ու խոշոր բուրժուազիայ»-ի «բուրժուական ինտելիգենցիոն»-ին, համակիրներ»-ին, «յարագուներ»-ին և լին, ինչպէս զր ինքը յայտարարում է^{*)}, եթէ նա վերածւէր մաքուր և հատեղպական ընկերվարական կուսակցութիւնն մինք ոչ թէ զգոն չէինք մաւրու Դաշնակցութիւն այդ կերպարանափոխութիւնից,

^{*)} Աշխատաւոր № 19

այլ մեծապէս ուրբախ կը լինէինք, համոզւած լինեալով, որ այդ «մանր ու խոշոր բուժութուաները, բուրժուական ինտելիգենցիաները, համակրողներ և յարողները», որոնք կազմում են իր շարքերում 90 տոկոսը, գուրս գալով այդ կուսակցութիւնից, կը կազմէին մի ազգայնական կենարունական կուսակցութիւնը կը ձեւացրէին հայ ազգի քաղաքական ողնաշարը։ Բայց գերազդութիւն այն է, որ գաշ. ընկերվարութիւնը նոյքանանհարազատ է, ինչքան իր ազգայնականութիւնը։ Թաշնակցութեան համար ընկերվարութիւնը երբէք չպիտի գառնայ ամբողջական իդէալ և հետեւզական սկզբունք, նա գաղափարի մաքրութեան և կուսակցական բիւրեղացումին չպիտի զահէ խայտարգէտ բայց մեծաթիւ, մեծաշառչ, փող ու քուէ տուող մասսան, նա, հայած վայրկեանի փշող հովերին, այսօր պիտի գաւանի համազգայնական, վազը այլամերժ դասակարգային գաղափար, երկուան էլ իրարմով աղճատելով ու չէզոքացնելով, առանց վճռապէս լինելու այս կամ այն։ Եւ այդպէս իր գոյութիւնը պիտի պահէ հայ իրականութեան մէջ այն գորշ խառնակոյտը, որի բոլոր ստեղծագործութիւնները լինելու են գորշ և խսանաշփոթ։ Զաւա, հետեւզական, ուժեղ հայ ազգայնականութիւնը մեծ գեր ունի կատարելիք հայ իրականութեան մէջ, նմանապէս անկեղծ և իր սահմաններում անփոփուած ընկերվարութիւնը՝ մեզ վընասաւար չինելուց բացի՝ կարող է օգտակար լինել։ բայց Դաշնակցութիւնը, իրար խառնելով այս երկուար, չ' լոքացնում է նրանց երկուսի արտազրելքը ու գուռները և մէջտեղը մնում է միայն չարիք։ Մընութ է մի անհետեղական ազգայնականութիւն, որ

ընկերվարական-համազգայնական մտքերի հետ կողք կողքի ապրելուց չափազանց ուժասպառ, հոգեգուռկ եղած է. դա անոյց, անկենսունակ, կեանքից ու գործունէութիւնից գուրեկ մի ազգայնականութիւն է, որ չէ տարացնում ոչ մէկի սիրալ, որ գնում է հա ու առաջ վարանոտ քայլերով, որ աչնչով չէ նպաստում հայ ժողովրդի միութեան և ուժեղացման, այլ իր գոյութեամբը գրգռում է մեր թշնամիներին, իսկ իր անզօրութեամբ և ծուլութեամբ արորում է մեզ նըրանց գրոհների տակ։ Մօտ երեսուն տարի կը լինի, որ Դաշնակցութիւնը համազգային նպատակներ է գրել իւնին, բայց մինչեւ այսօր նա չէ ձգտել զէպի միութիւն և ազգային բովանդակ ոյժերի խելացի համաձուլում, նա միշտ մնացել է մեկուսի, անհաշտ, և աւելի պառակտել և տկարացրել է քան ուժեղացրել։ Սա ամեննեին զարմանալի չէ և ըղիում է այն երկութիւնից, որ Դաշնակցութիւնը պարունակում է իր մէջ՝ ընկերվարութիւնը և համազգայնականութիւն, «անհաշտ» պայքար և գասակարգերի միութիւն յանուն ազգային ընդհանուր շահերի։

Եւ ինչպէս որ Դաշնակցութեան խառնուած ազգայնականութիւնը զի գոհացնում հայ ժողովրդի պահանջը և միայն վաս է արտագրում, այնպէս էլ նրա խսանած ընկերվարութիւնը չի գոհացնում ամեննեին ընկերվարականներին և հաւասարապէս վասակար է յայտարարում։ Սա արգար պատիժ է բոլոր այն ստրեների համար, որ ուղում են միաժամանակ զեղանիկի երգը երգել, բայց՝ չյաջողուելուց բացի՝ կորցնում են և իրենց նախկին բնական երգեցողութեան շնորհը և անախորժ գառնում բոլոր ականջների համար։

Արդեօք թիւրքահայ գաշնակցականները կը մըռուննն այն տարօրինակ հակասութիւնը, որի մէջ հետզետեէ աւելի խոր էն միրճաւում նրանք, նոր սիրունիների հետեւ վազող վրենց առաջնորդներին հետեւելով և թիւրքահայութեան ծովացած արիւն ու արցունքը, նրա բաղձանքները, նրա ապագան թաղելով կեզծ, արուեստական ընկերվարութեան գաւաղիր ճահճին մէջ. արդեօք մէջանեղից կը վերացուի ազգայնական թիւրքահայութեան և ընկերվարական ուսուահայութեան այլանդակ ոիտորումը միմիւակ կուսակցութեան մէջ:

Դրա պատասխանը մենք չենք, որ պիտի տանք:
Մեր աւո յօդուածը վերջացնելու վրայ էինք,
երբ առիթ ունեցանք կարգալու «Հորիզոն»-ի օգոստ-
5-ի համարների մէջ Ա. Ահարօնեանի մի երկար զովա-
սանական յօդուածը, որ գրել է ազգերի ազատու-
թեան մասին և վերջացրել այսպէս. «Նախ՝ ազատ
և ինքնիշխան Հայրենիք...»:

Եկէք ու բան հասկացէք!:

«Աշխատաւոր» և «Հորիզոն», Վ. Տէր-Գրիգոր-
եան և Ահարօնեան, հակազդայնականութիւն.— Կ ազ-
գայնականութիւն ան թէ բնչ է Դաշնակցութիւնը:

«ՎԱՐՉԱՒԻԱՆԿԱ» ԵՒ ՌՄԲԱԿՈԾՈՒՄ

Մինչդեռ մի կողմից միացեալ կառավա-
րութիւն կազմող տարրերի մէջ այսպիսի բա-
նակախւներ էին լինում, միւս կողմից Խորհրդա-
յին իշխանութիւն կազմելու ընտրութիւններն

էին կատարւում թիւկունքում և ճակատում, եւ
կատարւած ընտրութեան հետեանքը՝ «Վարչա-
ւիանկա» կոչւած յեղափոխական երգով էին դպր-
դացնում,— երկրորդ կողմից թշնամու արձա-
կած թնդանօթային ուումքերն քաղաքի կենդ-
րոնական տեղերի վրայ ընկնելով՝ ան ու սար-
սափ էին տարածում ժողովրդի վրայ:—

Քաղաքի ոմբակոծութիւններից՝ աւելի ու-
ժեղն ու ահարեեկիչը օգոստոսի 26-ին ն. տ տեղի
ունեցածն էր. Օրը կիրակի էր և ժամը միշտ
12:— Հայոց մայր եկեղեցին լիքն էր ազօթա-
ւորների բազմութեամբ:

Իսկ քաղաքային ժողովարանի շինութեան
մէջ,— որին մարդիկ Բագւի Ամօլինի էին ան-
ւոնում,— 300 անդամներից բազկացած Խոր-
հրդային նոր իշխանութիւնը. իր նոր մինիս-
տրներով, առաջին հանդիսաւոր նիստն էր գու-
մարել՝ հանդիսաւորների հոծ բազմաթիւ ներ-
կայութեամբ:

Յանկարծ մի ուումբ հայոց եկեղեցու զան-
գատան մի մասը քանդելով՝ ահազին սարսափ
եւ վայնասուն ու իրաբանցում առաջ բերեց ա-
ղօթաւորների մէջ:— Երկրորդ ուումքը՝ Մի-
քայելեան կոչւած կենդրոնական մեծ փողոցի
վրայ ընկնելով՝ մազաղիններից մէկում մեծ
հրդեհ առաջացրեց:

Երբորդ ռումբը Սմօլնի վրայ ընկնելով՝
ժողովին նախագահող Սաքօ Սահակեանի ճառը
քերնումը կիսատ թողեց. ժողովականներից մի
քանիսին էլ վիրաւորեց ու սպանեց:—

Եւ ահա այդ օրւանից սկսեալ՝ յուսահա-
տութիւնը տիրեց ոչ միայն հասարակ մահկա-
նացուներին, այլ նա եւ քաղաքական ճառեր
արտասանողներին, եւ նոյն իսկ կարմիր բա-
նակի զեկավարներից շատ շատերին, որոնք
այժմ սկսեցին տրանջալ, որ Մարտիրոս Յա-
րութիւնեանի եւ Միքայէլ Արքումանեանի բե-
րած նամակը անուշադրութեան մատնեց:*)

*) Երբ տաճիկ զօրքերն Գանձակից դէպի Բա-
գու շարժւեցին՝ Թիֆլիսի Ազգային Խորհրդի կողմից
և նրա նամակով Բագու ուղերդեցին յիշեալ պարոն-
ները մէկ տաճիկ և երկու Ազրբէջանի սպաների ու-
ղեկցութեամբ: Ազգային Խորհուրդը յիշեալ պարոննե-
րին յանձնարարում էր համոզելու Բագւի հայ քաղա-
քական գործիչներին, որ «Հայ-Տաճկական» դաշնագ-
րի XI յօդւածի տրամադրութեան համաձայն, նրանք
հւոացնեն հայ զօրամասերն մեծամասնականներից, և
թոյլ տալ որ տաճիկները Բագուն Ազրբէջանական
կառավարութեանը յանձնեն:—

Մարտիրոսեանն ու Արքումանեանը՝ տաճիկ և
պարսիկ ուղեկիցներին առժամանակ՝ Գանձակ թողնե-
լով՝ իրանք հասան Քիւրդամիւր, ուր կանգնած էր
կարմիր բանակը: Ազգային Խորհրդի նամակը նրանք
յանձնեցին Համազասպին հաոցներու ում հարկն է:

Ժողովրդեան տագնապը աւելանում էր այն
օրերին և ժամերին, — երբեմն գիշերները, երբ
թշնամին քայլ առ քայլ մօտենում էր քաղաքին
և կարմիր բանակն ու Անգլիացիք զօրեղ կեր-
պով դիմադրում էին:—

Ռումբերի պայթիւնը, պուլիմեօնների
ճարճափենը և հրացանների համազարկերը եր-
կու կողմից՝ տոտիճանաբար մօտիկ տեղերից
էին լուռում: Ճակատի տարածութիւնը, որ սկզ-
բում 32 վերստ էր, հետզհետէ սեղմւելով 3-4
վերստի իջաւ, որովհետեւ թշնամին իր հեռաւոր,
բայց գերիշխող, ընախիր դիրքերից իջնելով օ-
դակում էր քաղաքը:

Լուեց ,և յետոյ ստուգւեց, որ Ազգային
Խորհրդի և Կաշնակցութեան կենդրոնական կո-
միտէտի անդամներն՝ իրանց զործերն, թղթե-
րըն՝ և իրանց աների արժէքաւոր իրեղէններն
նաւերն են փոխադրում:—

Ասում են որ Համազասպը նամակը յանձնել է
Շահումեանին, հետը Բագու տանելու և տեղոյն Ազ-
գային Խորհրդի պատասխանը Մարտիրոսեանին և Ար-
քումանեանին հազորգելու:—

Մինք չկարողացանք ստուգել թէ՝ Շահումեանը
յանձնեց արգեօք թէ ոչ նամակը: Այսքանս պարզւեց,
որ Բագւի Ազգային Խորհրդից վերոյիշեալ պարոն-
ները՝ որ և է պատասխան չսամանալով ձեռնունայն
յետ գարձան Թիֆլիս:

Սուսպենց նոխալէս, որ նաւամտառյանէրի և նաւերի վրայ իրաւասութիւն ունեցող դաշնակցական ջոջը՝ իր ազգականներին խորհուրդ է տալիս՝ կարելին փութով հեռանալ քաղաքից:*)

ՀԱԶԻՆՍԿՈՒ ՆԱՄԱԿԸ

Այս ծանր օրերից մի քանի օր առաջ Սլի Մարդան բէզ Թօփչիրաշովը՝ մի մամնաւոր նամակ է գրում իր իրաւաբան ընկեր Մարգիս Ղազարեանին և բարեկամական խորհուրդ է տալիս նրան որ, իբրհ Ազգային Խորհրդի անդամ, աշխատի իր ազգեցութիւնը դործ դնել քաղաքը առանց կուի յանձնելու աւելորդ և անսպասակ արիւնհեղութիւնից և բարդութիւնից խուսափած լինելու համար:

Մի և նոյն իմաստով Ազգբէջանի արտա-

*) Մի այլ դաշնակցական ջոջ՝ երկու շարաթ առաջ ինձ ասում էր, «որ ինքը Ազգային Խորհրդի յանձնարարութեամբ՝ մի քանի օրով էնզէլի է գնալու: Եւ այն գնալն էր, որ զնաց, ոչ թէ միայնակ, այլ ընտանիքով և տանը ունեցած արժէքաւոր իրեզէններով: «Ազրբէջան» թերթը (№ 5) յայտնում է որ միացեալ իշխանութեան և զաշնակցական կոմիտէտի նահանջելու դէպքի համար՝ Յ շաբաթ առաջ նաւեր էին պատրաստած:

քին գործերի մինիստր Հաջինսկին է զրուժ Գանձակից Ազգային Խորհրդին:

Թօփչիրաշովի նամակը մենք չունինք, իսկ Հաջինսկունը՝ արտատպում ենք «Արև»-ից: (*)

Յօդուած Բագւի հարցի խաղաղ լուծման, այլ և զիսաւորապէս հայ թըքական ընդհարման առաջն աւնելու նկատութիւնով՝ ևս Զեր անունով իր ժամանակին մի նամակ եմ ուղարկել: Նա բալաբէրը հաղորդեց ինձ Զեր բանաւոր պատասխանը, որ միւս օրը Զեր պատրիքակները կը լինեն շաբում: Մի ուրիշ նամակ՝ առաջարկութիւն Զեր ուղարկել է տաճկական գլխաւոր հրամանատարը: Բայց մինչև հիմա էլ պատասխան չունեմ: Պատճառները չգիտեմ: Զգիւտեմ ինչով է առաջնորդում Կոմիտէն և ինչի վրայ է յոյս գնում: Բայց իմ խղճի պարագը թերաղը է ինձ գործ դնել բոլոր ջանքերը և ասել հետեւալը—ինչ էլ որ լինի՝ Բագուն զէտք է զրաւեի: Ոչ մի ոյժ, լինի դա անզլիական, բօլշէկուտական, մենշէկուտական և այլն՝ չի կարող օգնել: Ինձ՝ որպէս Անզրկովկասեան Հանրապետութիւններից մէկի ներկայացուցչի, որպէս Բագւեցու՝ հետաքրքրում է ոչ միայն այդ հարցը, այլ հայերի և մուսուլմանների փոխ-

յարաբերութիւնների հարցը: Բոլոր մասցածներն Անդրկովկասի համար անցողական տարրեր են: Ժամանակ է սթափւելու: Դեռ ժամանակ և հնարաւորութիւն կայ հայ թրքական յարաբերութիւններն ուղղել դէպի այն հունը որով Նրանք ընտականօրէն պիտի հոսեն: Դեռ հնարաւորութիւն կայ հրգեհը կանգնեցնելու: 2է որ Ազրբէջանի այն հայկական կէտերն, որոնք դադարեցրել են արնահեղութիւնները և բարձրացրել սպիտակ զբոշակ՝ ապրում են և օգուտում լիտկատար անձեռնմխելիութեամբ: Գանձակը, Գեօկչայի, Արէշի և այլ գաւունների բոլոր գաղթականներին իրենց հարազատ տեղերը վերադարձնելն զրան ապացոյց են հանդիպանում:

Ես խնդրում եմ Զեղ ոչ թէ իբրհ թոյլ, այլ սեպհական կարողութեան լիտկատար զիտակցութեամբ՝ հասկանալ որ Զեր կողմից թուրքերի դէմ բանի ու թշնամական գործողութիւնների շարունակելը՝ Զեր շահերին չի համապատասխանում: Ես խնդրում եմ Զեղ հաւատալ, որ սպիտակ զրօշակ բարձրացնելը Զեղ կըտայնձեռնմխելիութեան և իրաւահաւասարութեան կատարեալ երաշխիքը: Թուրքերի փոքր ինչ առաջ դադարած կոտորածը, հասած տեղեկութիւնների համաձայն, վերսկսել է: Նրանց

կոտորում են դէպի Սուրախանի, Ռոմանի, Սաբունչի և այլն կայարանը տանող ճանապարհների վրայ:

Ես կատարեցի իմ պատմական պարտքը: Մնացածը Զեղնից է կախած: Ներեցէք ինձ նամակիս սրտաբաց տոնի համար և լնդունեցէք իմ լիակատար յարգանքների հաւասարիքները:*)
Արտաքին գործերի նախարար՝

Մ. Հացինսկի

*) Յոդ յօգւածի տակի ծանօթութիւնից երեսում է, որ սրանից առաջ մի այլ նամակ էլ է գրած եկել Հաջինսկին, որը սակայն Ազգային Խորհուրդը չէ ըստ իսկ այս նամակի առթիւ՝ Խորհրդի մէջ տեղի ունեցած խորհրդակցութեան ժամանակ մեծամասնութիւնը հակառակ է արտայայւել Հաջինսկու առաջարկութեանը, որութիւնը կը կատար իրաւասու չէ անջատ բանակցութիւն սկսելու, իսկ եթէ սկսեց, — գիլտատուրան իրաւունք կունենայ զրէժինզիր լինելու Հայերից, որոնք այսպիսով, երկու կրակի մէջ ընկած կը լինին: Փոքրամասնութիւնը առաջարկել է նախապէս բանակցել զիկդագուրայի հետ և ապա ուրոշում կայացնել Հաջինսկու նամակի մասին: Սակայն այն առաջարկն էլ չէ անցել: — Այսպիսով Հաջինսկու պատասխան չէ արւած:

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆ

Արովինետե Հաջինսկու նամակը՝ արդիւնք չունեցաւ, ուստի թշնամին պաշտօնական բանակցութեան մէջ մատաւ:

Մի օր Գերմաներէն հետեւալ գրութիւնն ստացւեց Ազգային Խորհրդի անունով՝ ստորագրութեամբ՝ գերմանական Օրեք—Լէյտենանդ Պարակինի:

«Բագուի հանդէս գտնւած գերմանական շտագից, որպէս նրա մեծաւորը, ևս զալիս եմ բանալցել՝ քաղաքի առանց կուի յանձնելու հնարաւորութեան մասին:

Մեր անկեղծ ցանկութիւնն է որ աւելորդ արիւնհեղութիւն չլինի:— Մեզ յայտնի է, որ Հայերդ աաճիկներին ատում էք: Դրա համար մէնք գերմանացիներս եկանք, որպէս զի Զեզ վստահացնենք, որ եթէ դուք Բագուն կը յանձնէք, — ձեր դէմ ոչ մի անարդար և չար գործողութիւն չի կատարեւի: Հայերի կեանքը, դոյցը և ազատութիւնը անձեռնմխելի կմնայ: Զերգէնքերը ձեր ձեռքում կմնան, եթէ որ քաղաքում որ և է անկարգութիւն չյառաջացնէք:

Մենք չնորհակալ ենք Հայերից, որ նրանք ժամանակին նախազգուշացրին և Բագուից հեռանալու հնարաւորութիւն աւին մեր հպա-

տակներին, — պլ. Պեղլէին և նրա մօտ եղողներին, այն ժամանակ երբ նրանց կեանքին այդտեղ վատանդ էր սպառնում: Ուստի մենք մեզ պարտաւոր ենք զգում ձեզ օգնելու: —

Արդ՝ եթէ որ այդ նաւթային քաղաքը չկամեցաք անվաս և առանց կուի յանձնելու՝ մեզ ամէնքիս նրանից օգտւելու համար՝ այն ժամանակ պէտք է կուենք:

Հայերի կեանքը ու դոյցը պիտի փչանայ: Եւ կը փչանայ:

Բայց դիացած եղիք, որ այդպիսով գուք ոչ հայկական քաղաքականութիւն կանէք, ոչ էլ սուսական, այլ միմիայն անզլիական:

Հայոց Հասարակագետութիւնը այս բանն հայկացաւ և Գերմանիայի հետ բարեկամական յարաբերութեան ձեռնարկեց:

Գերմանիան Տաճկաստանի համաձայնութիւնն արդէն ստացել է, որ այնտեղից այս կողմէրն փախչող հայերն անարգել վերագառնան իրանց հայրենիքը:

Մենք ձեզանից միայն այս ենք պահանջում:

1. Բագուն առանց քանդելու և աւերելու մեզ յանձնելու և մեզ թոյլ տալու, որ նրանաւթից օգտւենք:

2. Հաշտութիւն և բարեկամութիւն:

Դրա փոխարէն մենք ձեզ խոստանում ենք,

1. Որ Բաղւում թուրք զօրքեր չը մտնին, և
եթէ դուք ցանկանում էք Բագւի բոլոր ճանա-
պարհներն և անցքերն կարող են բռնւել Գեր-
մանական պահապան զօրքերով:

2. Քաղաքի բոլոր բնակիչների կեանքը,
դոյքը և ազատութիւնը անձեռմիելի կը մնան:

3. Քաղաքի ոմբակոծութեանը վերջ կտրւի.

4. Մեր փակած ջրանցքի ճանապարհը իս-
կոյն և եթ կը բացւի:

Մենք ձեզ խնդրում ենք զբարերիս միջո-
ցաւ պատասխանել թէ Երբ մենք կարող կը
լինինք ձեզ հետ տեսնել Խրդալանի և Բալա-
ջարիի մէջ եղած չէզօք մի վայրում և մեր
առաջարկած պայմանների մասին բանակ-
ցելու: Մեր կողմից կուգան Յ գերմանական և
Յ տաճիկ սպաներ առանց որ և է պահապանի:

Մենք շատ գոհ կը մնայինք ձեզանից, եթէ
մերոնց դիմաւորէին այնպիսի հայեր և ոսներ,
որոնք Գերմաններէն և Տաճկերէն իմանային խօ-
սել:

Եթէ որ մեր առաջարկութիւնը մերժեցիք,
— այդ դէպքում բոլոր պատասխանաւութիւնը
ձեզ վրայ է ընկնում: Որովհետեւ զրանով ապա-
ցուցած կը լինիք, որ հակառակ Հայոց Հասարա-
կապետութեան մատգրութեանը՝ դուք, Անզի-

այի հրամանով, ուզումէք հայկական և ոռուա-
կան արիւն վոթել»:

ՏԱՃԿԱՑ ՇՏԱԲԻ ՆԱՄԱԿԸ

Պարակվինի վերոյիշեալ նամակի հետ՝ մի
այլ նամակ էլ տաճկաց շտաբի մեծաւորն էր
ուղարկել Հայոց Ազգային Խորհրդին:

Ահա թարգմանութիւնը և այդ նամակի,
որ լրացումն և պարզաբանութիւն է նախկինի:

«Որպէս զի թուրքերի և Հայերի մէջ ա-
նօգուտ արիւնհեղութեան չլինի՝ յանուն մարդ-
կութեան՝ հետեւեալ պայմաններն եմ ձեզ տռա-
ջորկում:

Երկար տարիներ Հայերի և թուրքերի մէջ
եղած որդիական և հայրական հին բարեկամու-
թիւնը նորոգած կը լինիք, եթէ որ առանց
արունեղութեան Բագուն յանձնէք:

Այն ժամանակ կը վայելէք մեր անվերջ
նորհքն ու բարութիւնը: —

Վստահ եղէք, որ հայերի հետ մենք աւե-
լի լաւ կը վարւենք: Ոչ ոք ձեռք չի տալ ձեր
իրաւունքներին, ձեր գոյքին ու ձեր կեանքին: —
Գուրք մեզանից մարդագարի վարմունք կը զըտ-
նէք: —

Միանգամայն ձեզ ապահովելու համար՝
քաղաքի հայկական թաղերն մենք կընդունենք
զինւորական պահապանների, — սպաների և
պահակների հսկողութեան առել:

Դաշնակիցները այսինքն՝ Գերմանիան,
Աւստրիան — Հունգարիան և Տաճկաստանը ցան-
կանում են Հայերին հետ բարեկամ լինել և
բարեկամական յարաբերութիւն ունենալ — Ար-
պէս զի գուշ այս մասին կասկած չունենաք,
հետեւալ օրինակը յիշեմ: Ձեզ արգէն յայտնի
է որ Դաշնակիցների և Երևանի Հայոց հասա-
րակապետութեան մէջ քաղաքական բարեկա-
մական կեանք գոյութիւն ունի: — Աւստի ըն-
դունեցէք մեր անկեղծ խօսքըն և պայմանները,
որոյ առաջին պատրերութիւնը քաղաքի յանձ-
նելուն է վերաբերում: — Եթէ մեր պայման-
ները կընդունէք, ուղարկեցէք ձեր պատգամա-
ւորներին բանակցելու մեր վեց սպաների հետ
Խրդականի և Բելաջարի մէջտեղում: Եթէ ցան-
կանում էք ձեր պատգամաւորների հետ կարող
էք Բաղւի Շվետական հիւղատոսին ևս ուղար-
կել: Իսկ եթէ չընդունէք մեր այս մարդասի-
րական սիրալիք առաջարկութիւնները, — այն
ժամանակ թող Աստուած մեզ պատասխանառու
չհամարէ թափւելիք արեան և ընտանիքների
քայլայման համար: — Այսուհետեւ ամենասակ

բարոյական և նիւթական պատասխանառութիւ-
նը կընկնի Հայերի վրայ, և մանաւանդ ձեր Ազ-
գային Խորհրդի վրայ: — եւ այնուհետեւ ակն-
յայտնի կը լինի, որ Հայերը ոչ ազգային և ոչ
էլ քաղաքական նախատակի չեն ծառցում, այլ
միմիայն Անգլիական քաղաքականութեանն են
օդնում:

Կատարեալ յարգանքով և սիրով մնում,
(Սուրագրութիւն).

ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ:

Այս նախակներին Ազգային Խորհուրդի նա-
խագահ Աբրահամ Գիւլիսանդանեանը հետեւալ
պատասխանը տւեց:

,,Վերջին ժամանկներս մենք ստացմաք ձեզա-
նից նամակները քաղաքը առանց կուի յանձնե-
լու՝ հաւասարացնելով որ այդ գէպքում քա-
զաքի բոլոր բնակչների, և մասնաւորապէս
հայերի, կեանքն ու գոյքը ակահոված կը լինի:

Մենք բնաւ չենք կասկածել, որ քաղաքի
խաղաղ բնակիչներից ամէն ազգի կեանքն ու
գոյքը թշնամին պիտի ապահովէ, և վատահ ենք
որ ձեր զօրքերը այս գէպքում չեն խանգարել
պատերազմում ընդունւած այս ընդհանուր կա-
նոնը: — Աւստի և մեզ համար անբացարելի

Է ձեր սպառնալիքը ջնջելու Հայ բնակչութիւնը, մինչդեռ պատերազմի կանոններով, քաղաքի բոլոր ազգաբնակչութիւնը առանց բացառութեան իրաւունք ունի թշնամու պահպանութեանը, այլ ոչ նրա մի մասը միայն:

Մեզ համար անհասկունալի է նմանապէս ձեր մշտական դիմումը Հայերին: Անկարելի է որ դուք չիմւնաք, որ դուք պատերազմ մզումէք մուսէիայի դէմ յանձին տեղտկան ուսւ իշխանութեան, և թէ՝ ներկայ տարւայ Ապրիլ ամսից Հայոց Ազգային Խորհուրդը զինւորական զօրամասեր չունի, իսկ քաղաքի Հայ ազգաբնակչութիւնը, միւս ազգաբնակչութեան հետ միասին, իր քաղաքացիական պարտքէ-կատարում:—

Վերաբերութեամբ ձեր այն ցուցմանը (պ. Հաջինսկու նամակին) թէ Հայերը մահմետականներին նեղացնում են, — հաւատացած եղէք որ Հայոց Ազգային Խորհուրդը և բոլոր հայկական քաղաքական և հասարակական կազմակերպութիւնները միանգաւայն անկեղծօրէն ցանկանում են տեղական մահմետականների հետ կատարեալ բարեկամութեամբ ապրել, և միշտ գտատապարտում են մահմետականների վրայ եղած բանութիւնը, և բացարձակօրէն կռւել են դրա դէմ: Շատ ժամանակ չէ

անցել որ Ազգային Խորհուրդը դիմելով իշխանութեանը՝ ինդը ից ամենախիստ միջոցներով կռւել եղած բանութիւնների դէմ: (*)

Միաժամանակ մենք խստիւ բոլորում ենք այն անձիշտ խօսքի դէմ, որ կայ նամակի ուսւսերէն թարգմանութեան մէջ իբրև թէ Հայերը «ատելութիւն ունին թուրքերի դէմ»:— Մենք հանդիսաւոր կերպով յայտարարում ենք, որ ոչինք ատելութիւն չունենք դէպի թուրքերը և առհասարակ դէպի մահմետականութիւնը:— Մենք միշտ որոշել ենք կառավարիչ շրջանների քաղաքական արամազրութիւնները՝ ազդի իրան արածագրութիւնից:

Ձեր սպառնալիքը Բագւի հայ ազգաբնակութիւնը ջնջելու, — պատերազմական սովորութիւնների մէջ չլուած մի ակտ է, որի դէմ մենք բացարձակօրէն բողոքում ենք ամբողջ լուսաւոր աշխարհի առաջ»:—

Եւ, արդարե, պ. Գիւլիանգանները մի այդպիսի բողոքագիր ներկայացրեց Եւրոպայի կենդրօնական իշխանութեան Բագուի հիւպա-

*) Արդարե Ազգային Խորհուրդը մի այդպիսի բողոքով դիմել է կարմիր բանակի գլխաւոր հրամանատարին և Ցենտրո-Կասպիի դիկտատուրային (տես «Вперед» դաշնակցական ուսւական օրգանը 1918 թ. № 33):

առաներին, ինպրելով որ նրանք այդ բողոքը հասցնեն ի լուր իրանց կառավարութիւններին:

ՄՈՒՐՍԵԼԻ ՈՒԼՏԻՄԱՏՈՒՄԸ

Տեսնելով Բագրի գիմազրութիւնը և Հայոց Ազգային Խորհրդի անբաւարժար պատասխանը՝ Օսմաննեան բանակի գլխաւոր հրամանատար Մուրսէլ փաշան հետեւեալ ուլախիմատումը ուղղեց երկու ծրարով՝ մէկը կարմիր բանակի հրամանատարին, — գնդապետ Աւետիսեանին, Հիւսը Հայոց Ազգային Խորհրդի նախագահին.

Առաջ ենք բերում այստեղ այս փաստաթղթի թարգմանութիւնը:

«Չեզ, ի հարկէ, յայտնի է, որ Բագրի գէմ գործում է Օտոմաննեան զօրքը: Եթէ դուք համաձայնէք քաղաքը յանձնել առանց կուի, այդ գէպքում թոյլ կը տրւի և կապահովի Չեր երթն անարգել կերպով Բագրից Հայաստան, եթէ, իհարկէ, դուք նոյնպէս կը ցանկանաք: Իսկ եթէ քաղաքը չյանձնուի, նա յատենայն գէպս պիտի վերցնուի, բայց այն ժամանակ թափած արինի և առաջացած վնասների ամբողջ պատասխանատութիւնը կընկնի ձեզ վրայ: Եթէ դուք համաձայն էք քաղաքը յանձնել, ինպրում եմ ձեզ անյապող պատասխանել ձեր ներկայացուցիչներին:

Առուազրութիւն.

Բնթերցողը տեսնում է, որ Մուրսէլի թղթում Դաշնակցութեան մասին խօսք կամ ակնարկ անգամ չկայ, և թուղթը նրա հասցեին չէ ուղղած: Սակայն Դաշնակցութիւնը իր սովորական ցուցամոլութեամբ, վերկացաւեիր օրգանում հետեւեալ «պատասխանը» հրատարակեց «Ալգ առաջարկութեան առթիւ Հ. Յ. Դաշնակցութեան կօմիտէն որոշել է, — ոչ մի բանակցութեան մէջ չմտնել տաճկական զօրքի հրամանատարի հետ և շարունակել սկսած պատերազմը մինչև վերջը, և թողնել անհետեանք վերի բերած առաջարկը»—

— «Այսպիսի որոշումն են կայացրել, — շարունակում է Դաշնակցութեան կօմիտէն, — Բագրի այժմեան իշխանութիւնը — Ցենարօ — Կասպի Դիկատուրան և ժամանակաւոր գործադիր կօմիտէի նախագահութիւնը»:—

«— Նման որոշում է կայացրել նաև Բագրի Ազգային ժողովը:*)

ԽՍԻՏՈՐ ՌԱՄԻՇԻՒԼԻՒ ՆԱՄԱԿԸ

Այդ միջոցին Վրաստանի ներքին գործոց մինիստր Ռամիշվիլին կարեկցարար միջամտեց, ուստի և նախապէս Հայոց Ազգային Խորհրդի

*) «Արև» 1918 թ. № 155

բազու գալ, թէ ոչ Սպասում է պատասխանիք Աղքաբէջանի կառավարութեանը։ Սակայն վերջինս էր նախկին լեզուն փոխած՝ հետեւալ պատասխան էր տուել, որ Թումիշիլին հաղորդեց Բագւի գիլտատուրային սեպտեմբեր 5 թւակիր (նոր տուժար) անթել հեռագրով»։ Հաղորդում եմ Աղքաբէջանի կառավարութեան ներկայացուցիչներ Զաֆարովի և Մելիք—Ասլանովի ինձ յայտնած միջնորդութեան պայմանները, որոնց համաձայն է տաճկական զլիաւոր հրամանատարութիւնը։

1§ Անպայման ճանաչել Աղքաբէջանի կառավարութիւնը։

2. Քաղաքի, գործարանների և բոլոր պետական ու հասարակական սեփհականութիւնների անվաս յանձնումը։

3. Բոլոր գէնքերի յանձնումը։

4. Աղքաբէջանի կառավարութիւնն իր կողմից երաշխաւորում է քաղաքացիների սեփականութիւնը և անձի անձեռամբելիութիւնը. քոլոր ցանկացողներին թոյլ է տրւում քաղաքից հեռանալ։

Այս պայմանների քննութիւնն առնելուց յետոյ, խնդրում եմ, շուտով ինձ հաղորդէք ձեր կարծէքը, թէ պատիրակութիւնը կար՞ո՞լ է

իսկորոշութիւններ վարել։

Իսկդոր Ռամիշիիի։

Օսմաննեան բանակի զլիաւոր հրամանատարի ուլումիտատումն թշնամու թուլութեան և անզօրութեան ապացոյց համարելով՝ Բագւի տեղական իշխանութիւնը և Հ. Յ. Դաշնակցութիւը սկսեցին իրանց կարմիր բանակը ողենորել իրանց պոստախօս կոչերով, իրանց բանատեղծական, ճարտասահական զառանցանքներով, որոց մէջ շատ աչքի էր ընկնում մասնաւանդ «Արե»-ի աշխատակից, ոմն Թանատոսի յօդւածներն։

Ոչ ոք չկամեցաւ հասկանալ, որ եթէ թշնամին քաղաքը չէ ուժակոծում, այդ նրանից է, որ չէ կամենում Աղքաբէջանի հասարակապետութեան սեփհականութիւնը կազմող «զեղեցիկ և հարուս խղախ» քարուքանդ անել, Փչացնել ինչպէս որ կարմիր բանակի զլիաւոր հրամանատարին ուղղած թղթումը շեշտուած էն ընդգծածս այս երեք բառերն։

Սակայն այսպիսի հետեւողութիւն այդ բաներից չկարողացան կամ չկամեցան հանել մարդիկ, և զու տւին իրանց ընթացքին։— Ոյն-

պէս որ թշնամին՝ հաշտութիւնից իր յոյսը
կտրած՝ սկսեց շարժիլ:—

ՏԱԳՆԱՊԱԼԻՑ ՕՐԸ

Օգոստոսի 31-ին քաղաքի ոմբակոծութիւնը այնպիսի սարսափ ձգեց ազգաբնակութեան վրայ, որ նա այլ ես ինքնիրան կորցրեց: Անդիմական գորքեր ու ռազմամթերք կրող աւատօմօրիներն սկսեցին՝ սովորականից շատ երթեւեկել: Ժողովրդի վրայ ճնշիչ ազգեցութիւն գործեցին մանաւանդ բեսնակիր և աւտոմօրիլով ռազմաբեմից քաղաք բերւած անզլիացի վիրաւորւած զինւորներն, որոց թւում երկու հոգի էլ գթութեան վիրաւորւած քոյրեր կային:—

Բեսնակիր ա-տամօրիլի ետևից՝ հետզհետէ քաղաք էին բերւում պատգարակներով և հայ վիրաւորւած զինւորներ:—

Դրանց տեսնելով՝ փողոցներում սուերակերպ անցուգարձ անողներից, մանաւանդ կտնանց ազիսզորմ հասաչանքներն ու ճղճոցները՝ ամենասառնարիւն մարդու աչքերիցն անդամ արտասունք էին հոսեցնում:

Ժողովրդեան տագնատն ու իրարանցումը աւելի սաստկացաւ երբ հետևեալ շարաթ օրը, սեպտեմբերի 1-ին, Դաշնակցական զինւորներն

խումբ խումբ ամեն մի թաղի տներն մտնելով՝ բռնութեամբ գուրս էին քաշում տղամարդկանց և տնում Դաշնակցութեան կենդրոնական բիւրօն այնտեղ զինելու և ռազմաբեմ ուղարկելու համար:—

Նոյն բռնութիւնները, և աւելի խիստ կերպով, զինւորները գործազրում էին փողոցներով անցուգարձ անող հայ տղամարդկանց վրայ՝ տռանց հասակի խտրութեան:—

Դաշնակցական զինւորներից յետոյ՝ փողոցներում յանկարծ դերասան Մըէլեանի երբոխտ ձայնը լսւեց, որով յորդորում էր ժողովրդին՝ գուրս գալով տներից՝ ռազմաբէմ շատապել վիրակելու համար իրանց ընտանիքի կեանքը, պատիւր, գոյքը և այլն:

Դժբաղգաբար յարգելի գեսարանի բարի նպատակը չարգարացաւ, և թերես աւելի սաստկացրեց ժողովրդեան երկիւղն ու յուստիատութիւնը:

ԱՆԳԼԻԱՑԻՆԵՐԻ ՓԱԽՈՒՍԾԸ

Հայ ժողովրդի հոգեկան դրութիւնը, նրա տոպինապը, նրա բարձրացրած վայնասունը իր գագաթնակէտին հասաւ նոյն շաբաթ օրւայ երեկոյին՝ երբ անզլիական զօրքերը ժամը 6-ին

իրանց գիրքերը թողած, շտապ շտապ, քաղաք
էին կրում և դէպի ծովափը փութացնում իրանց
թնդանօթները, սազմամթերքը, կենսամթերքը
ու պայուսակները և նաւերի վրայ գետեղում:
Դալով իրանց ջորիներին, աւտոմօբիլներին և
սաւառնակներին,—նրանց մի մասին փչացրին,
միւս մասին ծովափում թողին:—

Այս ամէնը տեսնելով՝ հայկական թաղե-
րում, կարելի է ասել, այլ ևս մարդ չմնաց:
Տղամարդ, կնիկարմատ, երեխայ մի մի կտաղոց
շալակած՝ շնչասպառ ծովափն էին փաղում:
Դրանց ետքեից՝ աղիողորմ արտասունքներով՝
վազ են տալիս Շամախուոյ և Գեօքչայի գա-
ւառների այն փախստականներն, որոնք կի-
սամերկ, կենսակենդան գեղում ու վխտում էին
ցարդ քաղաքի փողոցների անկիւններում ու
նրապարակներում: Միանգամայն իրանց գլուխը
կորցրած այս ամբախից՝ մարդիկ, մանաւանդ
կնանիք և երեխաներ, շարունակ սայթաքում,
վայր են ընկնում, ուշաթափ լինում, և ետ-
քեից ճղտողների ոտքերի տակը մնալով՝ է որ
վիրաւորը են և է որ մահանում:— Մահա-
ցութիւն պատճառում էին մահաւանդ թշնամու
կողմից նետած շոապնելներն, որոց հէնց մի-
այն ձայնը՝ զարհուրելի սոսկում և իրարան-
ցում էր առաջ բերում:—

Ամբոխին յետ հրելով՝ երբեմն էլ նրանց
ակառայից կոխ տալով՝ անդաղար զնում գա-
լիս են մի քանի բեռնակիր աւտոմօբիլներ:
Դրանք Ազգային Խորհրդի և Դաշնակցութեան
կենդրոնական և թաղական կոմիտէտների սեպ-
հականութիւններն են կրում նաւերում գետե-
գելու համար:

Աւտոմօբիլներով ծովափն են տանում նա
և որբերից առողջներին, հիւանդներին և թու-
լակաղմներին Աստծոյ կամքին թողնելով:*)

Որբերի համար յատկացրած շոգենաւում
տեղաւորում են նա և քաղաքական գործիչնե-
րի կնանիքը իրրել զթութեան քոյլեր:—

ԾՈՎՀԻ ԱՓԻՆ

Գիշերւայ ժամը 10 է: Ծովափում խորհ-
ւած հազարաւոր մարդիկ սպասում են, որ
թոյլ տրւի իրանց նաւերի մէջ մտնելու:

Մտնել... բայց ի՞նչպէս:

Զինոր պահապաններն, շար ի շար, կան-
գնած են նաւամատոյցների վրայ, նաւերի վրայ

*) Դրանք թւով 45 հոգի էին, որոց խճամատա-
րութիւնը յանձն առան մի քանի հայ և ոսւս մարդիկ
և մի կերպ պահպանեցին, մինչեւ որբանոցների բաց-
ւելն:— Բայց մինչև այդ՝ որբերի մեծ մասը մեռաւ:

և բացի զինւորներից ու նրանց ընտանիքներից, Արքեթի նաև ազգականներից, ոչ ոքին ներս չեն թողնում: Դիմադրողներն ու գրոհ տւողներն հրացանների կոթերի հարւածներով յետ են մղում: Այդպիսիներից ծովն ընկնող և խեղաւողներ էլ եղան:

Եղան շատ դէպքեր, երբ կինը նաւ մտաւ, իսկ ամուսինը դրսում մնաց, և ընդհակառակը: Եղան դէպքեր, երբ մայրը նաւ մտաւ, որդին՝ դրսում մնաց, և ընդհակառակը:

Աղաղակ, լաց, աղաչանք, աղերսանք, հայհոյանք, սպառնանք և այն ամէն մի նաւամատոյցի շուրջը, ամէն մի նաւի վրայ, ամբողջ ծովափի վրայ:

Ամէն մի զինւորական գունդ իր յատուկ նաւն ունի: Իրանց յատուկ նաւերն ունին նաև դրանց մեծաւորները, որոց համար նաւ են տարւել նաև երկու ֆայտօն՝ իրանց ձիերով:*) Ականատեմներն պատմում են, որ 3 բրիգադայի

*) Դաշնակցական զինւորների ֆախուսալ՝ հայամբուը սաստիկ դատապարտում էր և հիմայ էլ դատապարտում է: Աւելորդ է ասելն՝ որ այդ դատապարտութիւնը անտեղի է, և նոյն իսկ դատապարտելիք այդ օրերում Դաշնակցութիւնը մի խելացի բան եթէ այդ օրերում Դաշնակցութիւնը մի խելացի բան՝ գա հէնց իր զօրքերի ազատելն էր անխուսափելի կոտորածից:

Հրամանատար Համազասպը՝ ծովափում խըռաւած ամբոխին խաղաղացնելու համար՝ բարձր ձայնով աղաղակելիս է եղել՝ «Այ ժողովուրդ, այ սիրելիք, այս նաւերն միմիայն զինւորների համար են իսկ ձեզ համար Սև քաղաքում յատուկ նաւեր կան, փութացէք այնտեղ»:

Ամբոխը գրոհ է տալիս դէպի Սև քաղաքի նաւամատոյցներն՝ մթութեան մէջ միմիանց ձկտեյով միմիսնց կոխ տալով և թշնամոյ արձակած ոռումքերից առատապէս հնձւելով ճանապարհին: Սև քաղաքում, արդարե, մի քանի նաւեր եղել են ժողովրդի համար: Սակայն բանք ժամեր առաջ բռնւած են եղել ընտրեալների կողմից:— Այնպէս որ վերջին գնացողներն յուսակտուր և յուսահատ՝ այլ ևս հնարաւորութիւն չունենալով քաղաք յետ դառնալու շտապում են Սև ու Սպիտակ քաղաքների գործարանների բակերն, գիշերն այնտեղերում անցկացնելու համար:—

Սակայն այդ ժամանակ վրայ են տալիս՝ հարեան զիւղերի թաթարներն և բոլորին էլ կողոպտում փառաւորապէս, շատերին վիրաւորում ու սպանում, մի քանի կանանց ուր օրի-

օրգների բոնաբարում, ուժանց էլ դերի վերց-
նում հետները տանում:*)

ՄԹՈՒԹԵԱՆ ՄԷԶ

Ստանիսլաւեան փողոցի բնակաբանիս պա-
տուհանի առաջ մթութեան մէջ, նոտած՝ և ո-
երեմն ծովափներից իրանց բրիչակ աներն
գարձող ժողովրդի ազէկտուր լոցերն ու
ողբերն էի լսում և երբեմն ուռմբերի և
պուլեմեօաների ձայներից թշնամուն քաղաքին
մերձենալու տարածութիւնն էի չտփում հն-
թաղբարալ:

Ժամը 11-ին յանկարծ մի քանի հեծեալ
հայ զինւորներ դէպի սազմաբեմ են շտապում
զարհուրելի հայհոյութիւններ ուղղելով Ազգա-
յին Խորհրդի և Դաշնակցութեան բիւրօնի հաս-
ցէներին:

*) Սկ քաղաքի հիւանդանոցի վարչութիւնը յան-
ձին բժիշկ Միքայէլ Անդրէասեան Տէր Միքայէլեանցի,
3000-ից աւելի մարդ ազատեց այդ գիշեր հիւանդա-
նոցի որաններում և բակերում նրանց տեղաւորելով:
Իսկ ծնողներից զրկւած 54 որբուկներին մի քանի
շաբաթ աւելի պահեց ու կերակրեց, մինչև որբանո-
ցի բացւելն Մարդասիրական ընկերութեան շինութիւ-
նում, ուր այսօր 500 որբեր են պատուպարւած:

Խնդրեցի, կանգ տռան, մյ աղերք, ինչք
էք հայհոյում, ինչ է պատահել, հարցըի:
— Ել ի՞նչ պիտի պատահի. երկու ժամից ի
վեր հետախոսով օգնութիւն ենք խնդրել, պա-
տասխան չենք ստացել, զինւորներ ենք ուզար-
կել, նրանց չեն տեսել, չեն դտել: Հիմի ինք-
ներս գալով ստուգեցինք որ մեր զեկավարնե-
րըն թողել փախել են առանց զոնէ մեզ իմաց
տալու ճակատում, ուր մենք բոլորովին ուժաս-
պառ եղած՝ անդադար կոտորւումենք:

Իմ հարցմանը թէ թշնամին մտաղրութիւնն
ցորդ է տոլիս գիշերս քաղաք մտնելու,
զինւորներն պատասխանեցին՝ հազիւ թէ որով-
հեակ մեր յամառ զիմաղրութիւնը տեսնելով
և մթութեան պատճառով մեզ տեսնելու անկա-
րող լինելով՝ թշնամին ենթազրում է որ մենք
շատոր ենք, մինչզես մեր թիւը հազիւ երկու
երեք հարիւը հոգու է հասնում:—

— Ո՞վ է ձեր մեծաւորը:

Ոչ մի մեծաւոր չէ մնացել, բոլորն էլ՝ ան-
հետացել փախել են:—

— Ուրեմն այժմ դուք ոչ մի զեկավար չու-
նի՞ք:

— Մի հայ կամիսար Միքայէլ եւանգուլ-
եան ինքնազլուխ եկել և մեզ զեկավար է գար-
ձել և պետք է ասած նու է որ մեզ պահում է:

Այժմ դուք ինչ մտադիր եք անել:—

Մինչև լոյս ուզում ենք թշնամուն պահել, իսկ այսուհետեւ, եթէ ողջ մնացինք, մենք ել քաղաք կշտապենք մեր գլխի ճարն տեսնելու:—

Տէր հայր, օրհնիր մեզ և աղօթիր մեզ համար,—ասացին զինւորներն ու հեռացան:—

Մի քանի օր յետոյ ես ստուգեցի, որ Սալիանի կազարմաների շուրջն ես մի խումբ զինւորներ կուելիս են եղել, մինչև իսկ $1\frac{1}{2}$ վերստ առաջ են անցել գէպի թշնամու դիրքը, բայց առասօտեան լուսաբացին տեսնելով որ միւս մօտակայ զիրքերում՝ ոչ մի զինւոր չէ երեսում և թշնամին արդէն իրանց թիկունքն է անցել, աճապարել, դարձել են քաղաք և մի բարժայի վրայ նոտելով հեռացել են քաղաքից:

Մի քանի անձինք ինձ պատմեցին, որ տաճիկները պատրաստելիս են եղել թողնել Բագրի պաշարումը և հեռանալ:

Այդ պարոնների ինձ հաղորդածներն հաստատեց ինժեներ Միքայէլ Եւանգուլեանցը, որ, ինչպէս յիշել ենք, այդ գիշերը ինքնարերաբար զեկավարելիս է եղել ճակտում մնացած սակաւաթիւ հայ զինւորներին: Պարոնը այս կաւալիսնեց, որ տաճիկների բեռնակիր սայլերն

արդէն ճանապարհ էին ընկել դէպի Գանձակ, և զօրքը պատրաստում էր նոյնպէս հեռանալ, եթէ Բագուից ազգաբարութիւն եղաւ, թէ արդէն Անգլիացիք և հայ զօրքերն թողնում են քաղաքը:— Բեռնակիր սայլերն իսկոյն և եթ յետ կանչւեցին:

Պ. Եւանգուլեանցը այս հս աւելացրեց, որ այդ առթիւ՝ նա ինքո ի պաշտօնէ տեղեկագիր է ներկայացրել Բիշերախովին:—

Ի վերայ այսը ամենայնի, — ես կարծում եմ, որ ինչպէս միւսները՝ նմանապէս և ինժ. Եւանգուլեանցը սխաղում են: Բրովինետի մի արժանաւատ վկայութիւն ես կայ մէջտեղում թէ Անգլիացիների փախստեան բուն պատճառն այն է, որ նրանք ճշտիւ ստուգեցին որ Բաթումից՝ Թիֆլիսի գրայով՝ նոր ոյժ են ստացել տաճիկները փակ վագոններով և դիշերժամանակ:

ԱՆԳԼԻԱՑԻՆԵՐԻ ՓԱԽՍՏԵԱՆ ՊԱՏՃԱՌԸ

Աչքերս մի բոպէ շուռ տանք այս աղեխարշ տեսարաններից և տեսնենք թէ ինչ պատճառով փախստ Անգլիացիք:—

Բազու հասնելից շատ չանցած՝ նրանք ականատես եղան շատ ու շատ դէպերի, որոնց

ցից հետեւացրին թէ իրանք սխալւած են եղել Քաղուի կարմիր բանակի վրայ յոյս գնելով. թէ՝ այդ բանակը իր անկազմակերպ, և նոյն իսկ լուծւած վիճակով, իր դասալքութեամբ, իր տարրական պարտականութեան անդիտակցութեամբ, մարդկային մի զանգւած է:—

Անգլիացիների այս գժգոհութիւնը մի քանի անգամ ակնարկեցին քաղաքի Ռուսաց և Հայոց «Արև» թերթերը:

Լաւ յիշում եմ Անգլիացիների բարզան Արշակ Սաֆրաստեանի «Արև»-ի մի յօդւածը, ուր նա զգուշացնում էր կարմիր բանակին, որ եթէ մի քանի անգամ տեղի ունեցած «րիւրիւնցուրիններն» կրկնւին, — Անգլիացիք մեզանից երես կը գաբձնեն:

Սակայն կարմիր բանակից աւելի մի անգամնելի ուժ էլ կար Անգլիացիների հանգէպ: Դա նաւատորմիդն էր:

Կասպից ծովի նաւատորմիզը ամբողջապէս ոռւս նաւաստիների ձեռին էր, եւ գեկտատուրան, իր սկզբնական շրջանում, բացառապէս նաւաստիներից էր կազմւած: Անգլիացիներին յայտնի էր, որ այդ նաւատորմիզը փոփոխամտութեան մի քանի օրինակներ ցոյց տեսց՝ երբեմն մեծամասնականներին պաշտպանելով եւ երբեմն նրանց հակառակորդներին:

Ճիշտ է Անգլիացիներին Բագու հրաւիրողը ի պաշտօնէ այդ դիկտատուրան էր, բայց մէջտեղում ոչ մի երաշխաւորութիւն չկար թէ նաւատորմիզը մինչեւ վերջը Անգլիացիներին կուսակից կը մնայ, եւ չի սխարի, կամ չի խափսի թշնամուն Բագուում ունեցած գործակալներից եւ չի շլ շլանայ նըանցով:—

Ուստի Անգլիացիք մի քանի գիպլոմատիք փորձեր արին նաւատորմիզն իրանց իրաւասութեան տակ վերցնելու, բայց փորձերն անյաջող անցան: Կար եւ երրորդ պատճառ, ոչ նւազ քան առաջնները նշանաւոր:

Անգլիացիք անկարող գտնւեցին Միջագետքից հարկաւոր քանակութեամբ ուազմամթերք բերել ճանապարհի չափազանց հեռաւորութեան եւ տեսակ տեսակ անյարմարութիւնների պատճառաւ: Բացի այդ Միջագետքում իրանց ուազմամթերքից մեծ քանակութեամբ վչացած էր յորդ անձրեներից: Փչացած էր արևմտեան ճակատում նու և հնդկական հեծելազօրքի մեծ մասը:

Եւ ահա այս երեք զլխաւոր պատճառներն էին, որ կաշկանդել էին նրանց ձեռքը:

Ուստի ոչ մի վճռական քայլ չարին, այլ իրանց յատուկ բաղաքազիտութեամբ, աշխատում էին մահմէտական տզդարնակութիւնը

գրաւելու, սիրաշահելու առանց արիւնիեղութեան: Այդ իմաստով նրանք նոյն իոկ մի յատուկ կոչ ևս հրատարակեցին թուրքերէն և ուսւերէն, որ, սակայն, ապարդիւն անցաւ:

Գալով քաղաքի դրութեանը,— նա հետք-հետէ ծանրանում էր: Կենսամթերքների գները չափազանց բարձրացան: Հասարակ հացի զրբւանքան եղաւ 15—20 ր. սոխի փոքրիկ կաղոցը՝ 3—4 ր. շաքարի գրւանքան՝ 20—25 ր. դմակ իւղինը՝ 10—12 ր. հալած իւղինը՝ 30—40 ր. ջրի գայլը՝ 50—100 կոպէկ, այն էլ ջրհորների հոտած ջուր, որովհետեւ Շոլարի ջրանցքը թշնամին կապել էր:-

Չնայած այս գներին՝ կենսական մթերքների տեսակն ու քանակը զգալի կերպով նւազում էր, այնպէս որ օգոստոսի վերջերին քաղաքի շուկաներում բացի մսից, և, ժամանակ առ ժամանակ, Սալեանից բերւած ձկներից և ձկնիթից՝ գրեթէ ուրիշ ոչինչ չէր ճարտում:

Մեծամանական իշխանութեանը փոխարինող կօպիսիօն իշխանութիւնը և դիկտատուրան միանգամայն անզօր գանւեցին որ և է օգոստութիւն հասցնել սովի և տագնապի ճիրաններում տառապող քաղաքի ազգաբնակութեանը՝ վերջինիս նրանք կերակրում էին իրանց յեղա-

փոխական ձառերով և միմիանց ծրագիրներն ու գործունէութիւնը քննադադելով:

Ժողովուրդը իր միակ յոյսը գրած էր Անգլիացիների վրայ, ի հարկէ, առանց ձանօթլինելու նրանց նեղ դրութեանը.— Դա,— եթէ կարելի է այսպէս ասել,— մի հոգեբանական ինքնախաբէութիւն էր:—

Բայց, վերջ ի վերջոյ, ժողովրդեան այս յոյսն ևս խորտակւեց՝ երբ օգոստոսի վերջին օրը՝ յանկարծ Անգլիացիք ևս թողին քաղաքը և փախան:

Նախընթաց զլիսում ընթերցողն արդէն տեսու այդ փախստեան ժողովրդի վրայ գործած ազգեցութեան հետեանքը:

ԲԱԳՈՒԻ ԱՆԿՈՒՄԸ

Վերջապէս սկ ու մութ շաբաթ գեշերը (սեպտ. 1-ին) լուսացաւ. կիւրակի օրը, սեպտ. 2-ին՝ թնդանօթների ձայները բոլորովին լուցցին, և միմիայն բուլիմեօների ճարճատիւններն էին,, որ անընդհատ լուսում էին՝ քայլ առ քայլ քաղաքին մօտեցող թշնամու կողմից: Ժամը 12-ին պուլիմեօներն էլ լուցին, և թշնամու հեծելազօրքը քաղաքի արեմտահաւաքին բարձրութիւններից քաղաքի ծայրում երկեցաւ:

Միջազգային մի պատգամաւորութիւն մեկ-
նեց դէպի բանակատեղը... բանակցելու:—

Ի հարկէ պատգամաւորութիւնը մերժեց
այս պատասխանով թէ՝ արդէն ուշ է: Մենք
քաղաքն արդէն վերցրել ենք կուսվ, — առել
էր Օսմանեան բանակի հրամանաւորը:— Պատ-
գամաւորութիւնը լքեալ որտով յետ գարձաւ:

Երկու ժամից յետոյ՝ Ստանիսլաւեան հայ-
կական մեծ փողոցի ծայրում մի կառք երևաց:
Մեջին նստած էր մի տաճիկ սովայ, շրջա-
պատւած երկու հայ հեծեալ զինւորներով և
երկու տաճիկ:

Սպայի հետ կառքում կային նա և երկու
հայ մարդիկ և մէկ յաղթանդամ ոռու՞ ձեռքին
ունենալով մի մեծ ձողի վրայ անցկացրած
սովիտակ զրօշակ:

Կառքը կանգնեց այն տան առաջ՝ որտեղ
ես էի ապրում:— Հարեաններից շատերը վազ
տալով դէպի ինձ ասացին որ ինձ, փաշան կան-
չում է: Դուրս եկայ և ծանօթացայ: Դուրս
եկաւ, որ ինձ կանչողը մի սպայ է: Նա կոչ-
ում էր Սուլէյման Զէլէպի, իսկ Հայերից մէ-
կը վաղարշապատցի Կարօ Ենգիբարեան, միւսը՝
Շուշեցի Տէր Դանիէլեան: Զէլէպին փաշայի
հրամանով ինձ առաջարկեց իրան հետ շրջել
քաղաքում յորդորելու համար, որ քաղաք մըտ-

նելու պատրաստւող զօրքի վրայ զէնք չպարպ-
ւի՝ ի խոյս աւելորդ արիւնհեղութեան:— Հո-
մաձայնեցի և կառքը շարժեց:

Կառքի մէջ տեղում կանգնած՝ ոռուսը բար-
ձրածայն կանչում էր անդադար: «Արդէն հաշ-
տութիւն է, 5 ժամից յետոյ տաճկական զօրքը
քաղաք կմտնի: Ով որ զօրքի վրայ հրացան ար-
ձակէ՝ իսկոյն գնդականար կը լինի, որ տանից
որ զօրքի վրայ ոռումբ նետւի, այն տունը իս-
կոյն և եթ կը ոմքակոծւի»: Այս խօսքերն հա-
յերէն թարգմանում էր Ենգիբարեանը:

Մատնք Տելեֆօնի փողոցը. կատարեալ
մեռելութիւն էր ափում: Ժողովրդականք կի-
սաբաց պատուհաններից մեզ էին նայում: Ես
երեսն նշանացի և խօսքով միսմատացնում էի,
որ երկիւղ չկրեն: Մի քանի տեղերում քաղա-
քում մնացած զինուորների էինք պատահում,
որոնք կրակ բացանելով փախուստի էին զիմում:

Մէծ Մօրսկոյ ու Գիմնազիական փողոցի
անկիւնում պատահեցանք մի քանի հայ զին-
որների, որ պատրաստում էին կառքի վրայ կրակ
բացանել: Ես իսկոյն կառքի մէջ կանգնելով՝
սասաեցի: Սպայի հրամանաւ՝ կառքի պահա-
պան զինուորներն ձեռաց բռնոտեցին հայ զին-
որներին: Կառքից ցած իջանք և մօտեցանք:
Զէլէպին նրանց մի մի ապտակ տւեց և հրա-

մայեց ձեռքները կապոտել և մեր կառքի առաջին նրանց մանածել: — Հակառակեցայ՝ խնդրելով զինւորներին արձակել, եթէ կամենում է, որ ես էլ իրան հետ շրջեմ քաղաքում: Խնդիրս անցաւ: —

Մալականի փողոցով անցանք գէպի մի քանի փողոցներ: Ամեն տեղ կատարեալ մեռելութիւն էր արում: Կիսաբաց պատուհաններից, երբեմն երբեմն մարդիկ սփոտնած երեսով գլուխները զուրս էին հանում և իսկոյն ժածկում:

Տեղ տեղ էլ նրացանների ձայներ լուսում էինք այս ու այն անկիւնից, սակայն արձակողներն չէին տեսնուում:

Ես սպային յայտնեցի, որ ինչպէս նա ինքըն էլ տեսնում է, քաղաքում ոչ մի զինւորական ոյժ չկայ: Կուռզ զօրքերն ամէքն էլ երէկ երեկոյ և այս առաւօտ հեռացել են: Քաղաքում հատկենդ մնացել են գուցէ մի քանի տասնեակ զինւորներ, որոնք չեն կարողացել շոգենաւ մտնել: Բայց այդ զինւորներից ոչ մի երկիւղ չկայ, որսվետեւ նրանք ապաստանել են տներում, իրանց ընտանիքի մօտ: Գալով նրացան արձակողներին՝ դրանք կամ պատահական մարդիկ են, և կամ գուցէ օտարազգի մութ տարբեր՝ նպատակ ունենալով ձեզ, օսմանցիներիդ

գրգռել հայերի դէմ: Ես անձով երաշխաւորում եմ, որ ձեր զօրքը քաղաք մտնելիս՝ ոչ մի ընդիմութեան, նաև մանաւանդ յարձակման չի ենթարկվի: Հետեաբար մեր շրջելն այլ ևս միտք չունի: — Ուստի խնդրում եմ գոնէ ինձ ազատ կացուցանել: — Իմ խօսքերն հաստատեցին Ենդիրարեանը. և Տէր-Դանիէլեանը, որոնք, ինչպէս յետոյ ստուգեցի, օսմանցիների մօտ ծառայութեան էին մտել և իրանց թերերի վրայ նրանց գրօշակի պատկերն էին կրում: — Ինձ հրաւիրելն էլ՝ նրանց խորհրդովն էր տեղի ունեցել:

Սուլէյման Զէլէպին կառքով ինձ բերեց մեր տուն, իսկ ինքը՝ իր հետեորդներով զնաց վաշայի մօտ զեկուցում տալու:

Երեք ժամից յետոյ՝ հայկական զլիսաւոր փողոցների վրայ հեծեալ և հետիոտո զինւոր ոստիկաններ երեացին, որոց մի մասը պէտք է փողոցներում շրջէր՝ կարգապահութեան համար, իսկ միւս մասը՝ քաղաքի գրամատների վրայ հսկէր:

ՍՈՒԼԷՅՄԱՆ ԲԷՅԸ

Նոյն օրը՝ երեկոյեան ժամը 10-ին մեր գարբասի դուռը թակեցին: Դոնապանը իմաց-

բեց ինձ:^{*)} Բաց արի դուռը: Երկու տաճիկ զինւորների ուղեկցութեամբ մի հայ պարոն,— բժիշկ Գալուստ Օհանեան՝ յայտնեց որ փաշան հրաւիրում է ինձ: Պատճառը չգիտէր: Որովհետեւ փաշայի կայարանը իմ բնակարանից շատ հեռու էր եւ ժամանակը ուշ ու գիշերը մութ,— ուստի ես յանձնառի գնալ այն դէպքում, եթէ որ պարոնը կառք կը բերէ, եւ թոյլ կուտայ

*) Իմ բնակած տանը՝ բացի 34 տնաւորներից հաւաքւած էին նա և 320 հոգի թէ հարեւաններ և թէ ուրիշ թաղերից եկողներ: Դւանց մէջ մասը ահզաւորւած էին բակում, միւսները իմ և հարեւանների տներում: Նրանցից շատերը՝ իրանց թանգարժէք իւրեղնները, հակառակ իմ կառքին, իմ տանն էին գարսել: Ամանք նոյն խոկ գրամի ծրարներ էին թագցրած եղել իմ գրագարանի գրքերի ծալքերում:

Այդ ես յետոյ ստուգեցի: Ճշմարիտ է՝ իմ բնակարանս էլ մի քանի անգամ թալանի ենթարկեց, բայց համեմատաբար քիչ: Եւ այդ այն պատճառաւ, որ յափշտակիչներին ես ինքս դիմաւորում և թոյլ էի տալիս տանել ինչ որ ուզում են, մի այն թէ մուզովրդին, նամանաւանդ կանանց և օրիորդներին, ձեռք չտան:— Իմ այդ խնդիրն յարգւում էր: Տանու կամիտետի կարգագրութեամբ դաբբասի դռներն ըանալու և փակելու և յափշտակիչներին ընդունելու և արձակելու իրաւունքը ինձ էր տրւած: Եւ ես այդ երեք օրում աւելի ես համոզւեցի, որ «չարին չհակառակելով» աւելի մէծ չարեքների տոաչը կարելի է առնել:

որ հետո վերցնեմ՝ մեր տանու կօմիտէտի նախագահ Յով. Միրիմանեանին եւ քանիսին:— Նա համաձայնեց: Կէս ժամ չ'անցած մի մեծ աւտոմօբիլ կանգ առաւ մեր դուան առաջ:— Վեց հոգի նստեցինք ու զնացինք:— Ճանապարհին նկատեցինք, որ երկու մէծ տներ այրւում են բոցերի սարսափելի ճարճատիւններով: Տներից մէկը հայկական թաղումն էր եւ հայի էր, խոկ միւսը՝ յայտնի Մուսա Նաղիեվի հոյակապ եւ 5 յայտնի տներից մէկն էր ծովափում:

Սուլէյման բէյը,— այս էր փաշա կոչւածի անունը, — մեզ ընդունեց շատ քաղաքավարի եւ ամէնքիս հետ առանձնապէս ծանօթացաւ: Նա յայտնեց, որ ինքը նշանակւած է մեր թաղամասի կօմենդանգ, ուստի մեզ հրաւիրել է մի քանի պատւէրներ տալու:

— «Մենք ասաց բէյը,— Աստծուն հաւատացող ենք եւ իբրեւ այդպիսի՝ մենք թոյլ չենք տալ առանցնիմնաւոր պատճառի ուրիշն վնասել: Արդ՝ կարգագրւած է, որ ա) ընթացս 3 օրւայ քաղաքի բնակիչներից ոչ ոք առաւօտեան 7 ժամից առաջ տանից չդուրս գայ, իսկ երեկոները՝ ժամը 7.ից յետոյ՝ ոչ ոք փողոցում չերեւայ:— Այս կարգագրութեան հակառակ շարժողը՝ կարող է զիշերապահ ոստիկանդինւորներից զնդակահարւել: բ) Թաղի բոլոր

տներից, տանու կօմիտեաների միջոցով հաւաքել զէնքերն ու ռազմամթերքն եւ պահել մի առանձին սենեակում մինչեւ ընդհանուր պահեստի տեղ ճարւելն։ գ) Քաղաքից հեռացող տնաւորների գոները՝ տանու կօմիտեաների կնքով կնքել մինչեւ առանձին տնօրինութիւն։ դ) Փողոցներում շրջող ոստիկան։ զինւորներին յայտնել այն մարդկանց անունը, որոնք իրանց զէնքերը յօժարակամ տանու կօմիտէին չեն յանձնում։ Եւ ե) թաղի ժողովրդին յայտաբարել որ մեր զինւորների կողմից, ոչ մի մաս կամ միրաւորանք չի հասնել, եթէ նրանք նրանց վրայ յարձակելու փորձեր չանեն։

Իմ այն խօսքերին թէ բէյի այդ պատեէրները այս գիշեր և եթ մենք հնարաւորութիւն չունենք յայտաբարել ի լուր ամբողջ թաղին, — նա պատասխանեց, որ այս մասին պաշտօնական յայտաբարութիւններ ևս կը լինեն պատերի վրայ փակցըրած։ Դուք էլ ձեր հերթում, վաղը նեղութիւն կրեցէք բացարելու ձեր հարեւաններից անզրագէտներին մեր այս կարգադրութեան միտքն ու նպատակը։

Այնուհետեւ Սուլէման բէյը ծացից հանելով իր յուշատեարը և թերթելով կանչեց՝ «Ենգիբարնվ, Տէր-Դանէլով»։

Ինձ արդէն ծանօթ այս պարոններից ա-

ռաջինը՝ իսկոյն երեաց։ Բէյը հրամայեց նրան այս ինչ սպային (անունը տւեց) կանչել։ Սպաններ կայացաւ և զինւորական պատիւ տւեց բէյին։

— «Այս պարոնների կեանքը այս գիշեր բախշեցի, — ասաց բէյը սպային, — ուստի աւտամօքիլով տար և անփորձ իրենց աները հասցրու։» —

Մենք հրաժեշտ տւինք և խնդրեցինք թոյլ տալու մեզ հետիւաս գնալու, րոնեակ գիշերը շատ մթին է, փողոցները ծուռ ու մուռ և դարուփոս, ուստի և աւտամօքիլով գնալը կարող է վատանգաւոր լինել։

— «Այն ժամանակ մի քանի զինւորների յանձնեցէք, որ սրանց ուղեկցեն, — հրամայեց Սուլէյման բէյը սպային և ինքը հեռացաւ։

Երկու զինւորների ուղեկցութեամբ՝ մենք յետ գարձանք։ Ամէն մի փողոցի ծայրում մեզ կանգնեցնում էին ոստիկան-զինւորներն եւ նրանց հետ շրջող ձիաւոր սպայ-ոստիկանը՝ մեր ով լինելն էր հարցնում։ Մեր տեղակ մեզ ուղեկցող զինւորներից պատասխան ստանալով մեզ բաց էին թողնում։ Միենոյն զինւորներից ուժանք պատերի վրայ յայտաբարութիւններ էին կպցնում, որի մասին յիշել էր Սուլէյման բէյը։ Փաժը 11^{1/2} էր, երբ մենք տուն հասանք։ —

Եւ այդ ժամանակ միայն հասկացանք թէ ինչ
էին նշանակում Սոլեյման բէյի այն խօսքերն
թէ սրանց կեանքը այս գիշեր բաշխեցի:—
Որովհետեւ եթէ զինւորներ մեզ չուղեկցէին, —
փողոցի ոստիկանները մեզ կոպանէին, եթու
ժամը 7-ից յետոյ փողոցում շրջողներ:

ԶԵՆՔԵՐԻ ԿՈՅՏ

Հետեւալ օրը մենք սկսեցինք մեր տան
զէնքերն հաւաքել: Անսպասելի շատ քանակու-
թեան զէնքեր և փառփուշտներ գուրս եկան
ինչպէս մեր, նոյնպէս և հարեանների ու առ-
հասարակ մեր թաղամասի աներում: — Պարզ
երեսում էր, որ գրանք քաղաքից հեռացող զին-
ւորների զէնքերն են՝ առաջւանից իրանց անե-
րում թագցրուծ: Այժմ իրանց հեռանալով՝ ըն-
տանիքի անդամներն յօժարակամ բերում ե
յանձնում էին տանու կօմիտէաններին: —

Ասողներ եղան որ եթէ զինւորներն չը-
փոխսչէին, այլ իրանց արամազըրութեան տակ
գտնւած այդքան մեծաքանակ զէնքերով շա-
րունակէին կոփւը՝ հազիւ թէ առաջինները կա-
րողանային քաղաքը վերնել:

Բատ յիս՝ այդ կարծիքը անհիմն է:
Եթէ Բագուն պահելու որքան և իցէ հնա-

բաւորութիւն լինէր, Անզլիացիք չեին հեռա-
նալ, բայց նրանք ոչ միայն հեռացան՝ այլ նաև
տեղական իշխանութեանն ու հայոց Ազգային
Խորհրդին մի քանի օր առաջ խորհուրդ տւին՝
սպիտակ գրօշակ բարձրացնել և հաշտութեամբ
քաղաքը յանձնել: Որովհետեւ իրանք անպատ-
ճառ պիտի հեռանան: —

Եւ եթէ իրանց հեռացումը՝ դարձեալ մի
քանի օրով յետձգեցին, — դա եղաւ տեղական
իշխանութեան թախանձանքով: Վերջի վերջոյ
նրանք այդ թախանձանքներն էլ արհամարհե-
ցին և շտապ շտապ հեռացան շաբաթ երեկոյ-
եան: —

ԲԱԼԱԽԱՆՈՒ ՀԱՅԵՐԻ ԿՈՏՈՐԱԾՆ ՈՒ ԿՈՂՈՊՏՈՒՄԸ

Սեպտեմբերի 1-ին հ. տ. շաբաթ օրւայ առաւօտ-
եանից՝ այսինքն տաճիկների քաղաք մտնելուց
մի օր առաջ՝ սկսւեց Հայերի սպանումն ու
կողոպտումը Բալախանից սկսեալ:

Առաւօտեան 6 ժամին նաւթահանքերում՝
յանկարծ հրացանածգութիւն սկսւեց: — Այսե-
ղի հայ ծառայողների ամենամեծ մասը՝ 10-15
օր առաջ փոխագրւել էր քաղաքը: —

Միայն մի երկու ֆիրմայում մնացել էին

մի քանի ինժիներ և ուրիշ ծառայողներ, ևս և նաւարդիւնաբերողների հիւանդանոցի հայ ծառայողներն՝ թւով 40 հոգի և հայ հիւանդներն թւով 120 հոգի:

Հիւանդանոցի կողքին գտնւած Հ. Յ. Դաշնակցութեան շտապը՝ իր վրայ էր վերցրել նրա պահպանութեան հոգալ՝ ի արիտուր նրանից ստացած այս ու այն օգնութեանը, — բնակարան, ջուր, լուսաւորութիւն, և այլն, — ուստի նաւթահանքում լուսած հրացանաձզութեան պատճառն ստուգելու համար հիւանդանոցի վարչութիւնը դիմեց շտապին: Մակայն բանից գուրս եկաւ որ թուրք ամբոխի գիշերւայ մէջ զինելն տեսնելով՝ Դաշնակցութեան շտապը լուսաբացին հեռացել է արդէն նաւթահանքից առանց գոնէ հիւանդանոցի վարչութեան իմաց տալու: Ուստի թուրք ամբոխը՝ մասնաւոր ֆիրմաներում եղած հայերին սպանելուց յետոյ՝ մտնում է հիւանդանոցի բակը, և իրանց ձեռքին ունեցած անւանուկան ցուցակով, և հիւանդանոցի թուրք (Զաղանի) և ուստ ծառայողների ցուցմամբ, մի առ մի մտնում է հայ ծառայող, բժիշկների ու ֆէլշերների բնակարաններն և մի առ մի սպանում ու կողոպտում: Ուստի, Վրացի և Հրէայ, բժիշկներն իրանց կախենալով՝ հրաժարւում են իրանց

հայազգի կօլեգներին պաշտպանելու, կամ՝ հովանաւորելու: — Այս հիւան վրայ իսուժանը՝ անարդել մտնում է և սպանում Յ հայ բժիշկ, — Յունանեան, Խոջայեան և Ղազարեան, — ևս և 3 4 հոգի երկրորդական ծառայողներից: —

Մահից ազատում են զլխաւոր բժիշկ Գեւորգ Ղազարեան և երկու ֆէլաշեր: Դրանք հիւանդ ձեռնալով՝ ցըւում են բարակների մէջ և անկողին մտնում: —

Բայց բաւականին ժամանակ անցնելուց յետոյ՝ իսուժանը մտնում է բարակները և հիւանդներից 120 հայերին չոկելով՝ մի առ մի սպանուած և մահճականներն ու անկողիններն ստույրի վրայ զարսելով՝ վերցնում առնում է:

Այդ գործողութեան միջոցին՝ զլխաւոր բժիշկն ու երկու ֆէլաշէրներն մի քանի ոսւսազգի գթութեան քոյրերի օգնութեամբ՝ կարսղանում են քոյրերի շորեր հագած՝ բարակներից գուրս զալու և զրբերի պահպաններում ու նկուզներում թագ կենալու, ուր անսուազ մնում են ամբողջ երկու օր, երբ նաւթահանքերն է ժամանում՝ այնաեղի կօմենդանդ նշանակւած ընթերցողին յայտնի Սուլէյման բէյը բազմաթիւ ոստիկան զինուորներով և իսուժանին ցըւում:

Կօմենդանդի գալուց յետոյ՝ ողջ մնացած Յայ ծառայողներն թէ և նկուղներից զուրս են գալիս, բայց լոյս աշխարհ ելնելուց երկիւղ կը ելով, մի քանի օր ևս իրանց ծանօթների աներին են տպաւինում:

Ի վերջոյ կօմենդանդը զբանց մասին լուր առնելով՝ զինւորներ է զրկում, նրանց իր մօտ հրաւիրում, հիւրասիրում և սովորական գնացքի մի առանձին վազոնով նրանց քաղաք փոխադրում զինւորների խիստ հսկողութեան ներքոյ:

ՔԱՂԱՔԻ ՀԱՅԵՐԻ ԿՈՆԴՊՏՈՒՄՆ ՈՒ ՍՊԱՆՈՒՄԸ

Միենոյն շաբաթ երեկոյեան, սեպտ. 1-ին, ինչպէս քիչ առաջ յիշել ենք, բաւականին շատ չայեր կոտորւեցին և կողովուեցին Սև և Սպիտակ քաղաքում և նրանց նաւամասոյցներում, նրանք որոնք նաւերին չհամելով, կամ յետ մզւելով՝ հարկադրւած էին յետ դառնալու քաղաք:

Եղան և շատերը, որոնք նոր պարապ նաւեր, կամ նաւակներ գտնելու և վարձելու ոին յօւսով, մինչև լոյս ծովափում մնացին: Դրանցից էլ բաւականին մարդիկ կոտորւեցին սում-

բերից, որ ձգում էր թշնամին փախչող նաւերի վրայ: — Գալով գրանց կողովտմանը՝ այդ գործն էլ կատարում էին մասամբ ուսւ կանայք:

Ինչպէս այդ, նոյնպէս և հետեւեալ օրեւում սուս լկտի կնանիքների կատարած զագրալի գործերն,*) հայերին մատնեն ու կողովտաելն, — առանձնապէս աչքի էր ընկնում: — Եւ սուս խուժամուժը, նրա տականիքը տյզպէս էր վարւում այն պատճառաբանութեամբ իբր թէ Շահումեանն ու Դաշնակցականներն միացել էին Բագւում հայկական թագաւորութիւն հիմնելու, որ նրանք ճակատը լաւ չպաշտպանեցին, որ... մի խօսքով սուսական սովորական ցնդաբանութիւններ և անհիմն յարձակումներ «աղած հայերի» (со տեղու արայակ) հասցէին:

Մի քանի գէպքեր աեղի են ունեցել քաղաքում, երբ տեղացի թուրքերից շատերը իրանց աներում ապրող հայերին՝ թագցրել են իրանց աների պահարաններում, անկողնոցներում ու թագուացներում, սակայն հարեան սուսների առաջնորդութեամբ և ցուցմամբ՝ թուրք խուժանը եկել և հայերին մի առ մի

*) Ուսւ լկտի կանայք նիւթապէս բաւականին ապահովացրին իրանց գիշերները... թուրքերից հայերի ստացած փողերով ու շորեղէններով:

զուրս հանելով կոտորել ու կողոպահել է, թողցնող, կամ հովանաւորող թուրք անոտիրոջ և թակելով ու կողոպահելով:—

Դէպքեր են եղել, երբ այս ու այն թուրքը իր տանը կեցող վարձաւոր հայերի զոտնառաջ կանգնած՝ խուժանին թոյլ չէ տւել ներս մանելու, փոխարէնը առաջտրկելով, որ իր տունը կողոպահեն և եթէ ուզում են իրան սպանեն քան իր տնաւոր հային: Խուժանը մտնում է տանուտիրոջ բնակարանը և փառաւորապէս կողոպահելով՝ թողնում և հեռանում է:

Մի այսպիսի մարդասէր, կտրելի է տոնել հերոս թուրքի տնունը մենք ստուգեցինք: Դա Մուստաֆա Բաֆիեկ բժիշկն է:

Այլ թուշը՝ Մէջէտի Զիլֆ-Ալի Յախշիջապէ Մէհթիեվ՝ ողարսկահպատակ վաճառական՝ իր մագագինին կից ընդարձակ բակում հաւաքում և իր հովանաւորութեան ներքոյ է ընդունում մօտ 200 հայ մարդկանց, քաջութեամբ դիմադրելով թուրք տանուտիրոջ սպառնալիքներին՝ երեք օր շարունակ կերտկում և պաշտպանում է նրանց:

Նրա այդ պաշտպանեալների գլխաւորները՝ վերջերումս Մէհթիեվին հետեւեալ աղբէմն են տւել՝ գեղեցիկ շրջանակի մէջ դրած: «Մէնք, մի խումբ Հայերս, մօտ 200 հոգի տղամարդ,

կնիկարմատ և երեխաներ մտնից ազատուեցինք ի շնորհս ձեր բարեսիրտ և կարեկից վարմունքին՝ երբ անցեալ 1918 թ. սեպտ. 15-ին թշնամու բանակը Բագու մտաւ: Ուստի խնդրում ենք ընդունել մեր խորին և անկեղծ շնորհակալութիւնը: Չեր անունը միշտ կենդանի կը մնայ ինչպէս մեր, նոյնպէս և մեր սերնդի սրաերում:

Աղօթում ենք Աստծուն, որ անփորձ և անսասան պահէ նա Զեզ հանդերձ ընտանեօք»:—

Ուրիշ որտ նման կամ նւազ զէպքեր շատ են եղել, որոնց զանց ենք առնում:—

Գալով կոտորւսդ և կողոպատող հայերին՝ դրանց մի խոշոր մասը Հայկաւանի բնակիչներն են կազմում:

Այդ արւածանը քաղաքից բաւականին հեռու և թշնամու դիրքերին մօտ լինելով՝ բնական է որ միւս թաղերից աւելի ենթակայ եղաւ թէ պատերազմի օրերում և թէ մանաւանդ թշնամու քաղաք խուժած ժամանակ:

Ճիշտ է Բալախանու նման՝ Հայկաւանում ևս Թաշնակցութիւնը իր շտապն ունէր, բայց այստեղի նման՝ այստեղից էլ ժամանակին հեռացել էին զինւորներն:

ՍԻՍՏԵՄԱՏԻՔ ԿՈՂՈՊՏՈՒՄ ՈՒ ԿՈՏԴՐԱԾՆԵՐ

Մինչև հիմայ եղած կոտորած ու կողոպտումներն պատահական, անհատական կամ խուժանական երեսյթներ էին հայկական թողերի ծայրերում։ Իսկ քաղաքի կենդրումական, սիստեմատիկ, կանոնաւոր կողոպտումը, երբեմն սպանութեամբ հանդերձ, սկսւեց երկուշարթի կէս օրին, սեպտ. 2-ին, և աևեց ուղիղ երեքօր, — միմիայն ցերեկները։ — Եւ սկսւեց վորոնցովի փողոցից, որով քաղաքի թուրքական մասը՝ բաժանւում է հայկականից, թէպէտ և երկու քաղաքամասերում էլ բաւականին թուրք և հայ ընակիչներ կան։ —

Տեղական սլարսիկների առաջնորդութեամբ, որոնք մի ձեռքներումը կացին, միւսումը ասրձանակ կամ սուր բռնած էին ունենում, 4-6-8 հոգուց բաղկացած զինւած «ասքէրներ»*) գալիս մտնում էին տները՝ դռներից և պատսհաններից եւ սկսում էին պահանջնել «փուլ» փող։ —

Որոնք որ յօժարակած տալիս էին՝ «ասքէրներն» ստանում եւ հեռանում էին։ —

*) Դրանք ամէնքը տեղական և առհասարակ կովկասեան մահմէտականներ էին, որոնք Օսմանեան բանակի շարքերն էին մտել։

Իսկ որոնք որ չէին տալիս՝ սպառնալիքով երբեմն հրացանի կոթով խփելով եւ գրպանները, ծոցերը պատելով ստանում էին։

Այսպէս մօտենում էին բակում խոնւածամէն մի անհատի եւ ապա ամէն մի տնաւորից Ավագ կողոպուտի մի մասը իրանց առաջնորդող պարսկին տալով հեռանում էին։ —

Պատահում էր, որ ասքէրներին առաջնորդող պարսիկը իրան ծանօթ կամ բարեկամ անատիրոջ, կամ տանու կօմիտետի նախագահին գուրս էր կանչում եւ հրամայում այսքան հազար կամ այսքան հարիւր բուրլի (նայած տան մեծութեան ու փոքրութեան) փող հաւաքել ձեռաց եւ տալ իրան որ բաժանէ «այշներին» — առաջնորդների իրանց բառերն են, — որպէսզի նըանք տների մէջ մտնելով՝ «օղուշաղին սաթաշմիշ» չլինեն։ —

Նըամանը ճշտութեամբ կատարւում էր։

Բակից գուրս գալով տաւաջնորդը ստացած փողերիցը իր բաժինը, կամ տոկոսը իր գրպանը զնելով մնացեալը մասնատրում էր զինորներին։

Այդ օրը միայն փող էին գջլում ժողովրդից։ Երկրորդ օրը սկսւեց փողի հետ նա և ակնեղէն, ոսկեղէն ու արծաթեղէն, — առհասարակ թանկարժէք բայց թեթև, գրպաններում

պահելու կամ իրանց բարեկամներին, ձեռաց յանձնելու կողոպառումը, և ճիշտ նախընթաց օրույն ձեռվ:

Երկրորդ օրում կատարելապէս կողոպառուած են Հայոց երեք եկեղեցիներն:

Պատահում էր, որ վոգոցներում պատահած տաճիկ այս ու այն սպան տանից լոււած ձայների վրայ, կամ կողոպտիչներին տեսնելով՝ իսկոյն ներս էր մտնում եւ թակելով, ջարդելով կողոպտիչներին գուրս էր վոնդում կողոպտած իրերն տէրերին վերադարձնելով: Իսկ եթէ իրան հետ տաճիկ ասքէր էլ էր լինում՝ հրամայում էր կողոպտիչների զլխառորին քաղաքի կօմենգանդին մօտ տանել պատժելու համար: Եւ պատժւում էլ էր: Արդէն քաղաքի մի քանի մեծ հրապարակներում կախարաններ էին շենած եւ նրանց ամէն մէկի վրայ կախւած դիակներն ճոճում էին՝ իրանց զզերիցը կախարած թղթերի հետ՝ թուրք և ոռւս լեզւով:— Կախւածի անունն ու գործն յիշելով: Կախւողները գրեթէ բացառապէս պարսիկներ էին իրանց սովորական կամ ասքէրի շորով, և ու ոռւսներ, նոյն իսկ ոռւս կանայք:

Մի քանի ժամ անցած՝ կողոպտւած տան բակը մտնում էր կողոպտիչների երկրորդ խումբը, տեղ տեղ նա և երրորդ խումբը և նոյն

ձեռվ իր գործը տեսնելով, իսկ տաճիկ սպայ տեսնելու դէպքում ոլուկ գալով և շնչառպառ փախչելով:

Երրորդ օրն՝ այցելողները՝ կողոպտում էին ժողովրդի ձեռքում եղած փողերի, ակնեղէնների, սակեղէնի որ արծաթեղէնի մնացորդներն, և ապա՝ շորեղէններն:— Եւ միենոյն եղանակով:

Այդ օրը, երեկոյեան այսպէս ասած, պաշտօնական, կամ կանոնաւոր կողոպտումը վերջացաւ:

Միւս, չորրորդ օրը, տներն, առաւելապէս ընակողներից թողնուած, կամ փակւած տներն, շաբան շաբան գալիս էին տեղական հասարակ թուրքերն ու ռուսները, նրանց թւում և հայեր թէ տղամարդիկ և թէ կանայք, և մնացած շորեղններն, պղնձեղէններն և ամէն ինչ հաւաքում տանում: Այնպէս որ Հայերի տների ամենամեծ մասը այժմ իրանից մի կատարեալ աւերակ ու ամայութիւն է ներկայացնում, և ամէն մի հայ մի կատարեալ թեփուած հաւանագալ շորերի և ցնցոտինների մէջ փաթաթւած:

Բոլոր նշաններից ակնբախ երեսում է որ կողոպտումը որոշ սիստեմով էր կատարւում և յայտնի նպատակ ունէր հայերին աղքատացնել, խեղճացնել: Եւ պէտք է ասել, որ այդ սիստեմի

հնարողները՝ կատարելապէս իրանց նպատակին հասան:

Ճիշտ է սխստեմը մտածւած և ուղղւած էր հայերի դէմ, և ոչ մի հայի տուն, ոչ մի հայի անկիւն ազատ չմնաց, սակայն կողոպտման բաւականաշափ դէպքեր եղան նաև Հրէաների, ոռւների և նոյն խոկ երկու գերմանացու աների:

Փալով մագաղիններին և խանութներին՝ մի և նոյն սխստեմն ենք տեսնում: Խաղաղութիւնը փոքր ինչ հաստատելուց յետոյ՝ ես քաղաքի մագաղինների և խանութների շարքերն աչքով անցկացրի և բոլոր հայերի ու բոլոր մագաղիններն ու խանութներն, — շատ չնչին բացառութեամբ, ջարդուած ու կողոպտւած գտայ, մինչդեռ նրանց կողքին եղած թուրքի, վրացու, ոռուի և հրէայի պատկանեալներն՝ բացառութեամբ մի քանի ժամացոյց և ակնեղէն վաճառողների, — միանգամայն անվաս էին և լիքը ապրանքներով: —

Կողոպտիչներին դիւրութիւն տալու և սխալւելուց փրկելու համար՝ սխստեմի հնարողներն թուրքերի մագաղինների եւ խանութների վրայ թղթեր էին կպցնել տւած՝ որոց վրայ թուրքերէն գրւած էր թէ ումն է պատկանում: Ուստաների եւ հրէաների մագաղինների վրայ՝ կաւի-

ճով, ածուխով, մատիտով, երբեմն նաև եւ թրդթով գրւած էր «իշչու մալազին», Եթրէցի մալազին»: —

Մենչդեռ Հայերին պատկանեալների վրայ ոչ մի մակագրութիւն չկար: Եւ ուրեմն նրանք իրանք իրանց մտանում էին իսկոյն, մանաւանդ որ կողոպտումը կատարւում էր օրով ցերեկով, եւ կողոպտւած ապրանքներն մի տեղից միւս տեղ փոխագրուում էին շալտկներով ու սալլերով: —

Մի քանի յայտնի հարուստ ֆիրմաների երկաթեայ մեծամեծ կասսաներն՝ զարմանալի ճարպիկութեամբ եւ հնարագիտութեամբ կոտորւեցին, բացւեցին եւ նրանցում եղած հարիւր հազարաւոր զրամներն, բոլիեանդեղէններն, ոսկեղէններն եւ զանազան հազլագիւտ, մեծագին իրեղէններն ձեռաց աւարի ենթարկեցին: —

Ճիշտ է այդ ֆիրմաների ներկայացուցիչներն վազօրօք քաղաքից հեռացել էին, եւ իրանց ամբողջ շարժական կարողութիւնը իրանց երկաթեայ կասաներում զետեղելով՝ կարծել էին թէ նրանց ազատել են, սակայն ճարպիկ

կողոպտիչներն նրանց ըոլոր յոյսն ի դերեւ հա-
նեցին:*)

ՀԱՅԵՐԻ ԿՈՂՈՊՏՈՒՄԸ ՏԱԶԻԿՆԵՐԻ ՁԵՌՔՈՎ

Երեք օր շաբունակ Հայերին կողոպտողնե-
րը, — ինչպէս յիշել ենք, բանակին մէջ եղած
կովկասի, առեւելապէս Բագուցի, ասքէրներն
էին և նրանց առաջնորդ տեղական պարսիկ-
ներն իրանց սովորական շորերով՝ իսկ տաճիկ
զօրքերն, շատ չնչին բացառութեամբ, — ոչ մի-
այն չժամանակցեցին կողոպտումներին, այլ նա-
և պատահած տեղում արգելում և ծեծում ու
ցրում էին կողոպտիչներին:

Միլիոնի և Մալակտնի փողոցների ան-
կիւնում, որ դէպի ծովն է հանում, 2000 հայ

*) Երկաթեայ կասսաներ բացանող մի յայտնի
հայ վարպետ կայ Բագուում: — Իմ ինսպրիքին պիշտ-
նելով խոստովանաբար յայտնեց թէ ում յանձնա-
բարութեամբ և քանիք կասսա է բացարել այդ օրեւ-
րում և քանիք հազար բուրլի վարձ է ստացել: Նրա
պատմածին նայած՝ առանց պատճին գժւարութեան
կարելի է ամէն կասսա բանալ, երբ բանւելու երկիւզ
չունենալուց իդատ՝ վարպետի մօտ կանգնած են լի-
նում նաև ձեզ պահագան դիմուրներ, ինչ որ տեղի
էր ունեցել մեր վարպետին հետ:

գեղջուկներին՝ խուժանից պահպանում էին տա-
ճիկ զինւորներն: Այդ խղճուկները քաղաքում
ուրիշ տեղ ապաստարան չդանելով հաւաքւել
էին ծովափը և սպասում իրանց ճակատազրին:

Պէտք է գիտենալ, որ զօրքը քաղաք չմը-
տաւ՝ այլ երեք օր պահւած մնաց քաղաքի սահ-
մանավորում:

Քաղաք մտան, ինչպէս յիշել ենք՝ իր տե-
ղում, միմիայն ոստիկան-զինւորներ իրանց սպա-
ներով: Ամենայն հաւանականութեամբ հայերի
սպանումն ու կողոպտումը անոելի չափերի կը
հասնիր, եթէ որ զօրքին թոյլ արւեր քաղաք
մտնելու:

Սակայն նրանց հրամանատարութիւնը զօր-
քին քաղաքի գրսում պահելով՝ Հայերի կողոպ-
տման գործը թոյլ էր տւել կատարել իր բա-
նակում եղած պարսիկ ասքէարներին որոնք
մարտ ամսին Հայերից կրած իրանց Փիղիքա-
կան և նիւթական վկասը՝ թող այսպէս ասենք: —
աւելի բարդ տակոսներով ստացան:

Գալով տաճիկներին այսինքն՝ տաճիկ իշ-
խանութեան կատարած կողոպտումներին, — զա-
էլ տեղի ունեցաւ՝ Ազրբէջանական իշխանու-
թիւնը հաստատելուց և պաշտօն ստանձնելուց
յետոյ, երբ իրանութների մեծ մասն բացւած

էին և կեանքը, որոշ չափով, իր նօրմալ գրութեան մէջ մտած պրծած էր արդէն:—

Բեռնակիր աւտամօբիլներ երկու զինւորների ուղեկցութեամբ, սկսեցին շրջել քաղաքի մէջ կօպերացիաների, նաև թարդիւնորերոդների, քաղաքի, Ազգային հիմնարկութիւնների և յայտնի մասնաւոր անհատների պահեստներն բանալ և նրանց միջի ամէն աեսակ ապրանքներն փոխադրել Գանձակ այն է՝ ալիւր, ցորեն, գարի, չոյ, շաքար, իւղ, սապոն, գարման խմիչքեղէն, կաշւեղէն, գորգեղէն, երկաթեղէն, պողպատեղէն, ճոթեղէն, բուրդ, բամբակ և այլն:

Այստեղ փոխադրւեցին նաև հարիւրաւոր մասնաւոր աների ընտիր կահկարտին ու ոէրվիզներ, ու պղնձեղէններն:

Ես ձիշտ տեղեկութիւն ունեմ ինչպէս սպանւած, գերւած և անյայտացած հայերի, նոյնպէս և նրանց կրած նիւթական վնասի քանակութեան մասին՝ սակայն մինչև այդ տեղեկութիւնների ի պաշտօնէ հրատարակումը՝ անտեղի եմ համարում այժմեանից հրատարակութեան աալ:

Բայց որպէս զի ընթերցողիս փոքրին գաղտիաբաւած լինիմի մունեցած թւանշաների մասին այստեղ այսքանս միայն կը յայտնեմ, որ սպանւած

ու անյայտացած հայերի թիւը մօտ 17 հազարի է հասնում, իսկ նիւթական կորուստը՝ միլիարդի:—

Կողոպտւում էին բացաձակապէս հայերը, թէպէտ և թիւրիմացութեամբ, կամ ազահութեամբ՝ մի քանի օտարազգիներ ևս կողոպտւեցին:—

Նիւթապէս առաւել առւժողներն են, ի թիւս այլոց, հետեւեալ վաճառականներն՝ 1. եղբարք Թումանեանց, որոց աներից և պահեստներից կողոպտւած ու այրւած է 1820 հակ բամբակ և 50 հակ չամիչ, — ընդամէնը 8,325,000 բուրլի արժողութեամբ:*) 2. Բաղդասար Յակոբեան և ընկ. տանից և պահեստից կողոպտւած է 1,700,000 ր. ապրանք:**) 3. Մանուշար Աւագեանի տանից և պահեստից կողոպտել են 410,000 ր. ապրանք: 4. Եփրեմ Սարգսեանի տանից և պահեստից կողոպտել են 1,300,000 ր. ապրանք: — 5. Լալայեանցի տա-

*) Այս հաշւի մէջ չէ մանում Հաշտարիսանում և Մոսկվայում մեծամասնականների խլած 10,000 հակ 88,000 փութ բամբակն, մօտ 30 միլիոն արժողութեամբ:

**) Այս պարունից Պետրովկակում մեծամասնականներն յափշտակել են 90,000 ր. կանիսիկ դրամ և 700,000 ր. ապրանք:—

նից տարել են $2^{1/2}$ միլիոնի ապրանք, Խուբեանի տանից 200,000 ըուբլու, Հայոց Ազգային Խորհրդի պահեստից տարել են հարիւտոր ֆըթերով բըինձ, չայ շաքար և զանազան իրեղէններ և այլն: 6. Նաւթարդիւնաբերողների պահեստից կողոպտել են 2 կէո միլիոնի ապրանք, սրանց մի մասը հայերի վրայ է ընկնում: 7. Կօսպերացիայի պահեստից կողոպտել են 6 կէո միլիոնի ապրանք, որոց մի մասը նոյնպէս հայերին է պատկանում: —

Ել չենք կանգ առնում հագարաւոր հրացանների, հարիւրաւոր թանկագին ատրճանակների և միլիոնաւոր փամփուշաների վրայ, որոց և եթ գրաւելու իրաւունք ունէր տաճիկ զօրքերի հրամանատարութիւնը, այլ ոչ ընկերութիւնների ու անհատների ապրանքներն: —

Դժբաղդաբար հայերի կողոպտումներն ու հալածանքներն սրանով ես չփերջացաւ:

ՆՈՐ ԶԵՒԻ ԿՈՂՈՊՏՈՒՄ ՈՒ ՀԱԼԱԾԱՆՔ.

Բազուն առնելուց մի քանի օր յետոյ Գանձակում կազմակերպւած Ազրբէջանական իշխանութիւնը փոխադրւեց այստեղ, քաղաքի կառավարութիւնը իր ձեռքն առաւ՝ տաճկական բանակի հրամանատարութեան վերին հոկողութեան ներքոյ:

Եւ թէպէտ ի պաշտօնէ յայտաբարւեց, որ բոլոր քաղաքացիները, առանց ազգի ու կրօնի խարութեան, համահաւասար իրաւունք և ազատութիւն պիտի վայելէն, սակայն՝ հայառակ այդ յայտաբարաբութեան՝ հայ տարրի վերաբերութեամբ՝ նոր ձեի կողոպտման և հալածանքի գոներ բացւեցին:

Համառօտակի ամփոփենք այստեղ զբանց պատկերը: ա. զբեթէ ամենայն օր շարունակ՝ փողոցներից և աներից տսկէրները բանում տանում էին հայերին՝ երեմն էլ խմբովին:

Քաղաքից գուրս հանելուց յետոյ՝ զբանց մի մասին հաւաքում էին Սալիհանի կազարմաներ կոչւած զօրանոցներում և քաղաքի բանդերում, առանց սակայն նրանց վրայ որ և է մեղադրանք կամ յանցանք վերադրելու:

Դրանց ոչ կերակուր էին տալիս, ոչ էլ գոնէ ցամաք հաց: Ուստի և բանդարգւածներն է որ իրանց տներից կերակուր էին ստանում, և է որ պահապանների միջոցով՝ փողոցից կերակուր էին գնում: —

Բանդարկւածների տրատունջներին ոչ մի նշանակութիւն չէր արւում, իսկ բողոքողներն զանակոծւում էն:

Հոկտեմբերի 29-ին ներքին զործերի մի-

նիստը՝ Բարիկի բանդարգեալներին այցելելիս՝
յայտնել էր, որ նրանք բանդում մնալու են
այնքան ժամանակ, մինչև որ պարզուի թէ՝
զբանցից որոնք մասնակցել են մարտի դէպ-
քերին:—

Ազրբէջանի իշխանաւորները բնաւ չէին
թագավորմ, որ իրանք բանդարգւածների մէջ
դաշնակցականների են ման գալիս: Իսկ անմեղ-
ներին, այսինքն մարտի դէպքերին մասնակց
չեղողներին՝ անշուշտ տղատ կը թողնեն՝ քըն-
ուութիւններն վերջանալուց յետոյ:—

Բ. Զերբակալւածներից ոմանց՝ փոխանակ
բանդ տանելու՝ քաղաքի հեռաւոր ծայրերում
եղած աներն էին տանում, առ ժամանակ պա-
հում սպանում և դիակներն՝ անյայտացնում:

Այգափիսի զոհերից ամենայայտնիներն էին՝
քաղաքագլխի պաշտօնակատար Ջումշուտ Յա-
րութիւննեանց, բժշկապետ Թագէսս Զաքարեան,
ինժիներներ՝ Սերոբ Բաբայեան, Սամսոն Ա-
միրեան, Կոստանդին Քալանթարեան և այլն:

Մենք ընդունում ենք, որ այս չարագոր-
ծութիւնների մէջ իշխանութիւնը և իշխանա-
ւորները անմասն էին, բայց դա զոհերի համար
թեթևութիւն ու մխիթարութիւն չէ կարող
լինել:

Գ. Ոստիկանապետը յայտարարել էր, որ
«քաղաքացիներին» այս կամ այն պաշտօ-
նէին մօտ հրաւիրելու, — և ընդդիմութեան
գէպըում իրաւունք ունին բռնի աանելու բաց-
առապէս այն ոստիկանները, որոնք բացի իրանց
վրայ եղած №-ից ունին նաև և առանձին արտօ-
նաթուղթ. թէ ոյդ, ոստիկաններն էլ քաղաքա-
ցիներին հրաւիրելու իրաւունք ունին միմիայն
ցերեկները այլ ոչ երբեք զիշերները: Թէ՝ այս
պայմաններից գուրս գործող ամէն ոք, — լինի
նա հասարակ ոստիկան, կամսպայ, — իսրեխայ
պէտք է համարւի, որին անշուշտ պէտք է ըլու-
նել և անմիջապէս հեռախօսով ոստիկանապե-
տին յայտնել ցերեկը՝ այս ինչ, իսկ զիշերը՝
այս ինչ №№-ներում:—

Բայց բանը նրանումն է, որ ամէն մի ըն-
տանիք՝ բաղկացած մի տղամարդուց և մի կնո-
ջից ու մի քանի երեխաներից՝ անկարող է
յանկարծ իրան տունը լցւած 2—4 զինւած
մարդկանց բռնել, — եթէ ընդունենք որ սիրտ
անէ բռնելու:

Ազա՞ ամէն ընտանիք լուազիր չէ կարգում,
որ ոստիկանապետի կարգագրութեանը տեղեակ
լինի: Վերջապէս տղամարնակութեան ամենա-

խոշոր մասը՝ հեռախօս չունի: —

Եւ ահա թէ ինչիցն է, որ գիշեր չեր անցնում ուղ աւտզակների խմբեր, յաճախ ոսականների շորերով, չմտնեն այս ու այն հային տունը, չկողոպտեն նրա ընտանիքին, չբռնաբարեն նրա կնոջը, ազջկան, որի հետևանքը լինում է տանուտիրոջ սպանութիւնը, եթէ նա փորձէ պաշտպանել իւրայինների պատիւը: —

Ի. Դաշնակիցների Բազու գալուց յետոյ՝ այս ամէն բարբարոսութիւններն չփերջացան, այլ քչացան և տարբեր ձևերի վերածւեցին: Օրինակ Պետրովսկից և Էնգելուց վերադարձող փախստականների, — գլեթէ բոլորն էլ ծերեր, կանայք, երեխաններ, — նաւերն կամ գիշերներն էին համառմ Բազու, կամ երեկոյեան մթին: —

Փախստականներից Թուններին,, Վրացիններին և Թաթարներին տղատ թողնելով՝ հայերին սկսում էին ցուցակազրել և փառաւորապէս կողոպտելուց յետոյ՝ մինչեւ լուսաբացն հաւածառոյցներում պահում էին բաց երկնքի տակ: Դաշնակիցականներ էին որոնում, եւ, իհարկէ, չէին գտնում:

Ե. Ինչպէս բանդերում, նմանապէս և ոստիկանական թաղամասներում ձերբակալւած հայերին՝ այնքան եւ այնպիսի ֆիզիքական տանջանքներ էին տալիս, որ մարդու մագիրը փշա-

քաղւում են: Խոշանգանքներից մհոնողներին և հիւանդացողների թիւը քիչ չէ:

Զ. Տասնեակաւոր հայ մարդկանց փողոցներում բոնոտում էին եւ կողոպտւելուց յետոյ՝ ապրանքներով բեռնաւորած կառքերի եւ սայշերի էին լծում եւ մի տեղից միւս տեղ փոխադրում: — Ապա զրանց քշում տանրում բանդերն, եւ արտաքնօցներն մաքրել տալիս:

Է. Դաշնակիցների քաղաք մտնելու նախօրէկին՝ 1000-ից աւելի հայեր քեցին Գանձակ երկաթուղու ճանապարհով: —

Դրանցից մի մասը հազիւ Գանձակ հասաւ, մեծ մասը քաղցածութիւնից եւ խոշապանքներից ճանապարհին մեռաւ:

Ը. Ժողովրդին կողոպտելով շրաւականանալով՝ վերջերում էլ կառավարութեւնը մի կողմից, եւ մասնաւոր անհատներ միւս կողմից սկսեցին հայերի տներն ու խանութներն բռնազրտւել, մանաւանդ քաղաքից բացակայ եղող հայերին:

Թ. Մինչեւ Բազուի անկումը Բալախանիի եւ Յիրէյքաթէ նաւթահանքերում 10—15 հազար հայ ծառայողներ ու բանւորներ կային: Սակայն այժմ միանգամայն արզելւեց հայերին նաւթահանքէրն զնալ: Եւ եթէ գանւեցին մի

քանի սրտու հայեր, որ գնացին, — նրանք էլ կամ սպանւեցին կամ կէս ճանապարհից վերադարձւեցին քաղաք:

Վերջերում էլ պաշտօնապէս կարգադրւեց պաշտօններիցը հեռացած համարել նրանց, որոնք մինչև Հոգտեմբերի 6-ը չէին վերադրձել իրանց պաշտօնավայրը:

Այս կարգադրութիւնը թէպէտ և ընդհանրութեանն էր վերաբերում, սակայն նրանից գլխաւոր տուժողը հայերն եղան, որովհետեւ քաղաքից հեռացողների ամենամեծ մասը հայերըն էին, որոնք ոչ մի հնարաւորութիւն չունէին վերադառնալու՝ մինչև դաշնակիցների Բագու գալն: Իսկ եթէ հնարաւորութիւն զըտնէին և սխալելով գային՝ անշուշտ Բագւում պիտի ձերբակալւէին կամ բանդարգւէին և կամ անյայտանային: Դաշնակիցների գալուց յետոյ էլ մինչև այժմ, երբ այս տողերն զըրտում են ((1919 թ. մայիսի 7-ին) Բալախանութուրքերն թոյլ չեն տալիս հայ բանուորներին այստեղ գնալու: Գնում են միմիայն մի քանի հայ ինտեներներ և երեկոները վերադառնում:

Ժ. Ջամախոյ և Գեօքչալի բաւառների փախստականներն՝ երկար ձգձգումից յետոյ՝ վերջապէս իրաւունք ստացան իրանց հայրենի-

քը վերտպառնալու: Կառավարութիւնը նրանց ձրի տուժալ և պահապաններ տւեց:

Մտկայն երկաթուղուց այն կողմը՝ նրանք ճանապարհին կողոպտեցին և խոշտանդեցին, կանանց մի մասը բռնաբարւեցին և կիսամեռ հազիւ իրանց գիւղերն հասան: Նրանց ցանքսերն արգէն թուրքերն հնձել ու տարել իրանց էին սեպհականացրել: Նրանց միտկ յոյսը մեացել էին իրանց խաղողի այգիները: Դժբաղդարար խեղճերը այգիների բերքերից օգտւելու բաղդից ևս զրկւեցին որովհետեւ մոտ 200,000 դաշն նրանց գինին՝ երկրագործութեան և պետութան կալւածների սինիստրները աճորգով վաճառահանեց յօդուտ գանձարանին:*)

Ֆէրազարար գիւղացիների թշւասութիւններին գրանցով վերջ չդրւեց: Մինչև այսօր էլ նրանք երկիւղի, տագնապի և հալածանքի տակ են աղղեցիկ անհատների կողմից:

Մեր ձեռքում եղած մի գոկումենդից երեսում է, որ յիշեալ երկու գաւառների 43 հայկական ծաղկեալ գիւղերից՝ միմիայն 14-ն են մնացել:

Մնացեալ 29 գիւղերն հարեան թուրքերն

*) Վերջերում Վրաց կառավարութիւնն և՛ Շուլավերցիների 100,000 դոյլ գինին վաճառահանեց Թիֆլիսում:

իրանց են սեպհականացը ել: Մի քանի հայկական գիւղերն ուրիշ նահանգներից եկած, կամ փախած մահմէտականներով են բնակեցրած:

Շաժամասոյ դաւասի 20,000 ազգաբնակութիւնը ընդամէնց 4560 օրավար (գեսատին) գետին ունի թէ վարուցտքսի և թէ այզիների ուխոտարքի համար, ուրեմն ինչ կը լինի տեղացիների գրաւթիւնը միթէ դադարկած գիւղերն դրսից եկող թուրքերին արւիճ:

Գեօքչայի գտւառի մի քանի արօտատեղիներն՝ կապալով են արւած թափառական լեզգիներին, որոնք մօտակոյ այզիներն փչացնում են և իրանց աւազակային լարձակումներով Հայերին ան ու սարսափի մէջ են պահում: Գալով Հայերի գաշտերին, արօտատեղիներին և այգիներին, — գրանք մահմէտականների կենդանիների համար արօտատեղի են դարձել տնարգել:

Բոլոր այզիների չտփառներն զողացւած են: Այժմս էլ սկսել են խաղողի որթերն հաւաքել ու տանել իբրև վասելիք: Տներն քանդում են և փայտեղիններն ու քարերը տանում են: Սովոր տուապող ազգարնակութեանը կերպակելու համար՝ վարչութիւնը ցուցակագրեց և խոստացաւ ամէն մի հոգու կէս փութ ալիւր ամսէնը մի անգամ: Բայց 5 ամսւայ հա-

մար տւեց մի անգամ միմիայն 10-նական ֆունդ, այն էլ ոչ ամէնքին:

Հագնելիք չունենալով ժողովաւրդը գրեթէ մերկ ու բորիկ է մանգալիս:

Սովոր չկոտորւելու համար՝ ժողովուրդը յափշտակիչների թողած հագնելիքէնը ծախեց ծիսեց ու հացի տւեց:

Դիւղտկան տանուտէրներն ոչ թէ ընտրում, այլ ուղղակի պրիստաւներից են նշանակում: Եւ, ըստ մեծի մասին, գբանք բնաւ չեն մտածում ժողովրդի մասին, այլ աշխատում են միմիայն իրանց նշանակողներին զիւր գալ:

ա. Յունիվար տմուխ (1918 թ.) Ալթի-Աղաջ զիւղի մօտ մի հայ սպանւեց և միւսը վիրաւորեց:*)

բ. Փետրւարին՝ Քիւրդամիւրի ճանապարհի վրայ՝ իրանց զիւղերն զնացող 30 հայերից՝ 22 սպանուեցին ասքէրներից և մելեցիօներներից: Նախ քան այդ՝ նոյն ճանապարհի վրայ մալական մի ֆուրդօնչիկ մալական 8 հայի զիւակ էր տեսել:

գ. Սաղիան զիւղի վրայ գիշեր յարձակւողներն սպանեցին 5 տղամարդ 3 կնիկարմատ և ծանր վիրաւորւեցին 3 տղամարդ, 7000 բուրի էլ դրամ յափշտակեցին:

*) Դրանց և հետեւեալ ամենատեսակ զահերի անւանական ցուցակն ունենք մեր ձերքի տակ:

գ. Մարտին՝ Զանգի կայարանի մօտ սպանեցին 3 մարդ.

Գիւրջիվան գիւղի վրայ յարձակւողներն սպանեցին տեղական քահանային, նրա կնոջը և երկու երեխաներին, նրա եղբօրը իր կնոջ հետ:

Երկրորդ անգամ Սաղիանի վրայ եղած յարձակման ժամանակ սպանւեցին 7 տղամարդ, 4 կնիկմարդ:

ե. Յունիսին՝ Յանլիան գիւղում սպանեցին մէկ տղամարդու:

զ. Յունիսին Գիւրջիվանի վրայ յարձակւողներն սպանեցին 4 տղամարդ և 2 կնիկարմատ, յափշտակեցին սպանւածների դրամներն որ նրանք ձեռք էին բերել զինեվաճառութիւնից:

Միրիշէն զիւղից անյայտացաւ և յետոյ Շամախւոյ մօտ զանւեց մի տեղացի հայի զիակ:

Սաղիանի մօտ անտառում յանկարծակի սպանւեց մի հայ:

է. Առեանգւել են 27 կին, որոց մէջ 4-ը 11-12 տարեկան օրիորդներ են:—

Առեանգութիւններից յետոյ՝ եղել են մեծ ու փոքր յափշտակութիւններ ինչպէս դրամի, նոյնպէս և կանանց:

ՈՐԻՍԱՑ ԶՈՐԱՑՐԻՒԻ ՀԵՏԵՒԱՆՔԸ ՊԱՐՍԿԱՍԱՆՈՒՄ

1917 թւտկանի վերջերում տեղի ունեցած զօրացրիւը, — ինչպէս ասել ենք առաջին զրիխում, — ահազին հարւած էր զաշնակիցների, ի մասնաւորի, Անգլիայի համար, որի շտեմարանը կազմող Հնդկաստանի դուռը այսպիսով բացւում էր Փերմանիայի և Տաճկաստանի առաջ:

Ուստի Անգլիան ամէն կերպ աշխատեց վակել այդ դուռը ուրիշների ձեռնով, մինչեւ ինքը հնարաւորութիւն կունենայ անձամբ դիմագրաւել թշնամուն:—

Այդ ուրիշներից մէկը, ասել ենք, Բիչերախովի գնդապետն էր, որին, սակայն, հարկ եղաւ վերջերում ուղարկել Կովկաս:—

Իսկ Պարսկաստանում մնացին, բացի Բարստովից, նա և տեղական հայերն ու Ասորիները, Վերջիններիցս կազմւած ուղմիկ խմբերի մէջ՝ զօրացրւից յետոյ էլ՝ բաւականին ուռւ սպաներ մնացին, որոնք, սակայն, չկարողացան Պարսկաստանում մնացած մեծաքանակ ուղմամաթերքն պաշտպանել յափշտակութիւնից:

Իսկ յափշտակողներն յայտնւեցին տեղական պարսիկներն Կովկասից եկած թաթորների հետ և թերեւ նրանց ներշնչմամբ:

Ապագմամթերքի պահեստներ կային Թաւ-
րիզում, Աւրմիայում, Սալմասում և Նա-
մանաւանդ, Շարաֆխանէի և Հէյդարաբատի
Նաւահանգիստներում:—

Այդ սազմամթերքին ովրապեսկու առի-
թով ընդհարութիւններ տեղի ունեցան պարսիկ-
ների և Ասորիների մէջ որ հետզհետէ սուր-
կերպարանք ստացան: Այդ ընդհարութիւնների մի-
ջացին էր, որ Ահմէտ ազա քուրդը բաւականին
Ասորիներ կոտորեց երբ նրանք Սալմաստ էին
անցնում:

Ահմէտ ագան այն յայտնի շէյխ Սըմկօյի
եղբայրն է, որ պատերազմից առաջ՝ Վարտա-
ցով-Դաշկովից թոշակ էր ստանում: և Կովկա-
սից Տաճկաստան գէնքէր էր փոխադրում, իբ-
րև թէ եր ցեղակիցներին տաճիկների դէմ զի-
նելու համար:—

Բայց պատելսազմի ժամանակ՝ դժբելով իր
խոստումը, զինում էր հէնց ռուսների իրանց
դէմ, բայց այնպիսի ճարպիկութեամբ, որ սուս
զօրավարները ոչ մի անգամ գլխի չընկան թէ
նա որպիսի և որքան դաւաճանական խաղեր է
խաղում իրանց հետ:*)

*) Սըմկօյի, ինչպէս նա և մի քանի այլ ազգե-
ցիկ քուրդի, Վորօնցով-Դաշկովի հետ ունեցած յա-
րաբեռութեան և նրանց գործողութիւնների մասին

Սըմկօյ այս Սըմկօն կամենալով Ասո-
րիներին պատժելու, բարեկամութիւն կեղծեց և
նրանց հոգեոր Պետ Մար-Շիմոնին ճաշի հրա-
միրելով՝ նենգութեամբ սպանեց:

Այս սպանութիւնը առիթ եղաւ փռխաղարձ
ատելութեան սաստկանալուն և նորանոր կո-
տորածների, որոնցից անմասն չմնացին նա և
Հայերն:

ՏԱՃԻԿՆԵՐԻ ՄՈՒՏՔԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆ.

Պարսկաստանի այդ ներքին խառնակու-
թիւնների միջոցին էր, որ 24,000 հոգուց բաղ-
կացած տաճկական երկու զիվկիզի զօրք Ալի-
Էհսան փաշայի զեկավարութեամբ, Սոսուլից
գուրս գալով՝ Վանի, Խոյի և Սալմաստի վրայով՝
Թաւրիզ էր գալիս: Նրա նպատակն էր Պարս-
կաստանի տեղացիներից և Կովկասից այնտեղ
անցած թաթարներից գնդեր կազմելով և նրան-
ցով իր բանակը ստւարացնելով՝ Հնդկաստանի
վրայ արշուել:—

Նրան միանալու էր Տաճկաստանից Կովկաս

Ծնդարձակ տեղեկութիւն ունենալ ցանկացողներին
հրաւիրում եմ թերթել իմ «Հայերի ազատագրական
շարժումների» հօթներորդ պրակը:

մեկնելու պատրաստուող տաճկտկան բանակը՝
Կովկասիան հարցը վճռելուց յետոյ:

1918 թ. Ապրելին Ալի էնսան փաշան կա-
մաց կամաց մօտեցաւ Պարսկաստանի սահման-
ներին: Այդ տոթիւ տափնազն ու երկիւղն տի-
րեց Խոյի և Սալմաստի քրիստոնեաց ազգաբնա-
կութեանը: Ասորիներին և Հայերին, որոնք
ժամանեցին գաղթել: Քրիստոնեաներից տու-
ել վատ ազգեց Ալի էնսան փաշայի գալուստը՝
նու և Անգլիացիների վրայ, որի մի փոքրիկ
փաշալ Մօրու մայօթի գիմաւորութեամբ՝ կանգ-
նած էր Սային կալայում:

Այդ տեղից Մօրու սաւառնակներով մի
քանի հրանանդ ուղարկեց Ասորիներին և Հա-
յերին՝ տեղներիցը չշարժել: խոստանալով ու-
ղարկելու նրանց կենսամթերք և սակմամթերք:
Քրիստոնեաները վստահ անդիտկան խոստ-
ման վրայ՝ սկսեցին գիմազրել տաճիկներին և
մի քանի անգամ ջարգեր տալով նրանց՝ կասեց-
րին նրանց առաջ խաղացումը, բայց միու կող-
մից տաճիկների ուժեղանալով տեսնելով ստիպ-
ւած եղան նահանջել դէպի Սային-Կալա:

Նրանք 85,000 հոգի էին, որոնցից 25,000
միայն Հայ: Ճանապարհին նրանք 15,000
հոգի զոհ տվին թէ սպանւած և թէ մեռած:
Անգլիացիները շատ և շատ դժգոհ մասցին

քրիստոնեաներից և նրանց ուղղակի դաւաճան
անւանեցին այն մաքով, թէ ինչու նրանք դաղ-
թեցին հակառակ իրանց արւած հրահանգին:
Երեկի Անգլիացիք մոռացած էին, որ իրանք էլ,
հակառակ իրանց խոստմանը, քրիստոնեաներին
կենսամթերք և սակմամթերք չ'հասցրին:

ԱՆԴՐԱՆԻԿԸ ԵՒ ԱՆԳԼԻԱՑԻՔ

Այդ միջոցներին էր որ գենեռալ Պրժեվալ-
ոկու կարգազրութեամբ՝ երզրումի պաշտպա-
նութեանը գնացող Անգլանիկը՝ անկարող լինե-
լով իր վրայ գրւած միսիան կատարել: — յետ
էր դասնում, և նախիջեանի և երեանի մէջ
եղած երկաթուղու կազմերու եղած 21 թուր-
քական գիւղերն Բաշնորաշէնի ուղղութեամբ՝
հողին հաւասարեցնում Դրօյի խմբի աջակցու-
թեամբ:

Ապա Անգլանիկը փորձեց Սալմաստին և
Խոյին օգնութեան համել, այսինքն այդ տե-
ղերից գաղթած Ասորիներին և Հայերին փո-
խարինել ինպատ Անգլիային, սակայն նրա
այդ արշաւանքն ևս անյաջող անցաւ:

Ուստի վերադարձաւ Զուլֆա: — Նրան
ուղեկցում էր անգլիական կապիտան Թրէսին,
որի թելազրութեամբն էր, — որ Անգլանիկը

Բագու Շահումեանին հեռագիր էր խփում և
մեծամասնական իշխանութիւնն ընդունում:

Երեխ ամէնքն էլ յիշում են՝ թէ Շա-
հումեանը ինչպիսի հրամանքով ընդունեց Անդ-
րանիկի յարիլը իրան և ամէնատեսակ օգնու-
թիւն էր առաջարկում նրան, ինարկէ, առանց
մտքովն անցկացնելու, որ օգնելով Անդրանիկին՝
օգնած կը լինի Անգլիացիներին, որոց ատելով
առում էր Շահումեանը: Յայտնի է նմանա-
պէս ամէնքին, որ նոյնպիսի միամիտ ողեռ-
քութեամբ՝ Շահումեանը ընդունեց նա և գնդա-
պետ Բիչերախովի առաջարկը և նրան լիազօր
հրամանատար կարգեց Բագուի կարմիր բանա-
կին:—

Այսպէս թէ այնպէս՝ Շահումեանը՝ հակա-
ռակ իր ջերմ, անկեղծ ցանկութիւնը՝ հնարա-
ւորութիւն չունեցաւ Անդրանիկին օգնելու:
Վերջինս էլ Ալի Էնան փաշային Պարսկաստան-
մանեն լսելով՝ Նախիջևանի շրջանում մի քա-
նի թուրքական գիւղեր քանդելով՝ անցաւ գնաց
Զանգեազուր:

ԱԼԻ ԷՀՍԱՆ ՓԱՇԱՆ ԹԱԻՐԻԶՈՒՄ

Անդրանիկի ասպատակութիւնների լուրն
առնելով և նրանից վրէժ առնելու հնարաւո-

րութիւն չունենալով՝ փաշան հրամայում է Խոյի
և Մակուի Հայերին կոտորել, որին մասնակ-
ցում են և տեղական պարսիկները: Մի
և նոյն ծրագրով, այսինքն Հայերին
կոտորելու ցանկութեամբ, Ալի Էնան փա-
շան շտապում է գէպի թաւրիզ: Սակայն
կեռ այնտեղ չհասած՝ խփու պատեէր է ուղար-
կում պարսից իշխանութեանը՝ աչքի ընկնող
Հայերից 10 հոգի պատանդ վերցնել:

Հայոց առաջնորդարանում այդ առթիւ տե-
ղի ունեցած ժողովը՝ վճռում է ընդունել տա-
ճիկ զօրովարի առաջարկը:*) Թաւրիզի 800 ա-
հայութեան սիրոյն համար՝ 10 պատւաւոր ան-
ձինք յօժարակամ յանձն են առնում զոհել
իրանց, եթէ հարկ լինի:

Հետեւեալ օրի նրանք յանձնուում են պարսկաց
իշխանութեանը, որ պատւով պահում է պարս-
կական թաղի մի տան մէջ մինչեւ Ալի Էնան
փաշայի գալն:

Տաճիկների պահանջմամբ՝ սրբնց վրայ տ-
ւելացան նա և 3 ազգեցիկ հայեր են այն է՝
Զաքար Նազարբէզեան, Աղէքսանզը Տէր Յա-
կորեան և Թաղէսոս Աֆթանդիկեան:

*) Նշանակալից է որ հայ ժողովրդի անունից
շարունակ և բարձրաձայն խօսող թաւրիզի դաշնակ-
ցականներն առոյն էին աւել այդ ժողովից:

Յունիսի 28-ին Ալի էհսան փաշան հասաւ Թաւրիզ: Պարսիկները խանդավառութեամբ ընդունեցին նրան: Հայերն էլ իրանց հերթում մատաղ արին և աղուհաց ներկայացրին: Այս գարունունքը, ըստ երեսյթին, փաշայի բարկութիւնը իջեցրեց:

Ուստի նա նրանց ասաց՝ «Ճէկ միլիօն հայ կոտորեցինք, բայց նրանք դարձեալ խելքի չեկան»:

Զալըմ Անդրանիկը եկաւ Խոյ՝ ջարգւեց, փախաւ. հրամայեցի Խոյի հայերին կոտորել: Անդրանիկը կոտորեց Նախիջևանի թուրքերին, ես էլ հրամայեցի կոտորել Մակուի Հայերին:

Եթէ գուք էլ որ և է կապ ունենաք Անդրիացիների հետ՝ ձեզ էլ կոտորել կուտամ»:

Այդ բողէին առաջեկաւ պարսից դահաժամունքը և յայտնեց, որ փաշան կարող է միանդամայն վատահ լինել անզական Հայերի վրայ, որոց հաւատարմութեան մասին ինքը «չ մի կասկած բնուած չէ ունեցել և չունի: Մի և նոյն իմաստով խօսեցին նա և Սպահանկան հիւպատոս Թրանսինի(*) և Հայոց Առաջնորդ Ներսէս եղիսկոսոս»:

*) Անդրիական և Թրանսիական հիւպատոսներն այդ միջոցին ճեսացել էին Թաւրիզից և դուսցել Թէհրան:

Այս վկայութիւնների վրայ՝ փաշան հրամայեց պատանդ վերցրած Հայերին ազատ թողնել:

Ալի էհսան փաշան օ ամսաշափ Ցանց Թաւրիզում և իր բանակը ստորացնելու լուս ու մունջ գործովն էր զբաղւած՝ անհամըեր սպասելով՝ Կովկասից գալիք տաճկական բանակին:

Եւ որպէս զի իր գաղանի գործունէութիւնը երեան չգայ, — խորամանկ փաշան նկան էր Թաւրիսում բարեգործական և մարդասիրական նպատակների պատրւտկով՝ հանգէսներ հներկայացումներ կողմակերպել, որոց համար ցըլւած հրաւիրատոմներով ահազին գումար հաւաքեց ժողովրդից, որոնք, կամայ թէ ակամայ, առատածեռնութեամբ վճարում էին իրանց ստացածտուսների արժեքն:

Այս տուժակներով Թաւրիզի միմիայն չայ համայնքի գրավանից 50,000 թուժան գուրս ելաւ որ այժմեան կուրսով վեց միլիօն բուրլի է անում:

ԿՈՎԿԱՍ ԱՐՇԱԿՈՂ ՏԱՅԻԿ ԲԱՆԱԿԸ

Էրզրումի և Սարիղամիշից առումից յետոյ՝ տաճիկները նոր ուժեր ստանալով Կարսի բերդի վրայ խոզացին:

Դրութեան լրջութիւնը հաշւի առնելով
մարտի սկզբներից գենեսալ Նազարբէդիանը
սկսեց թիկունքում և դած հայկական թէ ճա-
կատի թէ պահեստի զօրամասերը կենդրոնաց-
նել Կարսում:

Հայկական Յ-րդ հրացանաձիգ գունդը, որ
Թիֆլիսումն էր գտնւում, հրաման ստացաւ
անժիջապէս կարս ուղերւել: Նոյն հրամանն
ստացան նաև և հայկական նորակազմ թնդանօ-
թաձիգ զօրամասերը, որոնք գեռ ևս լիովին
պատրաստ չէին ուղարքեն զնալու, սակայն
գրութեան շտապողականութիւնը նրանց ևս
ստիպում էր ճակատ գուրս գտլու:

Այսպէս որ մարտի վերջերին՝ հայկական
կորպուսի մեծագոյն մասը՝ բաղկացած 7 հե-
տեսակ զնդից, 6 թնդանօթաձիգ բատարէալից,
2 հեծելազօր զնդից և մի շարք տեխնիքական
և այլ՝ մասնագիտական փոքրիկ զօրամասերից՝
գտնվում էր Կարսի ճակատում: Հայկական կոր-
պուսի մէջ էին մասնում նաև և մի շարք «խմ-
բեր» իրանց պետերով (*):

*) Այդ խմբերը միայն մասունք էին և բե-
ռում կօրբուսի և զիվիկիայի հրամանատարներին և
շատ գէղքերում ինքնալլում զործողութիւնների
շատ զէղքերում ինքնալլում զործողութիւնների
շատ զէղքերում ինքնալլում զործողութիւնների

Բացի այս զինուորական մասներից՝ հայկա-
կան կօրբուսի հրամանատարին, որպէս ընդհա-
նուր հրամանատարի, ենթարկւում էին նոյն
պէս Անդրանիկի հրամանատարութեամբ կազմ-
ւած մի յատուկ ջակատի զօրամաս (օսօօյ
ծիս աօս), բազկացած մէծ մասամբ տաճկանա-
յերից:— Սակայն Անդրանիկը երգլուծում իր
կրած անյաջողութիւնից յետոյ՝ թողեց այս զօ-
րամասի հրամանատարութիւնը և նեռացաւ ու-
այնունետե մասնակցութիւն չունեցաւ ոչ կար-
սի և ոչ էլ Ալեքսանդրօպօլի գէպքերին:

Զօրքերի մէծագոյն մասը՝ իհարկէ, զբա-
նուում էր ուղամագաշտում և անմիջական շփման
մէջ էր թշնամու հետ: Կարսի բերզում կային
երկու հետեւակ գունդ և մի քանի անհնան խրչ-
բերու՝ ոչ բաւարար թւով՝ թնդանօթաձիգներ:—

Ապրիլի սկզբին զրութիւնն սկսեց աւելի
և աւելի բարզանալ: Թուրքերը մօտենում էին
Կարսին: Թազմագաշտի հայ զօրքի մէջ բա-
րյաւքումն էր տիրում, իսկ տաճկիները օրա-
ւոր նորանոր ուժեր էին ստանում: Ապրիլի
3-ին նրանք սկսեցին սմբակուծել բերզի հեռա-
ւոր մարտկոցները:— Թազմագաշտում և դած
զօրքերի մի մասը հաւաքւեց բերզի մէջ, ուր
7—8 հազար զօրք զոյտցաւ, որ, իհարկէ, ալդ
հոկայ բերզի պաշտպանման համար չափազանց

Փոքը թիւ է։ Աւստի պաշտպանողների թիւն առելացնելու համար՝ բերդապետ գեն. Դիկի հրամանով զինուորակոչի ենթարկւեցին կարսում գտնւած բոլոր գենքի ընդունակ մարդիկ։ Սակայն գժբաղութիւնն այն էր, որ թնդանօթաձիգ և այլ մասնագիտական զօրքերն թէ քանակի և թէ մանաւանդ սրակի տեսակէտից, շատ ցած էին կանգնած հարկ եղածից։ Ռազմամըթերքի պակասութիւն չկար։ Բերդապետի մօտ եղած խորհրդակցութիւնը պարզել էր, որ բերդը կարող է մի ամբողջ տարի դիմագրել։ Կենուամթերքի պակասութիւնն էլ այնքան ըգգալի չէր։

Զօրքի արամագրութիւնը՝ հակառակ դաշտային զարքի արամագրութեանը՝ բարձր էր։ Բերդի պատմական անառիկութիւնը՝ բոլորին էլ վստահութիւն էր ներշնչում։

ԶԻԷՆԿԵԼՈՒ ՀԵՌԱԳԻՐԸ

Սպրիլի 9-ին տաճկական թնդանօթներն սկսեցին սմբակոծել բերդի տուաջապահ մարդկոցները, որոց մէկին, հետեւել օրը, տաճիկները նոյն խոկ խլեցին։ Այս բանը, ինչ տուել կուզի, թէ և վատ ազդեց զօրքի վրայ, սակայն լոյս 11-ի գիշերը ծերունի զնդապետ Սամարցեանը

70 զինուորով խիզախ յարձակմամբ հերսուաբար յետ խլեց մարտկոցը տաճիկների ձեռքից ծերունի հերոսի օրինակը բարձրացրեց զօրքի ողին, և նա պատրաստակամութիւն յայտնեց ինչ զնով էլ որ լինի՝ պաշտպանել բերդը։

Տենգոտ պատրաստութիւնների և ուժերի լարման ու ովհերութեան այդ պահուն՝ յանկարծ լուր տարածւեց, որ Անդրկովկասեան կառավարութեան զինուոր Զիւէնկէլուց հեռագիր է ստացւել բերդը յանձնել տաճիկներին։ Համաձայն կնքւած զինագույնարի։

Զօրքի արամագրութիւնը ընկաւ, լուսում էի տժգունութիւններ, բայց ինչ արտօն, պէտք էր հնապանզւել կարգադրութեան։

Ապրիլի 11-ին բերդապետ զեն. Դիկը, Անդրկովկասեան կառավարութեան և Հայոց Ազգային Խորհրդի նշանակած արտակարգ մոմիսար Միքայէլ Արքումանեանի հետ բանակցութիւն սկսեց, բերդն յանձնելու պայմանները մշակելու համար։

Տաճիկների զրած վերջնական պայմանը բերդն յանձնելու մասին այս էր։ 1) Հայոց զօրքերը պէտք է յանձնէին բերդի բոլոր մարդկոցները Ապրիլի 12-ին կէսօրւայ ժամը 12-ին և իջնէին քաղաքի ցածր մասը կարս չայի տփին և ապա հեռանային քողաքիցմինչե հետե-

Նալ օրւար՝ Ապշիլի 13 ին երեկոյեան ժամը 5-ը. 2) զօրքը իբաւունք ունէր վերցնել իր հետ իր գէնքի և ուտեսած անհրաժեշտ պահեստը և զօրամասային գոյքերը; 3) Մինչեւ զինագագարով սրոշւած Արփաչայի սահմանը յետքաշւելու համար՝ տրում էր 3 օր ժամանակամիջոց; 4) Հեռացող զօրքի կողմից քաղաքը շպէտք է այրելը և քաղաքում եղած տաճիկ գերի ասքէրներն չպէտք է կոտրածի ենթարկւեին:*)

Նշանակած ժամին բերդը յանձւեց թշնամուն: Ոկուեց սարսափելի շփոթ և իրարանցում զօրքի մէջ: Աչնչով չէր լինում համոզել հայ զինուրներին, որ զինագագարի պայմանների համաձայն նրանց կեանքն ապահովւած է:

Եղանակն էլ աւելի նպաստում էր ստեղծւած տագնապին: Երկու օր անընդհատ տեղացող անձրել կարսից դէպի Ալէքսանդրօպոլ տանող խճուղին և նրա երկու կողմերը այնպիսի սարսափելի ցեխ էր դարձրել, որ ձիանքը թաղւում էին և այլ ևս չէին կարսանում կառու ցեխից դորս գալ:

Հայկական կօրբուսը այս նահանջի ժամա-

*) Վերջին երկու պայմաններն էլ հայերը խախտեցին. հեռացող զօրքը կրակի մասնեց քաղաքը և գերի ասկեսըներից շատերին սպանեցին:

նակ կորցրեց ոչ միայն իր զօրքի մեծ մասը... դասալքութեամբ, այլ և իր գոյքերի ուազմամթերքի տանւալզն $\frac{3}{4}$ մասը, որ մնաց կարս— Ալէքսանդրօպոլ ճանապարհի վրայ:

Փախստականների սայլերը այնպէս էին ըսնել թէ երկաթուղին եւ թէ խճուղին, որ անցնելն անհնար էր դառնում: Պէտք է խոստովանել, որ տաճիկները պահեցին իրանց խօսքը եւ նահանջի երեք օրւայ ընթացքում ոչ մի հրացան չ'արձակեցին թէ եւ, եթէ ցանկանային, Հայոց ամբողջ զօրքը կը գերեին կամ կոչնչացնէին:

ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՈԼՈՒՄ

Ալէքսանդրօպոլ հասնելով Հայոց զօրքերի հրամանատաները հաւաքելով իրանց զօրքերի մնացորդները և կէս գարձած զօրամասելը՝ տեղաւորեցին մի մասը քաղաքում, մնացածը մօտիկ գիւղերում:

Թւում էր թէ ամէն ինչ վերջացած է: Օր աւոր սպասում էր հաշառութեան: Զօրքը նոր կոիւներ անելու ոչ տրամադրութիւն ունէր և ոչ էլ սպասում էր նոր ընդհարումների:

Այսպիսի հանգիստ և անհոգ վիճակի մէջ

էր զօրքը, երբ ժայիսի 15-ին առաւօտեան վաղ յանկարձակի սկսեցին որոտալ թնդանօթները Արփաչայի ափին: Այդ այնպիսի անտեկնկուլ երեսյթ էր, որ մի քանի ժամ գեռ ոչ ոք, մանաւանդ շիւղերում գտնուած զօրքը պատրաստութիւն անգամ չէր տեսնում զիմաղբութեան չիմանալով բանի էութիւնը և ենթագրելով, որ պատահական թիւրիմացութիւն է: Նոյն իսկ տուաջին զիվիզիայի շտապը, որ գտնուում էր քաղաքում, թնդանօթի տուաջին որոտումից մի ժամ յետոյ՝ չզիտէր թէ բանն ինչումն է, երբ պարզւեց որ թիւրիմացութիւն կամ հանաք չէ, այլ տաճիկները լրջօրէն ոմբակոծում են քաղաքը, ուստի և սկսեցին շտապ հրահանգներ արձակել պաշտպանութեան զիմելու:

Չնայած այս բարորին՝ չայոց զօրքը կարողացաւ մինչև երեկոյեան 7—8 ժամը զիմաղրել, մինչև քաղաքացիք և մօտակայ զիւղերն կարողացան հեռանալ, փախչել: Երեկոյեան 8 ժամին քաղաքը յանձնւեց տաճիկներին: Բանակցութիւններից պարզւեց, որ տաճիկները պահանջում են 25 վերստ յետ նահանջել քաղաքից և երկաթուղու զիծը այնքան տարածութեամբ յանձնել նրանց: Պարզւեց որ այդ պահանջը տաճիկները վազօրօք արած են եղել Անդրկովկասեան Կառավարութիւնից և նա իր

համաձայնութիւնը աւած պրծած է եղել զեռ մայիսի 13-ին: Սակայն Զիենկելիմ իր ժամանակին յայտնած յէր Ալէքսանդրօպոլ՝ զօրքերի հրամանատարութեանը:

Եւ Զիենկելու այդ, ուրիշ բան չասելով, — աններելի զանցառութեան պատճառաւ՝ Ալէքսանդրօպոլի և նրա շրջակայ ազգաքնակութեան մի խոշոր մասը պուկ եկաւ իր վաթանից և զաղթի ճանապարհն ընտրեց դէպի Վրաստան և այնտեղից էլ գէպի Հիւսիւռային Կովկաս:

Հետեւնք, ընթերցող, այդ դժբաղզներին:

ՇԻՐԱԿԵՑԻՆԵՐԻ ՓԱԼՈՒՏԸԸ

«Ալէքսանդրօպոլ քաղաքը իւր շրջանի գիւղերով Մայիսի 15-ին տաճիկների յարձակման օրը սկսեց գաղթել, — այսպէս է նկարագրում այդ փախուստը ինքը փախստականը:

Գաղթականականութիւնը կնում էր երեք զծերով: Ալէքսանդրօպոլ քաղաքի բնակչութիւնը իւր մօտիկ զիւղերով՝ Դանլիջուց—Կաղս, 2 Քէթի, Օրթաքիլիսայ, Թափարիի, Ղոնազուան, Դիւզքեանդ, Դիրաքլար, Երկու Քեափանձակները գաղթեցին դէպի Զաջուռ զիւղը, որտեղից անցան Զաջուռի լեռնանցքը և մտան Փամփակու ձորը: — Երկրորդ զծով, որ տանում է Ա-

բագածի լեռնաշղթայով գէպի Փամփ, որտեղից
և Համամշխ-Ղարաբիլիսայ գաղթեցին, Դահարլի,
փոքը Ղարաբիլիսայ, Թափադոլակ, Ֆլոքան,
Քնուլի Ղափլի, Տաշան-Ղլախ, Ազին, Հոռոմ
և Սրագածի ստորոտի բոլոր գիւղերը սկսած
Աղիեամանից մինչև Նորաշէն: Երկրորդ գծով
գաղթականները բաժանւեցին երկու մասի. մի
մասը Նորաշէն-Փամփ լեռնաշղթայով մտաւ
Համամշխ-Փամբակի Զորը, իսկ միւս մասը՝
Ղանդաղսազ գիւղով անցան գէպի Սրարան, աշ-
խատելով մտնել Սրարատեան գաշտը: Երրորդ
գիծը Ալիեանու ձորն էր, ուր գաղթեցին Ղայ-
դուլի կոչւած շըջանի գիւղերը, սկսած Բատե-
վան, Քան աղբիւր մինչև Ալիեան, որոնք նոյն-
պէս մտան Փամբակու Զորը:

Արփաչալ գետի ափին գտնւող գիւղերը
գաղթել էին անակնկալ, մինչև անգամ առանց
գոտիի, իսկ մնացող գիւղերը կարողացիլ էին
վերցնել սալլերի վրայ իրանց ունեցած անա-
լին ամենաանհրաժեշտ իրերը՝ ալիւր և ընտա-
նի կենդանիները:—

Տաճիկ զօրքը հետևում էր միայն անակն-
կալի բերել և աշխատել խաղաղ ժողովը ին տե-
ղից շարժել և նիւթապէս քայքայել, և այդ յա-
ջողւեց նրանց: Նրա խորամանկ քաղաքականու-
թեանը և սիրաշահ լեզւին զոհ գնաց համարեա-

ամբողջ հայութիւնը,— ամբողջ եմ ասում, ո-
րովհետեւ թէ և ասում եմ Ալէքսանդրօպօլ քա-
ղաքն իւր շըջանով, բայց չպէտք է մոռանալ
որ թէ քաղաքում և թէ շըջանում գաղթել էին
Ալաշկերտի Խնուսի, Էրգերումի, Կաղզվանի,
Ղարսի, Օլթիի և Սրգահանի բնակչութիւնը,
ուրեմն գաղթականութիւն աւելով պէտք է հա-
կանալ համարեա Սրեերեան, Սրեւմտեան Շի-
րակը եւ Տաճկահայ գաղթականաւթիւնը:

Տաճիկ կառավարութիւնը,— շարունակում
է յօդւածագիրը,— Շէքքէթ Փաշայի միջոցով
յայտնել էր, որ Ալէքսանդրօպօլից 25 վերսա
գէպի արեւելք լինելու է իւր սահմանը:— Այդ
սահմանն անցնում է Ջաջուռ լեռնաշղթան Ղալ-
թազի կայարանից 3 վերսա հեռաւորութեան
գտնւող Մեծ Բէգեանդ գետի սահմանը: Ուրեմն
մեր զօրքը գիւղերը մայիսի 15 լոյս 16-ից
յետ քաշւեց եւ ամրացաւ Նալբանդ գիւղում:
Զօրքը ասելով պէտք է հասկանալ միմիայն ար-
տիլերիան եւ ձիւոր զօրքը, իսկ հետեւակնե-
րի մասին թող խօսեն քարերն ու ձորերը:—
Հետեւակ զօրքերը ցաք ցրիւ, ամեն մարդ իւր
ընտանիքի հետ, հրացանը ուսին փախչում էր
գէպի Ղարաբիլիսայ: Այդ հետեւակներից յետ
չէին մնում Ղարսեցի եւ Ալէքսանդրօպօլեցի
պ. պ. պրատօրշնիկները իրանց փայլուն կոճակ-

ներով եւ ուսագիրներով։ Ո՞հ որքան երեխաներ, որքան կնիկներ ուսնակոխ եղան այդ փախչող զինւորների եւ իրանց առաջ եղած աւտօմոպիլների տակ որովհետեւ իրարանցումը եւ պանիկան այնքան անակնկալ էր, որ ընտանիքի մինչեւ անդաւ երկու անդամները կորցրել էին միմեանց։*)

«Որքան մարդիկ բնիան գնացքի տակը, որովհետեւ գնացքի կողքերից եւ կտուրներից մարդիկ կախւել էին ինչպէս սարդեր։ Դալթաղչի կայարանից մինչև Մեծ Ղարաբիլիսայ 40 վերստ է, տեղ տեղ ձորը ունի մօտ 7 վերստ լայնութիւն, ահա այդ երկարութեան եւ այդ լայնութեան տարածութեան մէջ՝ ես տեսայ ժայիսի 16-ին հայ գողթականութիւնը եւ դեռ երկու կողմից Արագածի եւ Աղիեսնի ձորից գոլիս էին եւ մանում Փամբակ։ Խտանիխուռն գնում էին սայլեր, ֆուրգոններ, ոչխար, կով, հորթ իրարու խառնած այնպիսի մի որտաճըմլիկ տեսարան էին ներկայացնում, որ մարդ մի բոսէ ինքն իրան կորցրած՝ սահնում էր դէպի անհուռնը եւ շշմած նայում չորս կողմը։

«Ղարաբիլիսում ամբողջ տափարակ դաշտը

*) Ճիշտ այս ձեռվ եղաւ, — ինչպէս տեսանք և Գեօքչայի, Շամախւոյ և Բագուի ազգաբնակութեան փախուստը։

ասեղ գցելու տեղ չկար, Փչացաւ, ոտքերի տակ գնաց բոլոր ցանքուր, գաղթը այնպէս անակնկալ կերպով կատարւեց, որ թէ քաղաքի եւ թէ գետի ափին գտնւող գիւղերը դուրս եկան առանց մի որ եւ է բանի։ Ինչ էր ուտում այդ ժողովուրդը կամ թէ ինչով պիտի ապրէր, — այդ մասին ոչ ոք չէր էլ մատածում։

Ամէն մարդ մատածում էր մի կերպ փախչել եւ ազատւել տաճկի անգութ որից։……

Դալթախչի կայարանում գտնւում էր գենեռալ Արէշելը, որին Զէֆքէթ փաշան զրել էր Ալէքսանդրոպոլ, որ ինքը միայն ցանկացել է ձեռք բերել երկաթուղու գիծը եւ ժողովուրդի զուր է շարժւել տեղիցը՝ ուսափ խորհուրդ էր տալիս վերագանալ։ Եկողները պատում էին, որ տեղական բնակչութիւնը աղուհացով ընդունեց տաճկաց զօրքին եւ տաճիկ հրամանատարը խոսացաւ ոչ ոքի չգիպչել(*) և թոյլ չտալ քաղաք մանելու թալանչի թաթարներին եւ քիւրդերին։

Բայց գրանք ժամանակաւոր յոյսեր են, —

*) Այդպիսի բովանդակութեամբ մի թուղթ գրել էր Նազիմ փաշան Գանձակից՝ Գիօքչայի գաւառի հայ գիւղացիներին, ոսկայն «կարմիր բանակի» լեզապատռ փախչող զինւորները՝ ինեղճ ժողովրդին ևս լեղաճաք արին և նըանցից առաջ փախան։

շարունակում է յօդուածագիլը:— Երբ դու
թոյլ ես եւ թշնամին ուժեղ, նա միթէ գիտէ
ի՞նչ է զութն ու սէրը: Կորչենք, հեռանանք,
լուսում էր ամէնուրեք: Հայրն ընկած որոնում
է ընտանիքը, մայրը խելազար փազում է զէ-
սուղէն «բալաս» կանչելով: Ահա մի տեղ ժո-
ղոված փոքրիկ երեխաները լաց են լինում հօր
դիակի մօտ: Այս, նա ընկաւ գնացքի տակ,
գնացքը կուրեց նրա ոտքերը և մեռաւ, թող-
նելով փոքրիկներին սոված, գաղթի ճանապար-
հին: Դեռ հօր մահը բաւական չէր, նրանց մայ-
րը մնացէլ է գերի թուրքերի ձեռքը: Մի այլ
տեղ կուչ է եկել մի զանգւած. մօտենում են,
դէն են զցում վրայի փալասը և ի՞նչ:— աչքե-
րը չուած, բերանը գոցւած սառած ընկած է նա:
Ո՞վ է, ի՞նչ մարդ է, ոչ կայ ոչ տէր, ոչ տիրա-
կան:

Այդ երեկոյ կարգադրւեց, որ բոլոր այն
զինւորները, որոնք փախել են և ունին զէնքել,
առաւօտեան անպատճառ ներկայանան Ղարա-
քիլիսայի զինւորական ատեանը, որտեղ պէտք
է կազմւեն զնդեր զիմագրութիւն ցոյց առաւ-
թշնամուն, որպէս զի նա չշարժէի առաջ:

Մեր երիտասարդները սակայն մտածում
էին դեռ անցնել Թիֆլիս, Թիֆլիսի ճանապար-
հը փակել, այսպէս որ մեր փախչող առիւծնե-

րին մնում էր առանց այլ և այլութեան սթափ-
ւել, խելքի գալ և պաշտպանել իրանց լնատնի-
քի պատիւն ու նամուսը: Սարգար և Սագախ-
լու ճանապարհը գառել էր Հայերի համար մի
փորձանք, նա մէկ բացւում էր և մէկ էլ փակ-
ւում:

Այդ ճանապարհը փակւում է Բորչարուի և
շրջակայ զիւղերի թուրքերից և այդ փակւելն
ու բացւելն շատ սիրտ կապ ունի տաճիկ գօր-
քի աւաշ խաղացման հետ: Երբ տաճիկ գօրքը
մի տեղ էր ուզում յարձակում գնրծել, այդ
ճանապարհը սկսում էր փակւել, որպէս զի
Թիֆլիս կորած լինի: Քանի քանի անգամ Հա-
յերը պահանջեցին Սէյմից, կամ ինքն իւր ու-
ժով բացանէ, կամ թոյլ տայ տեղական ժողո-
վուրդից սեպհական ուժերով բացանել այդ ճա-
նապարհը, բայց Սէյմը բաւականանում էր մի-
այն մի երկու թուրք և վրացի պատիրակներ
ուղարկելով, որպէսզի համոզեն բանդաներին և
բանան ճանապարհը:— Բայց ո՞վ էր լոռոր, կա-
յին երկու բրօնիկներ որոնք միայն ծառայում
էին Գանձակի գիծը պաշտպանելու բօլշէիկների
գէմ: Դեռ Ալէքսանդրովովուշ չդրաւած՝ գաղ-
թականական զնացքներ կանգնած էին Սանահին
կայարանում: Նրանց մէջ կային սովոր մեռնող-
ներ: Այդ զնացքները մի կերպ բրօնիկի ազ-

գեցութեան տակ կարողացան անցնել, իսկ յետեկից գնացող գաղթականական գնացքը ենթարկւեց յարձակման, կանայք և երեխաներ փախան գէպի սարերը, բայց բարերազդաքար Թիֆլիսից ուղարկւած երկու էշէօն Ղարաբաղցի աղաները կարողացան ազատել այդ խեղճերին և բերել Թիֆլիս:—

Բայդ միթէ Հայերը իրանց ուժերով չեն կարող բաց անել այդ կործանիչ ճանապարհը, կարող էին, սակայն Փեղեջկօրին և Զիւնկելին գլուխներս կախ, բաց աչքերով միթէ կարող էին նայել մուսաւատիսաների բաց ճակատին և փայլուն գէմքերին:—

Հապա Բնչ էր անում մեր Ազգային Խորհուրդը:

— Նրա խօսքերը մնում էր ճայն բարբառոց յանապատի: Եւ եթէ ուզում էր մէկը բուզքել, կառավարութիւնը նրան համոզում էր, որ չ'պէտք է սրել յարաբերութիւնը հարեան ազգերի մէջ:....—

«Մեծ Ղարաբիլիսայից սանիտարական գնացքով մայիս 17-ին.— վերջացնում է յօդւածագիրը, — հասայ Թիֆլիս»: *)

ՓԱԽՈՏԱԿԱՆՆԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Սակայն Թիֆլիսի փողոցներում բաւականին տանջւելուց, չարչարելուց ու զոհելուց յետոյ՝ գաղթականների մի մասը հիւսիսային կովկասի ճամբան ըննեց:

— «Հայկական քարւանը տիուր սգերթը, — գրում է ականատեսը — զնում էր ու զնում. Երեկոյեան գէմ հասանք Դուշէթ: Մեզնից առաջ եկողնէրը յարմարաւոր տեղեր էին գրաւել, մենք էլ մի անկիւնում կուչ եկանք. կրակ վասեցինք ու շուրջ բոլորեցինք: Թէյնոց ունեցողները թէյի պատրաստութեան յետեց ընկան. ոմանք էլ իրանց տոպրակներից հանած չորացած կուկուրուզի նման հացն էին կրծառում և գրանով կազդուրում իրենց խոնջացած օրգանիզմը: Ես էլ կրծեցի իմ հացը և քանի որ անվերջ ճամբորգութիւնն ինձ բոլորովին յոդնեցրել էր հալ ու մաշ էր արել. պառկեցի չորդետնի վրայ ամառային վերաբիուս վրաս, որպէս զի մի փոքր քնեմ և մուանամ ինձ տանջող մաքերը:»

Հարեաններս, որոնք ինձանից աւելի երիտասարդ էին, նրանք էլ իրենց շինելների մէջ փաթաթւած, խոր քուն մտան: Ցուրտ գիշեր էր, ուշ գիշերին լուսում էր միայն հարեաններ:

*) Արև 1918 թ. № 113

րիս լառմփոցը և երբեմն էլ քնամէջ խօսակցութիւններ, հայնոյանքներ: Շատերը երազում բըռունցքներն էին ճոճում:

Քնել չկարողացայ, նստեցի կրակի մօտ և մտքերիս յետեից բնկայ, երբեմն ինքնամոռացութեան մէջ ընկած՝ վերանում էի անիրաւաշխարհից գէպի անհունի իրերը և օդային ամբոցների յետեից ընկնում, որոնք իսկոյն փուլ էին գալիս. երբ իմ առաջ նորից տեսնում էի թափառական գաղթականներին յատուկ կրակը: Այս գաղթական բառիս բուն մտքով: Մի օրւայ ընթացքում կորցրել էի իմ յիսուն տարւայ աշխատանքն ու տուն, տեղ, կահ կարասիք և որ գլխաւորն է՝ ընտանիքո՞ւ երկու աղջիկները մնացին կուռղ զօրքերի մէջ, նրանցից մէկը գնդացիրի վրայ աշխատող, իսկ միւս երկու փոքրիկ աղջիկներս էլ կնոջն հետ կորել էին. ուր էին նրանք, որ քար ու ծերպի տակ, ևս այդ չգիտեմ: Շտապում էի գէթ երկու տղաներիս գտնելու. որոնցից մէկը սովորում է Բագու, իսկ միւսը Մոսկւա. ոչ մէկից ամբողջ վեց ամիս է ոչ մի տեղեկութիւն չունէի:—

Օգտերով յարմար վայրկեանից ընդհանուր գաղթականութեան հետ միասին գնում էի Թուսաստան գաւակներիս գտնելու:

Շուրջս մութ. սև գիշեր, ցուրտ ու յուսա-

հատ, մաքերս անյայտութեան մէջ եղած վեց զաւակներիս ընտանիքից յետեից, տոաջ գաղթականներին յատուկ կրակը, գաղթականական—ճամբորդական գտաւզանս, եթէ այդ բուլորի վրայ աւելացնենք նա և ընկերակից—հայութեան թշւառ, բնաւեր—տարագիր վիճակը պատակերն ինքնեն հասկանալի կր լինի քեզ համար, հայ ընթերցող, թէ որպիսի դառնութեան և յուսահատութեան դռան բաժակն էի վայելում Դուշէթի պատերի տակ:

Եւ քանի—քանիսը ինձ նմաններից երազանքի թէ արթում վիճակում խորհում է այս նոյն մտքերը, յուզւում իրան շրջապատող դառն վիճակով, ովք կարող էր մտածել, որ հարիւր տարուց յետոյ Ալէքսանդրօպոլը պիտի դատարկւի, ժողովուրդը բնաւեր լինի:

Մենք որ բովանդակ հայութիւնը մի տեղ խմբելու, նրանց ազատագրելու մասին էինք տեսչում, թիւրքահայութեան ազատ կեանքի համար էինք մտածում, բուն ուստական մասն էլ ձեռքից տւած, հայութեան մի խոշոր հատւածի տերիտորիան վատանգած փախչում էինք, գէպի ուր, այդ մասին հարց չէինք տալիս միշտեանց:—

Այս տողերից յետոյ՝ յօդւածագիրը իր անցեալն վերոյիշելով քոնք տանում է և երը

«գալթնեցի, — զբում է նա, — լոյս էր արդէն. բնազգօրէն կնոջո ձայն տւի, կարծելով թէ տանն եմ, բայց պատասխան չստանալով միայն զգացի, որ Դուշեթի պատերի տակ կծկւած խիզճ ու մոլոր գաղթական եմ միայն, տուն ու տեղից կտրւած բնաւեր մի թռչուն, աչքերս ակամայ լցւեցին արտասունքովս: —

Արդէն աղմուկը բոնիլ էր չորս բոլորքը՝ տիսուր սգերթի հսկայ քարւանը շարժւեց. մենք էլ մօտեցանք մեր սայլը նստելու. սայլապանը մերժեց պատճառաբանելով որ եզները յոզնած են և այլ ևս չեն կարող առաջ գնալ: Երբ նրանից վճարած ամբողջ վարձի կէսը յետ պահանջեցինք, հեղնանքով մերժունք ստացանք, թէ ինչ յիմարներ ենք, որ այդպիսի բանի մասին խօսք ենք բացանում: ընկերներս ստիպւած Դուշեթից նոր սայլ վարձեցին և տեղաւորւած միացանք քարւանին: Գնում ենք (*):

Քարւանը հսկայ շարժում է առաջ, դանդաղ ու տիսուր: Հեռացանք Դուշեթից, այստեղ թողնելով անհատական ապրումներիս և երազանքներիս մի քանի ժամւայ տանջանքներիս մի էջը. միայն ճանապարհը զառիվայր է, ծածկւած է մացառուտներով-մէկ բարձրանում, մէկ իջ-

*) «Արև» 1918 թ. № 118.

նում ենք: Զորի մէջ ներքեռում հոսում է Կաղբէք գեալը, աջ ու ձախ քարերի ծերպերի ու ժայռերի վրայ ընկած են Օսետինների, Վրացիների հատ ու կտոր զիւղեր, բաղկացած միքանի աներից:

Իշանք ձորը և չորս օր երկարաւեև ու դըժւարին ճամբորդութիւնից յետոյ՝ հասանք Կաղբէք կայարանը, ուր մի փոքր հանգիստ առանք կ գիշերն մնացինք այնտեղ:

Մեղնից առաջ եկած բաւական թւով գաղթականներ կային այնտեղ, որոնք 2—3 օր սպասում են և չեն կտրող առաջ անցնելու վախենալով կամուրջի մօտ բանած ինզուշներից, որոնք, ինչպէս պատմում են, որպէս թէ կողապտում են անցնող դարձողներին: — Վերջապէս որոշ համաձայնութեան են եկել այդ երեւակայեալ ինչուշների հետ, որ գաղթականութիւնը միայն իրաւունք ունենայ ցերեկւաց ժամը 2-ը անցնելու, նրանից յետոյ այլ ևս թոյլատելի չէ այդ ուղիով ճամբորդութութիւն:

Առաւոտեան ժամը 10-ին դուրս եկանք կայարանից: Մի փոքր զնալուց յետոյ, եբբ քարւանի ծայրն արդէն հասել էր Գարիալի կամըջին՝ բաւական երկար տարածութեամբ ձգւող քարուանը կանգ առաւ, լուր տւին, որ

Ինգուշները չեն թողնում կամուրջն անցնել:

Իջալ սայլից և առաջ անցայ գործի էութիւնը մօտիկից տեսնելու համար: Եւ ինչ զարմանք. ինգուշների փոխարէն կամուրջի առաջ տեսայ մօտիկ գտնւած բերդի վրացի պահակներին, որոնք ճամբան կտրած խուզարկում էին բոլորին, որպէս թէ զինաթափ անելու նպատակով, բայց չէին մերժում ի հարկէ այդ «խուզարկութեան» ժամանակ ամենաթանկացին ապրանքներն ու իրերը խրացնելուց: — Զէնքը մեզ առէք, ասում էին նրանք, մինոյն է ձեզ պէտք է առնեն բօլշէկիներն ու ինգուշները: —

Ոչ մի բողոքի նրանք ուշք չդարձրին, երեք հակառակորդներին սպառնում էին զնդականը:

«Խուզարկութիւնը» վերջացաւ, բայց գեռ չէին յագեցած նրանց ախորժակները. նրանք այդ անհիւրներ նոր տեսակի կողովտիչները դիմեցին մի նոր խորամանկութեան:

Ինգուշները կամուրջը փակել են, ասում են նրանք, թոյլ չեն տալիս ձեզ անցնելու, մեզ առաջարկել են, որ ձեզ նորից յետ դարձնենք ձեր վայրերը, բայց մենք միջամտեցինք և ինգուշինք, որ այսպիսի բան չանեն և մի փոքր զիջող լինին: Նրանք մեր աղաչանքներին

զիջեցին միայն մի պայմանով, որ ամէն մէկից որոշ վճարով բաց թողնենք: Ատքով գնացողներից իւրաքանչիւրը պիտի վճարէ 10 ր. սայլին նստողը՝ 20 ր. տաչկին (մի ձիանի փոքրիկ սայլ) նստողը՝ 50 ր. ֆայթոնին նստողը՝ 80 ր. աւտոմօպիլով գնացողը՝ 100 րուբի: Եթէ չտաք այդ փողերը՝ առաջ չէք կարող գնալ, որովհետեւ ձեր վերադարձն էլ արգելում ենք մենք:

«Ինգուշներն» արգելում են առաջ անցնել, վրացի պահակներն թոյլ չեն տալիս յետ վերադարձնալ: Մեր շուրջը՝ բարձունքներում երկացին արգէն զնդացիրներն իրեն սպառնալիք գրաները վճարելու և պայմանը կատարելու համար:

Սոտ Յազարի հասնող գաղթականոսթիւնն ընկել էր ծանր վիճակի մէջ, չէր իմանում ինչ անի: Յուսահատ ժողովուրդը կատարեց և այս պահանջը: — Եւ ահա օրը ցերեկով սկսւեց այս նոր տեսակի թալանը: Վճարում էին վրամները և անցնում կամրջով, չունեորները արցունքներն աչքերին սրանից նրանից մուրալով մի կերպ լրացնում էին պահանջւած գումարները և իրաւունք ստանում «երջանիկների» շաբան անցնելու:

«Բոլորդ պիտի վճարէք, ձայնում էին պահակները, չվճարողները կը պահւեն մեզ մօտ և

սովամահ կը լինին. ուրեմն վարւեցէք, ինչպէս
կամենաք»:

Երեք ժամ այսպէս տանջւելուց յետոյ՝
վերջապէս յաջողւեց կամուրջն անցնել քարւա-
նի առաջին մասին:

Չորս վերստ տարածութւն էինք կարել,
երբ յանկարծ պատահեցինք վլադիկավիկապից
եկող բօլշեվիների աւտօմօպիլների, որոնք իրենց
հետ ունէիմ և գնդացիրներ։ Երբ լոեցին նրանք
կատարւած թալանի մասին՝ անմիջապէս շատ-
պեցին գէպքի վայրը—Դարձալի կամուրջը։

Արդէն մեր տկանջին էին համառ մ հրա-
ցանների և գնդացիրների ձայներն։

Թալանջիներն իրենց գործը տեսած ան-
յայտացել էին։

Մենք արգէն ինգուշների երկրամասի վրայ
էինք. սիրալիք ու քաղցր վերաբերմունքի։ Նրանք
զիւղերում իշեանողներին՝ սիրալիք կերպով բե-
րում էին տալիս գաղթականութեան ջուր, մա-
ծուն, կաթ, քաղցածներին հաց։

«Սւագակ» Ինգուշներից և ինչ «բարի դրա-
ցիական» վերաբերմունքով ճանապարհ դրին
մեր հարեանները Դարձալի կամուրջից։



ՓԱԽԱԿԱՆՆԵՐԸ ՀԻՒԽԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Վեցերորդ օրը թրջւած ու յոգնած քար-
ւանը՝ գանգաղ ու տխուր մօտեցաւ վլադի-
կավիկին։ Տեղական Հայ Ազգային Խորհուրդը
արգէն մեզ տեղաւորելու համար նախօրօք
պատրաստութիւններ էր տեսել. տեղաւորւե-
ցինք զօրանոցներում, եկեղեցում, դպրոցներում,
բանդերում և հրապարակներում։

Այնպէս մի քանի օր հիւրընկալւելուց յե-
տոյ՝ գաղթականութիւնն սկսեց ցրւել Ռուսաս-
տանի զանազան քաղաքները, - գէպի Հիւսի-
սային կովկաս, Արմաւիր, Ստաւրապոլ, Եկա-
տերինադար։

Թէ որքան ծերեր, պառաւներ ու երեխա-
ներ մեռան ճանապարհին, այդ մասին հաշիւ
ու համար չկայ։ Քաղցն ու յոգնածութիւնը
շատ շատերին ստիպեց բաժին գառնալու մեր
յետեռում ձգւող ուազմա-վիրական խճուղու եր-
կու կողմերում տարածւող հապճէպ գերեզմա-
նաշարքին։

Մեր գոյութեան օրւանից մինչև այսօր
մի վերջին դառնութեան ու տանջանքի բա-
ժակն էլ խմեց հայութիւնը։

Հայ երիտասարդութիւնն անջատւած մեզ-

նից ծրագիրներ էր սրոճում իր ապագայ ա-
նելիքների մասին. նրանք բաժանեցին մեզնից
լի հաւատով ու յոյսով, շարունակ ատամները
կը ճացնելով լցւած վրէժինգրութեան կատա-
ղի թոյնով:

Նրանց նամուսն թոյլ չէր տալիս մարսե-
լու այն ծանր վիրաւորանքները, որ նրանք
ստացան անհաւասար ուժերի գասաւորութեան
ժամանակ գործ զրւած բւնութիւններից:

Զինւած կազմ ու պատրաստ թշնամու դի-
մաց, իրենք անզօր, բայց քաջարի սրտեր:

Սրգեօք այս բոլորով պիտի փուկի հայ
ժողովրդի գարաւոր տարագրութեան պատմու-
թեան տիուր էջը:*)

Գալով վաղիկավկազից գէպի չիւսիսային
կովկաս գաղթած Հայերին՝ նրանց վիճակն էլ
ահա այսպէս է նկարագրւած թերթի աշխատա-
կիցներից մէկը:

«Տարագիր հայութեան այն մասը,— զբում
է նա, — որ գէպի չիւսիսային կովկաս ճամ-
բան էր բանել ներկայումս գտնուում է չափա-
գանց անմիթթար վիճակում և «լինել չլինելու»
յաւիտենական ուրուականը կը կի՞ն կանգնած է
նրանց առաջ: Նրանք աւելի լաւ են համա-

րում Բագու գալ ու կուռում կոտորւել, քան
միալ այնտեղ:

Հանգիստ ու իրաղաղ անկիւն չկայ այս
վերան աշխարհում մեր «լորթ զաւակներին»:

Յայտնի է ընթերցողներին, որ չիւսիսային
կովկասի համարեա բոլոր քաղաքները ներկա-
յումս անհանգիստ օրեր են ապրում: Տեղական
բոլուիկեան կառավարութիւններն ու կողակ-
ներն անընդհատ ընդհարումների մէջ են իրար
հետ, ձեռքից ձեռք խլելով իշխանութեան դէ-
կը: Ծնորհիւ գրան քաղաքները յաճախ դառ-
նում են արիւնահեղ կոփւների ասպարէզ և շա-
բաթներով փոխնէ փոխ մի և նոյնքաղաքներում
իշխում են այս ու այն կառավարական իշխա-
նութիւնները, նայած թէ կուռղներից որը կը
մինի լաջող իր եղաբարասպան պայքարում:

Այս խըրառումների օրերին անշուշտ չափա-
գանցօրէն տուժում է տեղական խաղաղ ազգա-
բնակութիւնը: Ահա ձեզ Հաշտարխանը, Ղզլարը,
Մողանը, Սրմաւիրը, Գրողնին և այլն, ընդ-
հարումների և արիւնահեղ կոփւների անհան-
գիստ վայրեր:—

Տեղական հայ ազգաքնակութիւնը սոսկա-
լիօրէն ծանր վիճակ է տպրում. համարեա բո-
լոր քաղաքներում հայերը չուզենալով մասնա-
կից լինել եղբայրասպան կոփւներին, որոշել

*) «Արև» 1819 թ. № 119

են չէզօք մնալ կօգտիների և բօլշեիկների մէջ եղած իշխանութեան համար մղուղ պայքարից, սակայն տիրող իշխանութիւնները զինակոչի անւան տակ զօռով տսպարէզ են քաշում ու մտսնակից տնում ներքին կոիւներին և այսպիսով հայ ժողովրդի նկատմամբ թշնամանք վաստակում մէկ այս մէկ այն հակառակորդի կողմից: Արանով է բացարւում Հիւսիսային կովկասեան այս ու այն վայրում ներկայումս գոյութիւն ունեցող թշնամական վերաբերունքը գէպի տեղական հայ ազգաբնակութիւնը:*)

Յիշեալ ըրջաններից նոր վերադարձած մեր ընկերներից պ. Կ-ն սոսկալի գոյններով է նկարագրում այնտեղի հայութեան արդի կացութիւնը: Նոյն տեսակի թշնամական վերաբերունքի կամ աւելի ճիշտն ասած պրովակացիոյի գոն հն գնացել վերջերս Արժաւրի հայ ազգաբնա-

*) Յօդւածագիրը, ինչպէս երեսում է, դաշնակցական գործիչներից է, և թիրաս նոյն այն Սիրաք Գրիգորեանն է, որ մարտի սկզբներին Բւգից Հիւսիսային կովկաս մեկնեց կամաւորական խմբեր կազմելու գործն զիւրացնելու նպատակով: Դրա համար պարոնը ուղղիդ հեռոգրաթելով յաւաբերութիւն սկսեց մանել կենինի և Տրոցկու հետ, որոնք նրա բոլոր պահանջներին լիակատար բաւարարութիւն տիրն: Մաստովի բօլշեկներին նրանք հրամայեցին ոչ միայն չ'արգել այլ մինչև իսկ գործնականապէս օգնել հայ կա-

կութիւնից շատ շատերը: Բօլշեկեան կառավարութիւնը յետ խլելով քաղաքը Ալէքսէյկի զօրամասից վրէժխնդիր է լինում տեղական հայ ազգաբնակութիւնից, որին գոն են գնում հազարից աւելի բնակչութիւն:

Քաղաքում կատարւել է սոսկալի թալան, կողոպուտ, տւերածութիւն և այլն:

— «Զինայեցին մինչեւ անգամ, — զրում է Բագրի զաշնակցութեան Ռաերէն օրգան «Եղեր» թերթի աշխատակից նոյն «Ծիրակ»-ը (որ նոյն Սիրաք Գրիգորեանն է) եկեղեցւոյ բակում և գլուզոցում ավաստարան գտած գաղթականներին, նմանապէս կանանց, երեխաներին և ծերերին: Նոյն իսկ դաշտում աշխամաւրներին» (Արև 1918 թ. № 74): Արեմ չէզոքութեան մասին խօսք չի կարող լինել: — Շնորհիւ զանազան Գրիգորեանների Հիւսիսային կովկասում «Հայաստանի փրկութեան կօմիտեաներ» կազմեցին բօլշեկների հովանաւորութեամբ և «գործնական օգնութեամբ»: — Իսկ երբ կողակները եկան, բնական է, որ բօլշեկների հետ հայերին ևս պիտի հալուծէին:

Ճիշտ միենայն պատճառով սկսեցին Մոսկայի և ընդհանուր Ռուսաստանի հայերի հալածանքն ու նրան հիմնարկութիւնների փակումն այն օրից, երբ ակրում բօլշեկներին հետ միացան և ապա նրանցից հեռացան գաշնակցականները և 1818 առօնը (

տանքի գնացած գաղթականներին ևս կոտորեցին, բոլոր տներն ու մագաղինները թալան-ւեցին։ Այս թալանը ոչնչով չէր զանազանուում տաճիկների թալաններից…… Գաղթականների վիճակը այստեղ չափազանց ծանր է։ Քաղաքում և ամէն տեղ նրանց հալածում են ի չնորդը թիւրք-թաթարների գործակալջերի սարքած զգելի պրովակացիայի, ոռուները միամտաբար հաւատում են իրանց ամէն մի լսածին և իրանց անյաջողութիւնը հայերին վերագրելով՝ նրանցից են առնում իրանց վրէժը։

Գաղթական հային չեն թոյլ տալ որ և է գործ անել իրանց օրական հացը չարելու համար. մի և նոյն ժամանակ նրանց հաց չեն վաճառում։ Հասարակաց հորերից չուր վերցնելն անգամ չեն թոյլ տախիս։—

Հայ գաղթականների դէմ եղած հալուծանքը այնպիսի իրէշային չափեր սատացաւ, որ նրանցից շատ շատերը նախապատի։ Են համարում վերագանակ իրանց տեղերը և իրանց տերակների վրայ մեռնել ատճկի դաշոյնից, միայն թէ աղտաւէին իրանց հուշնառուող «ոսներից և նրանց հասցրած վիրաւորանքներից»։*)

*) «Վերեծ» 1918 թ. № 16

Եւ երբ այս «շատ շատերի» մի մասը փորձեց վերադառնալ, — ահա թէ ճանապարհին ինչ տեսաւ։ Ահ ծովեան ափերով անցնելով դէպի Սոչի, Արմավիր, Հանքային ջրեր, Մոզդոք, Հաշտարիսան, ամէնուրեք հանգիստում ես գաղթականութեան, ամէն տեղ գտւարին վեճակ։ Մեր՝ Հարաւային Ռուսաստան և Հիւսիւսային կովկաս գաղթած գաղթականութիւնը այսօր անեծում է այն օրը, երբ նա թողեց իր տուն ու տեղը և բռնեց գաղթի տիուր ճամբան, դէպի հայաշատ վայրեր, կարծելով թէ կըդանի համեմատաբար խաղաղ ու հանգիստ կեանք։*)

ԴԵՊԻ ԲԱԳՈՒ

Ալէքսանդրօպոլից տաճիկները ճանապարհ ընկան դէպի Բագու։—

Փամբակի ձորում նրանք խոշոր լնդհարում ունեցան այնտեղ հաւաքւած Հայ զօրքերի հետ և կոտորւելով և կոտորելով հասան թիֆլու և առանց այնտեղ մանելու։ Նաւթլուդ և արանից երկաթուղիով հասան Գանձակ, ուր նրանց սպասում էր նորակադմ Ազրէջանական ետապարութիւնը դլաւորութեամբ Ֆաթուլի խան

*) «Արև» 1918 թ. № 181.

Խօյսկու, որ Անդրկովկասի յայտնի իրաւաբաններից մէկն է:—

Գանձակից Նազիմ Փաշան ոռւս և թուրք լեզուներով տպւած մի կոչ հրատարակեց, որի օրինակները ուղարկւեցին Գեօքչայի և Շամախւոյ գաւառների ազգաբնակութեան թուրք ու հայ հոգեոր ու աշխարհիկ ներկայացուցիչներին, որոց Նազիմ Փաշան առաջարկում էր ժողովրդին յորդորելու որ միմիանց հետ սիրով ու խաղաղութեամբ վարւին և առանց տեղներիցը շարժւելու՝ աներկիւղ սրտով՝ իրանց սուլուրական գործերովն զբաղւին, որ Օսմաննեան բանակը խաղաղ ազգաբնակութեանը ձեռք տալու նպատակ ու ցանկութիւն չունի:

Դժբաղգաբար, ինչպէս իր տեղում տեսանք, Շամախւոյ և Գեօքչայի գաւառներն զրեթէ ամբողջապէս դատարկւած էին Հայերից: Նրանք հաւաքւել էին Բագու, և ինչպէս ձուկը առակառում, միմիանց վրայ թափւած էին քաղաքի հրապարակներում ու եկեղեցիների բակերում ու գպրոցական մի քանի դատարկ շինութիւններում:

Ճշմարիտ է՝ Բագու մէծամասնական իշխանութիւնը նրանց համար խոշոր դրամական նպատակ յատկացրեց, Հայկաւանում նրանց պատրսպարման համար ձեռնարկեց տախտակեայ

շինութիւն կառուցանել: Բայց այդ ամէնը իրագործելու համար նշանակւած պաշտօննեաները, Ազգային Խորհրդի և Դաշնակցութեան կենդրոնական Կօմիտէախ կողմից նշանակւած անձինք, անկարող էին փախստականների ծով կարիքներին բաւականութիւն տալ:

Ուստի և ճանձի նման նրանցից օրական 30—40 հոգի մեռնուու էին շարսւնակ:—

Փախստականների մի մասը յաջողել էր Բագու բերելու իրանց կթան ու լծկան կենդրոնիները, որոց մեծ մասը կեր չլինելու պատճառու սատկեց. մի մասին տէրերը իրանք մորթեցին կերան, մնացածներն էլ Բագու հայ հպատաճարիչ մսագործների ճանկն ընկան կէս գնով,

ՆԱԶԻՄԻ ԿՈՉԻ ԱՊԱՐԱԴԻՒՆՈՒԹԻՒՆԸ

Մենք հաւատում ենք Նազիմ Փաշայի կոչի անկեկծութեանը, բայց նա ապարդին անցաւ և Գեօքչայի, Նուխւոյ և Արէշի գաւառների Հայութիւնը չարաչար գոհեց ու տուժեց: Ահա թէ ինչի:

Մեծամասնական իշխանութեան կարմիր բանակի ղեկավար Արտամանովի և Ամիրեանի յիշեալ գաւառներում գործած նախճիրներն

վերին աստիճանի զայրացրել և զրգուել էին աեղական սուար մահմէղական տարրը ։ այերի գէմ: Բայց քանի որ կարմիր բանակը էր ուժի մէջ էր՝ մահմէտականները սիրտ չէին անուժ բողոքու, կամ վրէժ լուծելու: Բայց հէնց որ Գարամարգեանից և ամբողջ գծից յետ նահանջեց խուճապով, և միաժամանակ տաճկական բանակը Գանձակ ժամանեց, — յիշեալ գուառներիմահմէտականութիւնը ոտքի կանգնեց և սկսեց իր սրտի ոխը թափել Հայ զիւղացիների զլիսին: —

Դրանցից շատերն զոհակոծւեցին ու սպանեցին, շատերի կնանիքն ու աղջիկերքը բռնաբարւեցին ու գերի տարւեցին բազմաթիւ փոքրահաս մանուկների հետ: Շատ զիւղեր հըսյ ճարակ գարձան, զիւղացիների գրեթէ ամբողջ վարուցանքը զբաւեցին և նրանց անզամ օբական հացի կարօտ թողին:

Այս գաղանութիւնները գործողները աեղական մահմէտական տարրն էր և նրանց այս ու այն ըէկը, այս ու այն կալւածատէրը, որոց արարմունքը եթէ չէին խրախուսում զոնէ անտարբերութեամբ տանում էին տաճկական բանակի այս ու այն սպան և նրան ուղեկցող վայրի զիվիզիայի զինորդներն:

Այսպիսով Բագուի Հայերից առաւել տուժեց նրա նոհանգի ընդհանուր հայութիւնը ևս

ՀԱՅԵՐԻ ԿՈՐՈՒՏԸԸ

Մենք անկարող եղանք ստուգելու նահանջի հայութեան կորստի տեսակն ու քանակը: Բայց ինկատի առնելով մասամբ պաշտօնական, մասամբ էլ անպաշտօն ազրիւրներից հաւաքած լրազրական տեղեկութիւնների վկայութիւններն ենթազրում ենք, որ Բագուն և նրա նախոհանգը հետեւալ մարդկային կորուսան ունեցաւ:

ա. Սեպտեմբերի առաջին Յ օրում Բագում և նրա ծայրերում սպանւեցին, ինչպէս իբ տեղում յիշել ենք, մոտ 17,000 հոգի.

բ. Գաւաներից Բագու փախչող Հայերից 8000 հոգի այստեղ մեսան սովոր և հիւանդութիւններից:

գ. Բագուից էնգէլի, Պետքովսկ և պարսկաստանիախչող Հայերից՝ այն տեղերում մեռան զանազան հիւանդութիւններից 7000 հոգի: Դրանց հաշումն են նաև բուժում մեռածներն, մոտ 150 հոգի, որոց զիւղաներն ծռվել են ձկւել:

դ. Բագու վերագարձողներից այսակ մեռան հիւանդութիւններից 4000 հոգի:

Ե. Իրանց գիւղերն վերադարձողներից՝
այնտեղերում մեռան 3000 հոգի:

Գ. Դարբանդում, Խաչմազում, Ղուբայսում
և Աբովանում և Սալիխանում սպանւածների և
մեռածների թիւն համար է 4300 հոգու:—

Է. Տաճկական բանակի Գանձմակ հտանելուց
յետոյ՝ Գեօքչայի Նուխւոյ և Արէշի գաւառնե-
րի սպանւածների թիւն համար է 900 հոգու:

Այսպիսով ժողովրդից զոհածներից թիւն
համար է 46,000 հոգու:

Իսկ հայ զինւորականութեան տւած զոհերն
են հիւանդութիւններից և թէ առաւելապէս
սպանումից

Ծ. Մարտից մինչև Բագուի անգումը 3000
հոգի:

Թ. Հաջի Կաբուլում և նրա շրջակալքում
մայիս և յունիս ամիսներում 1500 հոգի: Ու-
րեմն 1918 թ. մարտից մինչև 1919 թ. յունի-
սը Բագուի և նրա նահանգի տւած մարդ-
կային զոհերի թիւն համար է 50,500 հոգու:

Այս հաշվի մէջ չեն մտնում մօտ 1000 որք
մանուկներն և հիւսիւսային Կովկաս ու Ռու-
սիայի խորքերն վախտած ըազմաթիւ հայերի
տւած զոհերն, որոց թիւը սառւղելու ոչ մի
հնար չկայ, գոնէ առայժմ:

Վրա 6000 պահանջմանը մաս

Բայց Արմաւիրից, Հաշտարխանից և Վոլ-
գայի ափերից հետզետէ եկողների պատմած-
ներին նայելով՝ նըանցից սպանւածների թիւն
ևս մեծ պէտք է լինի: Իսկ կրած նիւթական
վասներն մեծամասնականների ձեռքից՝ մի-
լիօնների պէտք է որ հասած լինի:—

ՈՎ Է ՄԵՂԱԿՈՐ

Այս ամէն թշւառութիւններին եռվկասի-
չայերս չէինք ենթարկւել, — իսկ եթէ ենթար-
կւէինք էլ՝ ոչ երբէք այս չտփով, — եթէ որ
մեր քաղաքական գործիչներն և նրանց պարագ-
լուխ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը՝
փոքր ի շատէ քաղաքական հասութիւն ունենա-
յին, փոքր ի շատէ քաղաքականօրէն խորհելու
և գործելու ընդունակ լինէին:

Այս աշխատութեան առաջին պրակում
մենք ցոյց տվինք, որ ներկայ համաշխարհային
պատերազմի ընթացքում մեր հանդէպ երեք
անգամ *) լաւ առիթ բացւեց տաճիկների հետ
հաշտւելու, և կամ զոնէ նրանց նոր ի նորոյ
մեր դէմ չգրգռելու: Բայց մենք այդ առիթնե-
րից չօգտւեցինք, անբարտաւանութեամբ չկա-
մեցանք օգտւիլ:

Դեռ այդ հերիք չէ:

Նախ քան Բագուի խայտառակ անկումը՝
Թօփչիբաշովի և Հաջինսկու բարեկամական
խորհուրդը արհամարհեցինք. գերմանական և
տաճկական շաշապների պաշտօնական առաջար-
կը ոչ միայն մերժեցինք, այլ նաև և քննադա-
գութեան ենթարկեցինք, և մինչև Եւրոպական
պետութիւնների Բագուի ներկայացուցիչների
հանդէպ զրաւոր բողոք թարձինք, առանց մի
քոպէ միտք անելու, որ այդ բողոքը այդ ժա-
մին՝ որ և է գործական հետևանք չունենալուց
շատ աւելի ևս պիտի զրդոէ թշնամոյն մեր
դէմ:

Բայց դա Արքանամ Գիւլխանտանեանի ինչ
հսկոն էր: — Նրան հարկաւոր էր իր իրաւա-
քանական հմտութիւնը երեան հանել:

Վերջ ամենայնի Օսմանեան բանակի հրա-
մանամար՝ Մուրսէլ փաշայի վերջին պահանջը՝
նոյն իսկ բանի տեղ չէրինք: —

Ճիշտ է՝ մենք առանց Ցենդրօ-Կասպիին

*) Մի կողմ թողնելով պատերազմի նախօրէկին
թարձր դու ու մեզ արած առաջարկը կամ միանալու
իրանց հետ սնդդէմ թուսիայի, և կամ չէզօք, լոյտ
մնալու: Վերջին առաջարկը, թէ և դաշնակցութիւնը
ընդունեց, բայց դժբեց և հայ կամաւորական խմբեր
կազմակերպեց: Տես իմ «Հայկական հարցի» ութերորդ
պըտակը եր. 583-590):

իրաւունք չունէինք անջատ բանակցութիւն
սկսել թշնամոյ հետ: Բայց Ցենտրօ-Կասպիի
հետ երբ կիցէ խորհրդակցեցինք, թոյլաւութիւն
խնդրեցինք, որ և է միջնորդութիւն նրա առաջ
յարուցինք: Վերջապէս Ցենդրօ-Կասպիին որ և
է պայման առաջարկեցինք:

— Ոչ, քաւ լիցի:

Դաշնակցութեան կենդրօնական կօմիտէն՝
երբ իրան ազատ էր զգում, այնպէս ձևանում
իրեկ թէ ամէն իշխանութիւն ինքն է, — Ազգա-
յին Խորհուրդն էլ, Ցենդրօ-Կասպին էլ իրան
մտիկ տալիս, իր ցուցումովն են շարժում *):
Իսկ երբ նեղն էր ընկնում, մի կողմ էր քաշ-
ուում և չքմեղ ձևանում:

Դաշնակցութիւնը յանձնն իր օրգան «Արև»-ի
իր կոկորդն էր պատում անդադար աղազակե-
լով թէ ինքը Ռուսիայի ուուս աշխատաւորու-
թեան համար է պաշտպանում բագուն, մոռա-
նալով որ Յուլիսի վերջերին, երբ Տաճիկները
փոքր ինչ ուետ մզւեցին Բագուի գաներից, —
պ. Գիւլխանդանեանը ուրիշ երգ ուզեց եր-
գել: ... —

Բայցի այդ՝ Դաշնակցութեան ամենամեծ

*) Մատարերեցէք նրա որոշումը Մուրսէլ փաշայի
ուլտիմատումին՝ Բագուի անկման նախօրէկին (անս
եր. 43):

սիալը հէնց նրա ոռւսամղութեան մէջն է կայանում: Որովհետեւ Թուսիային պաշտպանել,— նշանակում է հայութեանը հարւածել:— Սա այդպիսի պատմական, անժխտելի ճշմարտութիւն է, որ անշուշտ սարերն ու ձորերը անգամ կը վկայեն:

Մետալի միւս կողմը շուռ տանք:—

Կարծում ենք որ ամէնքի համար էլ պարզ պէտք է լինի, որ զերմանիեան Տաճկաստանին իրան օգնական վերցնելով՝ նրան որ և է հատուցումն (Կօմպենսացիա) է խոսացել: Հաւանակաբար այդ հատուցումը լինելու էր Կովկասում կամ Եգիպտոսում, և կամ երկուք միասին:

Բրեսուլիտովսկի դաշնագրից յետոյ՝ որով 1878-ին Տաճկաստանից խւած Կարսի և Բաթումի շրջաններն նրան էին վերադարձնուում, արդէն պարզեց, որ Գերմանիան Հնդկաստանը ոտքի հանելու իր վաղուցւայ ծրագիրը՝ ձեռնարկում է ի կատար ածել տաճիկների ձեռքով և Կովկասի վրայով:

Եւ որպէսզի Տաճկաստանը Կարսի և Բաթումի շրջաններից այն կողմն անցնելու ձեռական օրինական հիմք ունենայ, — Կովկասիան երեք հասարակապետութիւնները հիմնեց, Վրաստան, Հայաստան, եւ Սղբեկան, եւ նլանց է՝ հովկանաւորութեանը տակ վերցրեց:—

Ուրեմն նրան հաշիւ չկար Կովկասումն էլ խառնակչութիւն առաջ բերել: Այլ նրան անհրաժեշտ էր խաղաղ ու հանդիսաւթիւնը ունենալ:

Սակայն այս տարրական բանին ևս չհաւատաց Դաշնակցութիւնը և երկշուռ ժողովրդին էլ հաւատացրեց իրակ թէ տաճիկը Կովկաս գալիս է Հայերին կոտորելու համար: Եւ այսպիսով տեղահան արաւ և ցաք ու ցրիւ տւեց ամբողջ Կովկասահայութիւնը:

Դաշնակցութիւնը չկարողացաւ հասկանալ որ եթէ տաճիկները հայերին կոտորելու համար էին գալիս՝ նրանք կոտորածը Կարսից կըսսէին:

Եւ իրաւոնք էլ ունէին: Ձէ որ Հայերն էին, որ իրանց կնքած պայմանը՝ խախտելով, քաղաքին կրակ տւին և դերի ասքէարներին կոտորեցին:

Սակայն տաճիկները, ի նկատի առնելով իրանց բուն նպատակը՝ Կովկասից այն կողմն առաջ շարժւելն՝ Հայերի արածը չտեսնել ձեռացրին իրանց:—

Գալով Ալէքսանդրօպոլի ոմբակոծմանը դրանում ևս մեղաւորը տաճիկները չեն, այլ Զիւնկէլին որ իր ժամանակին Հայերին իմաց չէի արել գոյութիւն ունեցաղ այն պայմանը,

որով հայերը պէտք է 25 վերստի վրայ ճանապարհ տային տաճիկներին:

Մէջտեղում մի արժանահաւատա հայի վըկայութիւն ևս կայ, որ տաճիկները մէկ ժամ ժամանակ էին տւել Հայերին ճանապարհը բանալու: Իսկ երբ նրանք չբացին,— տաճիկները ուժով բաց արին:

Եւ ճանապարհի այդ ուժով բաց անեն էր, որ պատճառ գարձաւ ժողովրդին քաղաքից դուրը գալու, փախչելու:

Մենք հաւատացած ենք, որ եթէ Ալէքսանդրօպօլի զօրքի հրամանատարութիւնը՝ փռխանակ տաճիկներին հետ կէս օր պատերազմիւու, հետաքրքրէր ոմբակոծման պատճառն իմանալու և պարզելու,— իսկ այդ շատ հեշտ բան էր,— ապա ոչ քաղաքը կը քանդէր, ոչ ժողովուրդը կը գաղթէր, ոչ էլ յետոյ՝ Փամբակի ձորերն հազարաւոր հայերի համար գերեզմանոց կը դառնային*):

*) Այդ գերեզմաններն մինչ օրս էլ կենդանի բռնոք և դատապարտութիւն են Դաշնակցութեան փըծծուն շաղփաղփանքին և շաղփառութեանը թէ «Ալէքսանդրօպօլի և Ալագեազի շրջանում հայ ըմբոստաշխատաւոր գիւղացին փոթորկւել և ջարդ ու փշուր է արել տաճկական թուլամորթ և լքւած բանակը («Արև» 1918 թ. № 109). Ճիշտ տյապիսի ամբարտ-

եթէ Ալէքսանդրօպօլի հրամանատարութիւնը՝ գիմալիկու ոյժ և ընդունակութիւն ունէր, թող նա այդ երկան հանէր Կարսում, այլ ոչ թէ Կովկասեան Բելֆորը ձեռքից բաց թողնելուց յետոյ՝ իր խոնջացած, ցաք ու ցրիւ եղած ուժը Ալէքսանդրօպօլի տափարակի վրայ փորձէր տաճկաց կանոնաւոր բանակի դէմ, որ, կրկնում և երեքինում ենք, — բնաւ նպատակ չունէր Կովկասում յուղմունք տուած բերելու:

Մեր այս խօսքերն հաստատում է՝ նուրի փաշայի Աղբբէջանի հայերին ուղած այն կոչովն, ուր նա ասում է՝ «Օսմանեան կայսերութիւնը բացի այս երեք հաստրակապետութիւններից, որ են՝ Վրաստան, Հայուստան և Աղբբէջան, — (*) ուրիշ իշխանութիւն և կագ-

ւած ստախօսութեամբ՝ Համազասպը զրւագում էր իր բրիգագայի խայտառակ հանանջը թէ Գարամարգենի բարձունքներում մեր վարած կուով փայլուն (!?) էջ բացինք Խորհրդային իշխանութեան յիշափոխական պատմութեան մէջ: («Արև» № 119):

*) Դրանց կազմելու ծրագիրը Կ.-Պոլսումն էր մշտկւած և որոշւած՝ նախ քան օսմանեան գելիգատների Կովկաս գալին և Կովկասեան երեք ազգերի գելիգատների հետ տեսակցելն ու խորհրդակցելը: Եւ այդ ծրագրի գոյութիւնը օսմանեան գելիգատներն

մակերպութիւն չի ճանաչում։ Օսմանեան տէրութեան քաղաքական շահերը թելադրում են միմիայն այս տէրութիւնների գոյութիւնը, որոնց իրաւունքները մենք պիտի յարգենք։» —

Ապա Նուրի փաշան՝ իր խօսքը հայերի վրայ մասնաւորելով տուում է՝ «1905—1906թ. հայերի և թուրքերի մէջ տեղի ունեցած եղբայրասպան կոիւը՝ առաջ բերեց տյժմ տապալւած ռուսական կայսերութիւնը՝ երկդիմի քաղաքականութիւն բանացնելով երկու հարեւան ազգերի մէջ, հաւասարապէս զէնք ու ռազմամթերք մատակարելով հայերին էլ, թուրքերին էլ։ Նոյն դերը այժմ ձեզ հետ խաղում է Անգլիան»։ —

— «Ել բաւական է արիւնհեղութիւնը, — շարունակում է փաշան—հաստատ իմացած կացէք, որ այսուհետեւ ձեր ապստամբութիւններն ու շարժումները կընդունենք իբրև օսմանեան բանակի գէմ ուղղաւած, և կը պատժենք։ Խնայեցէք անմեղ մանուկների կեանքը։ Խորամանկ Անգլիայի ոսկովն ու ինտրիգներու-

պարզ ի պարզոյ յայտնեցին կովկասեան գելեզատներին երբ առաջին անգամ որանց հետ տեսակցեցան Տրավիզում 1917 թուի փետրւար ամսին։ Հետեարար սխալ է այն կարծիքը՝ իբր է առաջինները կովաս եկան Բագրի թաթարների խնդրանօք։

Վը մի հրապուրւիք, — Անգլիայի, որ բոլոր մարդկութիւննը զոհ է բերում իր աշխարհակալական ցանկութիւններին։ —

Շըջաբերականում ուշագրութեան արժանի մի կէտ հա կայ, որի ճշշմարտութիւնը մենք՝ ներկայ համաշխարհային պատերազմից տարիներ առաջ ընդունել և փաստերով ապացուցել ենք մեր «Պատմական քաղուածք»-ներ և «Հայերի աղաւազըրական շարժումներ» վերնագրեր կրող աշխատանքներում։

«Ամենքին յայտնի է, — զրում է Նուրի փաշան, որ մինչև հայերի մէջ քաղաքական խաղեր խտպացող կազմակերպութիւնների երեան գալըն, և մինչև այդ կազմակերպութիւնների միշնցով օսմանեան տէրութեան հետ նրա հակառակորդ տէրութիւնների ինտրիգներ սարքելն, — հայերի և տաճիկների մէջ ոչ մի տարածայնութիւն չկար։ Եւ այս երկու ազգերն՝ միւս բոլոր ազգերից աւելի վստահ միմիանց վրայ՝ շատ մօտ էին միմիանց հետ և շատ սիրով ապրում էին։ Օսմանեան կայսրութիւնը իր հիմնեած օրից ի վեր՝ միշտ և հանապազ յարգել և պահպանել է իր հպատակ ազգերի անտեսական, կրօնական և միւս իրաւունքները։ Միհնոյն քաղաքականութեանը հետեւ է և

ներկայ կառավարութիւնը։ Այս բանի ամենաշատ ապացոյցը այն է, որ աաձկանայերը մինչև այօք կայսերութեան ներքին ու արտաքին հիմնարկութիւններում ամեն ապատանատու պաշտօններ են վարում, և թէ տաճկոնայ ժողովուրբգը անտեսապէս ամենից ապահովն է։ Տաճկանպատակ բոլոր ազգերի մէջ չկայ մի այլ հարուստ և բազգաւոր ազգ՝ քան քաղաքականութեամբ չը վարակւած հայերը»։—

— «Անգլիան և Ռուսիան, — շարունակում է վաշան, — իրանց քաղաքական շահերի համար՝ ձեզ իր սուց ձեռքին կոյր գործիք շինեցին, ձեր մէջ աչքի ընկնող զանազան քաղաքական կազմակերպութիւններ տռաջ բերին։

Այդ կազմակերպութիւնների թելազրութեամբ կ Պօլում, Անսամոլիայում, Սասունում հայերի մօտ պայթուցիկ նիւթեր գտնւեցին, որոնց բանեելուց յետոյ հայերի և թուրքերի, —որոնք հարիւրաւոր տարիներ կողք-կողքի սիրով և խաղաղութեամբ ապրում էին իրարի միևնույն հայրենիքի գաւակներ, —մէջ թշնամութեան հրդէն ընկաւ»։—

— Մենք շատ լաւ հասկանում ենք, որ բելի ընթերցող, որ հայ յեղափոխական Դաշնակցութիւնը, —երէկ ոռւս միապետութեան և

այ օր ոռւս մեծամասնականութեան դուդուկով պարող այդ կուսակցութիւնը՝ ժխտելով կը ժխտէ այս ճշմարտութիւնները, սակայն օր կը գայ, —և այդ օրը շատ հեռու չէ, —որ նրա մըթադնած աչքերն ու խցւած ականջներն ևս կը բացւին և նա կը տեսնի ու կը լսէ թէ ինչ աստիճան մահացու յանցանք գործեց և ինչ ու որքան փորձանքների ենթարկեց նա խեղճ հայ ազգին(*)։

Ասողներ և հաւատացողներ կան, առաւելապէս Դաշնակցութեան ջատագովների մէջ, որ

*) Մի կողմ թողնելով հին փորձանքներն՝ վել ցնենք թէկուզ վերջին, Բագրէ հայութեան զլիկն բերած փորձանքն, Դուրս է գալիս՝ որ «առանց չափազնցութեան կարելի է տակ, որ այն բոլորից, ինչ որ անցեալ տարի արւեց հայ տարրի միջացով յօգուս յեւսփոխական նւաճումների և հայ ժողովրդի շահների (?)!! պաշտպանութեան, —երկու երրորդականը արւել է շնորհիւ Խոստոսի անսպառ հուանդի և աչքի ընկնող տակտի (!): Նոյնքան հիմնաւոր կերպով կարելի է պնդել, որ այն բոլորի մէջ, ինչ որ արւել է անցեալ տարի, բայց չպիտի արւել, Ռուսութեամբ մի մազաշափ մեղք չունէր։ («Յառաջ» 1919 № 12): —Եթէ այդ այգպէս, —կասենք մենք, — ապա ուրիմն մեզ ուրիշ ոչինչ չէ մնում տակ, քան կըրկնել հայ ուռոց առաջը թէ՝ «Ճհռածների համար՝ կամ բարի տակ, կամ ոչինչ»։

եթէ մեր յեղափոխական գործունէութիւնը չը-
լինէր, մենք Հայաստան չէինք ունենալ:—

Այդպիսինէրը մոռանում են, ուզգակի չեն
հասկանում, որ եթէ մենք փոքր կամ մեծ
Հայաստան ստացանք, — դա լինելու է բացա-
ռապէս միծ տէրութիւննէրի շահերի համար,
և ի հարկէ նրանց ձեռքսվ:—

Ես հաւատացած եմ, որ եթէ ներկայ հա-
մաշխարհային պատերազմի նվթացքում, չե-
զօք մնայէնք, մենք դարձեալ Հայաստան կը
ստանայինք, և աւելի լաւ սահմանով ու պայ-
մանով: — Ինչպէս ստացան զբացիք, թաթար-
ները, հրէաները, արաբները հայն:

— Որովհետեւ այն ժամանակ մենք մի ամ-
փոփի, հոծ, առողջ ու կենաւնակ, բարոյտկան
և նկաթական ոյժ եր ներկայացնինք, որ միծ
պետութիւնները անշուշտ ի նկատի և հաշուի
կունէին, այլ ոչ է այժմեան նման լրւած,
կիսաշունչ և կիսակենդան դարձած մի
ցըւած, կիսաշունչ և կիսակենդան դարձած ի-
քանի հարիւր հազոր թշւառ արտրածներ՝ ի-
րանց հոգմարտած քաղաքական գործիչնե-
րով:—

Մեր յեկափոխական գործովութիւններից
ողուզնիք եղան՝ Թուսիան, Ֆրանսիան և Ան-
գլիան, որոնց մենք երեխայական սնապար-
զիք ունենամք մեզ գաշնակից ենք անւանում տ-
ծոթեամբ մեզ գաշնակից ենք անւանում տ-

ուանց ցոյց աալու թէ ինչ բանում նրանք մեզ
նախապատութիւն տւին: — Նախապատութիւ-
նը իրանց մնայ, եթք և ինչ բանում նրանք
կարեկից և արդարագատ եղան դէպի մեզ, իբ-
րև մի ողորձելի ժողովրդի, որ իրանց համար,
և իրանց պատճառաւ՝ քաւութեան նոխազ դար-
ձաւ աշխարհիս մէջ:—

Մեր այդ գաշնակից կարծեցեալ Ռուսիան
էր, որ ասաջին զրգիչն և շարժառիթն է եղել
200 տարուց ի վեր մեր կրած ամեն տեսակ
թշւառութիւններին՝ մինպատակ միայն ունենա-
լով Հայաստանին տէր դառնալու ասանց, սա-
կայն, հայերի:—

Մեր գաշնակից կարծեցեալ ֆրանսիան էր,
որ Տաճկաստանի հետ իր տոհարաքաղաքական
հաշիւները յարդարելու ամենալաւ ասիթ՝ հայ-
կական հարցն էր համարում և կիր արկանում,
որ իր քաղաքական նաւու՞ միշտ ուսուականի ետե-
սիցն էր սահեցնում՝ նրան փոխ տւած մի-
լիարդներն յետ ստանալու յուսով: Վերջապէս
մեր գաշնակից կարծեցեալ Անգլիան էր որ
Ս. Ստիֆանոյի գաշնազրի 16-րդ յօդւածը՝
Յերլինում 61-ի փոխել տալով և Կիպրոս կըդ-
զին էլ երաշխիք վերցնելով՝ հանդիսաւոր իեր-
պավ յայտարարեց աշխարհին, որ ինքը Հայաս-
տանի ոէֆօրմների գործը պէտք է ի գլուխ

համէ և Ծուսիայի յետագայ առաջախաղացու մը Հայաստանում, զէն ի ձեռին, խտփանէ, սակայն երբ Անգլիայի այդ տրարմունքից վիրաւորւած՝ Ծուսիան և Տաճկաստանը խօսքերը մէկ արած՝ 1895 և 1896-ի հայկական կոտորածները կազմակերպեցին, — այն ժամանակ Անգլիան Պիզատոսի գերը խաղաց և ինքնիրան արդարացըք ասելով թէ «իրնաւերը Հայաստանիլեռների վրայ չեն կարող լողալ»: —

Այժմ էլ Հայաստանի ապահովութեան համար հրապարակ է գալիս Ամերիկան, որի «Բորդ» միախօներական ընկերութիւնը, — լուսաւորեալ ազգերի աշխարհակալական ձգումների այդ կարապեաներից առաջինը, — արդէն 50 տարուց ի վեր գործում է Հայաստանում, և բաւականին հոգ ունի պատրաստած Ասիայի սարահարթներում և տափարակներում շուկաներ սաեղծելու Ամերիկայի վիթխարի արդիւնաբերութեանը համար: —

Ուստի եթէ մենք, հայերս չենք ուզում աշխարհիս կենդանի մնացած ազգերի շարքից խպոռ ջնջւել, որ կարող է լինել կամ մեր մահմետական հարևանների սրով ու թրով, և կամ ամերիկական հզօր քաղաքակրթութիւնից կուլ գնալով, նրանց հետ ձուլելով, — անհրաժեշտ է նախ որ մեր հարևանների հետ լաւ

յարաբերութիւն ունենանք և ամեն կերպ աշխատենք նրանց մեզ հետ բարեկամ պահելուն համոզւած լինելով, որ բարեկամութիւնը մարդկային կեանքի գոհարն է: Եւ երկրորդ՝ քաղաքական ուղղմական գործունէութիւնից բոլորովին ձեռք վերցնենք՝ չունենալով դրանց համար ոչ ընդունակութիւն ու շնորհք և ոչ էլ ոյժ ու քաջութիւն:

Այլ այդ ապարգիւն և կործանարար գործունէութեան փոխարէն՝ մենք մեզ նուիրենք քաղաքակրթական խաղաղ ու շինարար գործունէութեան, մտաւոր և բարոյական զարգացման ու կատարելութեան:

Այս ճանապարհով, և միմիայն այս ճանապարհով մենք կարող կը լինենք մեր հարեանների հետ հաշտել ու հաշտ ապրել իսկ եւրոպացիների աջքում նշանակութիւն ու կարեռութիւն ունենալ և նրանց համակրութեանը արժանանալ: —



ՅԱՆԿ

1. Բիշերախով զնդապետը 3.
2. Անգլիացիների գալուստը 5.
3. Անգլիացիների վերջին կոչը 7.
4. Դիմոկրատիայի պաստկառումը 9.
5. Փետուրեայ կափւը 14.
6. «Լարշաւիանկա» և ոմբակոծում 26.
7. Հայինսկու նամակը 30.
8. Պաշտօնական բանակցութիւն 34.
9. Տաճկաց շտարի նամակը 37.
10. Աղքային Խորհրդի պատասխանը 39.
11. Մուրսէլի ուլտիմատումը 42.
12. Իսրայը Թամիշվիլիի նամակը 43.
13. Տաղնապալից օրը 46.
14. Անգլիացիների փախուստը 47.
15. Ծովի ափին 49.
16. Մթութեան մէջ 52.
17. Անգլիացիների փախստեան պատճառը 55.
18. Բագուրի անկումը 59.
19. Սուլէյման բէյը 63.
20. ԶԵՆՔԻ կոյտ 68.
21. Բալտիանու հայերի կոտորածը 69.
22. Բազաքի հայերի կողոպտումն ու սպանումը 72.
23. Սիսակմատիք կողոպտում ու կոտորածներ 76.
24. Հայերի կողոպտումը տաճիկների ձեռքով 82.
25. Նոր ձեի կողոպտում ու հալածանք 86.

26. Բուսաց զօրացրիւի հետեանքը պարսկաս-
տանում 97.
27. Տաճիկների մուտքը պարսկաստան 99.
28. Անգլիանիկը և Անգլիացիք 101.
29. Ալի Էհսան փաշան Թաւրիդում 102.
30. Կովկաս արշաւող տաճիկ բանակը 105.
31. Զիւնկէլու հեռագիրը 108.
32. Ալէքսանդրոպոլում 111.
33. Եիրակեցիների փախուստը 113.
34. Փախստականները Վրաստանում 121.
35. Փախստականները Հիւսիսային
կովկասում 129.
36. Դէպի Բագու 135.
37. Եազիմի կոչի ապարդիւնութիւնը 137.
38. Հայերի կորուստը 139.
39. Ո՞վ է մեղաւոր 141.

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Գրքոյկես տպագրութիւնը վերջացած էր,
երբ ես հազիւ կարողացայ ձեռք բերել 1918
սեպտեմբերին Ազգային Խորհրդի պահեստնե-
րից տաճիկ զինւորների տարած ապրանքների
ցուցակն, որ պէտք է համարել ծանօթաւթիւն
86 երեսի 4-րդ տողին:

5,200 հատ հրացան,

3 պուլեմեոտ ամեն պարագաներով,

1 աւտոմօբիլ,

170 արկղ փափփուշտ,

20 արկղ ռումբ,

4 արկղ սնարեագներ.

50 կապոց զինւորական մահուդ (ամեն
մի կապոցը 4 փ. ծանրութեամբ),

50 կապոց զինւորական հագուստ,

50 կապոց փափախ,

150 մէշօկ ալիւր,

30 մէշօկ լոբի,

70 արկղ թէյ (արկղը 50 գրւանքայ),


75 մէշօկ բըինձ,

10 մէշօկ բակլայ,

10 փութ գարչին,

50 բանկայ ձէթ,

50 մէշօկ այլ և այլ կենսամթերքներ:



ՀԵՂԻՆԱԿԻ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆԵՐԸ

1. Զէնիաթ—զէնիոթ.
2. Գլխագին.
3. Ապօրինի զաւողեւ.
4. Գինեղեւ.
5. Ռաֆֆիլ «Կայծերը»:
6. Կացինը քարին կպաւ.
7. Խուս Բիւրօկրատիան և Հայերը.
8. Պատմական քաղւածներ Ա. պրակ.
9. Պատմական քաղւածներ Բ. —
10. Պատմական քաղւածներ Գ. —
11. Պատմական քաղւածներ Դ. —
12. Պատմական քաղւածներ Ե. —
13. Պատմական քաղւածներ Զ. —
14. Պատմական քաղւածներ Է. —
15. Պատմական քաղւածներ Ը. —
16. Պատմական քաղւածներ Թ. —
17. Պատմական քաղւածներ Ժ. —
18. Հայկական հարցի տառջին շրջանը
19. Հայկական հարցի երկրորդ —
20. Հայկական հարցի երրորդ —
21. Հայկական հարցի չորրորդ —
22. Հայկական հարցի հինգերրորդ —
23. Հայկական հարցի վեցերրորդ —
24. Հայկական հարցի եօթներրորդ —
25. Հայկական հարցի ութերրորդ —
26. Ռաճիկ քահանաներին.
27. Պատմութեան զաւերը
28. Հրազդակախոսուկան մանրունք Ա. պրակ.
29. Պատմական զրայցներ Ա. պրակ.
30. Տաճրիները Կոգի. և Բաղրի անկումը Ա. պրակ.
31. Տոճիկները Կոգի. և Բաղրի անկումը Բ. պրակ.

2390

2013

